

# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

ՀՀ ՊԵՏՊՐԱՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

ISSN 1829-0108

4 (106). 2020



«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՄԻ ՊԱՐՏԿԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ В ОДНОЙ ВОЙНЕ»

“ARMENIA CANNOT LOSE ANY WAR”

**ԱՐԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՄԲ  
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարար  
Արա Այվազյանի և Ռուսաստանի Դաշնության Արտաքին գործերի  
նախարար Սերգեյ Լավրովի հանդիպումը.  
քննարկվել են տարածաշրջանում խաղաղության  
և անվտանգության ապահովման հարցեր:

Մոսկվա, 2020 թ. դեկտեմբերի 7



# Հ Ա Յ Կ Ա Կ Ա Ն Բ Ա Ն Ա Կ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4 (106). 2020

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

- Տավարաձյան Գ. Վ.  
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.  
(գլխավոր խմբագիր)
- Աբրահամյան Կ. Ա.  
Ալբունյան Գ. Ռ.  
Այդինյան Ռ. Ա.  
Այվազյան Լ. Գ.  
Ապերյան Վ. Վ.  
Ասատրյան Զ. Գ.  
(գլխ. խմբագրի տեղակալ)
- Գասպարյան Օ. Վ.
- Խաչատրյան Տ. Վ.
- Դամբարյան Մ. Ա.  
Մակարյան Ա. Ա.  
Մարգարյան Ռ. Պ.  
Մարտիկյան Ա. Մ.  
Մարտիրոսով Լ. Ա.
- Շահնագարյան Թ. Ն.  
Պողոսյան Ա. Ա.  
Սիմոնյան Ս. Վ.  
Սմբատյան Ն. Վ.  
Վարդանյան Ա. Գ.  
Տեր-Գրիգորյանց Ն. Գ.  
Քոչարյան Տ. Տ.  
Օհանյան Ս. Ռ.

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՈԱԶՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

- Վ. Վ. Մելքոնյան, Պատերազմի նպատակները և հաղթանակի հարցը որպես պետության ռազմաքաղաքական ղեկավարության գործունեության առանցքային ուղղություն ..... 7
- Գ. Է. Սիմոնյան, Պատերազմի տեսության հիմունքները և դրանց գործնական կիրառության որոշ հարցեր ..... 19

### ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Թ. Ն. Մանասերյան, Տնտեսական անվտանգության պահովման առաջավոր համաշխարհային փորձը և Հայաստանի շահերը ..... 34
- Ա. Գ. Դավթյան, ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման և մոբիլիզացման կատարելագործման ուղիները արդի պայմաններում ..... 43

### ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

- Ա. Մ. Շահվերդյան, Պատերազմի ժամանակ տեղեկատվական ընդդիմամարտության որոշ առանձնահատկություններ ..... 58

### ՈԱԶՄԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

- Գ. Է. Հարությունյան, Ապագա պատերազմների բնույթը որպես ռազմաարդյունաբերության զարգացման ուղեցույց ..... 68

### ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

- Ժ. Պ. Հարությունյան, «Մեծ տվյալների» կիրառումը որպես պետության ռազմական համակարգի արդիականացման հնարավորություն ..... 80

**ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱ**

*Ա. Ն. Խաչիկյան, ՀՀ-ում ռազմական սոցիոլոգիայի զարգացման հիմքերն ու հեռանկարները* .....91

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

*Հ. Մ. Գևորգյան, Կրտսեր սպաների ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման հարցի շուրջ* ..... 102

**ՌԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

*Ս. Գ. Գալստյան և ուրիշներ, Նոր կորոնավիրուսային վարակի համաճարակաբանության, կլինիկայի, ախտորոշման և բուժման հարցերի վերաբերյալ* . 110

**Որոշ հրթիռահրետանային միջոցների մարտավարատեխնիկական բնութագրեր** ..... 121

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Գ. Ս. Չիլինգարյան և ուրիշներ, Համարի բառարան* ..... 123

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ НАЦИОНАЛЬНОГО  
ИССЛЕДОВАТЕЛЬСКОГО УНИВЕРСИТЕТА ОБОРОНЫ  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 4 (106). 2020

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Таварацян Г. В.* (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Абрамян К. А.*, *Айвазян Л. Г.*, *Айдинян Р. А.*, *Алтунян Г. Р.*, *Аперян В. В.*,  
*Асатрян З. Д.* (зам. гл. редактора), *Варганян А. Г.*, *Гамбарян М. А.*, *Гаспарян О. В.*,  
*Кочарян Т. Т.*, *Макарян А. А.*, *Маргарян Р. П.*, *Мартикян А. М.*,  
*Мартirosов Л. А.*, *Оганян С. Р.*, *Погосян А. А.*, *Симонян С. В.*, *Смбатян Н. В.*,  
*Тер-Григорьянц Н. Г.*, *Хачатрян Т. В.*, *Шахназарян Т. Н.*

## СОДЕРЖАНИЕ

### ВОЕННАЯ НАУКА

- В. В. Мелконян.* Цели войны и вопрос победы как ключевое направление деятельности военно-политического руководства государства ..... 7 (30)\*
- Г. Э. Симонян.* Основы теории войны и некоторые вопросы их практического применения ..... 19 (31)

### ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

- Т. Н. Манасерян.* Ведущий мировой опыт обеспечения экономической безопасности и интересы Армении ..... 34 (54)
- А. Г. Давтян.* Пути мобилизационной подготовки и совершенствования мобилизации экономики РА в современных условиях ..... 43 (55)

### ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

- А. М. Шахвердян.* Некоторые особенности информационного противоборства во время войны ..... 58 (66)

### ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ

- Г. Э. Арутюнян.* Характер будущих войн как ориентир развития военной промышленности ..... 68 (78)

### ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

- Ж. П. Арутюнян.* Применение «больших данных» как возможность модернизации военной системы государства ..... 80 (89)

---

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

### **ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ**

*А. Н. Хачикян.* Основы и перспективы развития военной социологии в РА ..... 91 (99)

### **ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ**

*А. М. Геворгян.* К вопросу об оценке эффективности служебной деятельности младшего офицерского состава ..... 102 (108)

### **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*С. Г. Галстян и др.* К вопросу об эпидемиологии, клинике, диагностике и лечении новой коронавирусной инфекции ..... 110 (119)

**Некоторые тактико-технические характеристики ракетно-артиллерийских средств** ..... 121

### **ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Д. С. Чилингарян и др.* Словарь номера ..... 123 (125)

# «**HAIKAKAN BANAK**» («**ARMENIAN ARMY**»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
NATIONAL DEFENSE RESEARCH UNIVERSITY,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4 (106). 2020

Is published 4 times a year

## **EDITORIAL BOARD**

*Tavaratsyan G. V.* (Chairman), *Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Abrahamyan K. A.*,  
*Altunyan G. R.*, *Aperyan V. V.*, *Asatryan Z. D.* (Deputy Editor-in-Chief), *Ayvazyan L. G.*,  
*Gasparyan O. V.*, *Ghambaryan M. A.*, *Idinyan R. A.*, *Khachatryan T. V.*, *Kocharyan T. T.*,  
*Makaryan A. A.*, *Margaryan R. P.*, *Martikyan A. M.*, *Martirossov L. A.*, *Ohanyan S. R.*,  
*Poghosyan A. A.*, *Shahnazaryan T. N.*, *Simonyan S. V.*, *Smbatyan N. V.*,  
*Ter-Grigoryants N. G.*, *Vardanyan A. G.*

## **CONTENTS**

### **MILITARY SCIENCE**

- V. V. Melkonyan.* Goals of war and the issue of victory as a key direction in the activities of the state military-political leadership . . . . . 7 (32)\*  
*G. E. Simonyan.* The fundamentals of the war theory and some issues of their practical application . . . . . 17 (33)

### **ECONOMIC SECURITY**

- T. N. Manaseryan.* Leading world experience of ensuring economic security and Armenia's interests . . . . . 34 (56)  
*A. G. Davtyan.* The ways of mobilization preparation and improvement of mobilization of the RA economy under modern conditions . . 43 (56)

### **INFORMATION SECURITY**

- A. M. Shahverdyan.* Some peculiarities of information counterfight during war . . . . . 58 (67)

### **MILITARY INDUSTRY**

- G. E. Harutyunyan.* The nature of future wars as a guideline for military industrial development . . . . . 68 (79)

### **MILITARY INFORMATION SCIENCE**

- Zh. P. Harutyunyan.* The application of "Big Data" as an opportunity for modernization of the state's military organization . . . . . 80 (90)

### **MILITARY SOCIOLOGY**

- A. N. Khachikyan.* The bases and perspectives of the development of military sociology in the RA . . . . . 91 (100)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

**MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION**

*H. M. Gevorgyan.* To the issue of evaluating the service efficiency of junior officers . . . . . 102 (109)

**MILITARY MEDICINE**

*S. G. Galstyan and others.* On the epidemiology, clinical picture, diagnosis and treatment of the new coronavirus infection . . . . . 110 (120)

**Some tactical and technical characteristics of rocket and artillery means** . . . . . 121

**MILITARY TERMINOLOGY**

*D. S. Chilingaryan and others.* Volume Dictionary . . . . . 123 (126)



**ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՐՑԸ  
ՈՐՊԵՏ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ  
ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ**

*Վ. Վ. ՄԵԼՔՈՆՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի գիտաուսումնական  
կենտրոնի պետ*

«Պատերազմում ոչինչ այնպես հաստատ չէ,  
ինչպես այն, որ կողմերից մեկը չի հաղթելու:  
Հաղթողին հարցեր չեն տալիս,  
պարտվողը պարտավոր է պատասխանել  
բոլոր հարցերին»<sup>1</sup>:

*գեներալ Իան Համիլտոն*



Պատերազմը, լինելով բարդ սոցիալ-քաղաքական երևույթ, մշտապես համալիր և խորքային ուսումնասիրությունների կարիք ունի: Ամհերքելի է, որ պատերազմը վաղուց դադարել է զուտ ռազմագիտական ուսումնասիրության առարկա լինելուց: Հետազոտական տեսանկյունից պատերազմը հույժ գիտական և բազմաչափ է, գործնականում նա գիտելիքներ է քաղում գիտության գրեթե բոլոր բնագավառներից, այդ թվում՝ փիլիսոփայությունից, պատմագիտությունից, քաղաքագիտությունից, սոցիոլոգիայից, տնտեսագիտությունից, իսկ ռազմական գիտության ոլորտներից՝ ռազմարվեստի, պետության ռազմական և ԶՈՒ-ի շինարարության, ԶՈՒ-ի անձնակազմի ուսուցման ու դաստիարակության, ռազմական պատմության և այլ տեսություններից: Այդ պատճառով հնարավոր չէ մեկ գիտակարգի սահմաններում լիովին ներկայացնել պատերազմի՝ որպես ընթացիկ վտանգների մի ամբողջ ներկայանակ ծնող ծայրահեղ վտանգավոր երևույթի բոլոր կողմերը: Հայտնի է, որ պատերազմը վարում են որոշակի նպատակներով<sup>2</sup>, ուստի չի կարելի պատերազմն ուսումնասիրել դրա նպատակներից կտրված, իսկ պատերազմի նպատակները ուսումնասիրելիս պետք է առանձնակի ուշադրություն դարձնել պետության ռազմաքաղաքական ղեկավարության գործունեության համա-

<sup>1</sup> Ian Hamilton. Gallipoli diary. New York, 1920, in 2 volumes, Vol. 1, P. 1 ([https://www.gutenberg.org/files/19317/19317-h/19317-h.htm#Page\\_343](https://www.gutenberg.org/files/19317/19317-h/19317-h.htm#Page_343)):

<sup>2</sup> Տես «Հատվածներ Կառլ ֆոն Կլաուզկիցի «Պատերազմի մասին» աշխատությունից»: «ԱՏ», 2020, հմ. 3, էջ 15–22, նաև՝ «Հատվածներ Ա. Սվեչինի «Ռազմավարություն» աշխատությունից»: «ԱՏ», 2020, հմ. 4, էջ 33–45:

տեքստում հաղթանակի բովանդակության ձևավորման, դրա ընկալման և գնահատման հարցերի վրա:

Պատերազմը ծագում է նախ խորքային սոցիալ-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատճառներով: Նրա բովանդակության մասն է գինված բռնության միջոցներով ռազմաքաղաքական և ռազմական ռազմավարական նպատակներին հասնելը: Հետևաբար պատերազմի նպատակների որոշման և, ըստ դրանց, հաղթանակի գնահատման խնդիրները պետք է լինեն ցանկացած պետության պաշտպանական-անվտանգային համակարգի առաջնահերթությունները, ինչը պահանջում է համալիր խորքային վերլուծական աշխատանք և պետության պատասխանատու պաշտոնյաների խելամիտ գործունեություն:

«Հաղթանակ»-ը ռազմական գիտության առանցքային հասկացություններից է, որն, ըստ էության, չունի հստակ և միանշանակ սահմանում: Ռազմագիտական գրականության մեջ «հաղթանակ պատերազմում» հասկացությունը բացատրվում է հետևյալ կերպ. «Հակառակորդին պարտության հասցնելը և պատերազմում հակամարտ կողմերից մեկի (պետության, պետությունների դաշինքի, քաղաքական շարժման կամ կազմակերպության) քաղաքական և ռազմական ռազմավարական նպատակներին հասնելը»<sup>3</sup>, կամ «Պատերազմում, ռազմական օպերացիայում, ռազմարշավում կամ ձակատամարտում հակամարտող կողմերից մեկի հաջող արդյունքը հաղթանակ է: Բնութագրվում է հակառակորդի ոչնչացմամբ կամ կապիտուլացմամբ՝ նրա դիմադրության լիակատար ճնշմամբ»<sup>4</sup>: Այս ձևակերպումները ներկայացնում են այդ հասկացության միայն նեղ, ռազմական կողմը:

Եթե փիլիսոփայական տեսանկյունից «հաղթանակ» հասկացությունը բավական վերացական է, ապա ռազմական տեսանկյունից այն (հատկապես՝ օպերատիվ-մարտավարական մակարդակում) ավելի հստակ և չափելի է. հակառակորդին ջախջախել, կոտրել, ոչնչացնել, գերեվարել, գրավել նրա դիրքերը, տիրանալ ռազմական ավարին և այլն: Ըստ այդմ հաղթանակը կարող է լինել ռազմական, քաղաքական կամ բարոյական, կատարյալ կամ մասնակի, իրական կամ պայմանական, ճանաչված կամ չճանաչված, ի վերջո՝ «պյուռոսյան»:

Եթե հիմք ընդունենք հայտնի ռազմական գործիչ և տեսաբան Կառլ ֆոն Կլաուզկիցի ձևակերպումը, թե «պատերազմը քաղաքականության շարունակությունն է, միայն այլ միջոցներով»<sup>5</sup>, ապա պատերազմի նպատակների և հաղթանակի բովանդակությունները հիմնականում կրում են քաղաքական իմաստ, բայց և անմիջականորեն առնչվում են պետության պաշտպա-

<sup>3</sup> Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 998:

<sup>4</sup> Տես «Победа». «Война и мир в терминах и определениях». Военно-технический словарь, В 2-х томах, т. 1. Под. ред. Д. О. Рогозина. М., 2017, с. 107:

<sup>5</sup> Տես «Հատվածներ Կառլ ֆոն Կլաուզկիցի «Պատերազմի մասին» աշխատությունից», էջ 12:

նությանն ու անվտանգությանը, դառնում պետության ռազմաքաղաքական ղեկավարության պրակտիկ գործունեության առանցքային ուղղություններից մեկը: Ընդ որում, Կլաուզկիցը համարում էր, որ ֆիզիկական բռնությունը սոսկ միջոց է, նպատակը հակառակորդին իր կամքի պարտադրումն է<sup>6</sup>:

Պետության ռազմաքաղաքական ղեկավարությունը այն անձանց խումբն է, որոնք պետության ռազմական կառավարման համակարգում զբաղեցնում են առանցքային դիրք, ընդսմին նրա լիազորությունները և ռեսուրսները հնարավորություն են տալիս ազդեցություն գործելու (մասնակցելու) պաշտպանության բնագավառում ռազմավարական որոշումների բովանդակության վրա<sup>7</sup>: Պետության ռազմաքաղաքական ղեկավարության գործունեության ոլորտն ընդգրկում է պետության ամբողջ անվտանգային համակարգը, իսկ այդ գործունեության բովանդակությունը որոշվում է պետության ռազմական ռազմավարությամբ: Ռազմաքաղաքական ռազմավարությունը անվտանգության և պաշտպանության բնագավառում քաղաքական գործողությունների համախումբ է, ռազմաքաղաքական գաղափարների, նպատակների, հայեցակետերի և գործնական միջոցառումների պետական համակարգ, ընդսմին դրանցով են պայմանավորվում քաղաքական պայքարի նպատակները և ընդհանուր ուղղվածությունը, վարման ձևերն ու եղանակները, որոնք համապատասխանաբար արտացոլում են բարձրագույն ազգային շահերի ռազմական կողմերը և պետության անվտանգության ապահովումը:

Պետության ռազմաքաղաքական ղեկավարության կարևոր խնդիրներից է հնարավոր պատերազմի համար պետության նպատակների սահմանումը, ըստ այդմ էլ՝ հաղթանակի բովանդակության մոդելավորումը: Ընդ որում, ինչպես ցույց է տալիս բաց աղբյուրների ուսումնասիրությունը, դրանք ամենևին էլ վերացական չեն, այլ որոշարկված հստակ ձևակերպումներ են, որոնք ենթադրում են բազմաոլորտ (քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային և այլն) աշխատանքների կատարում:

Ժամանակակից մոտեցմամբ այս խնդիրը հաջողությամբ լուծելու համար նախ պետք է գնահատել աշխարհում և տարածաշրջանում տիրող ռազմաքաղաքական իրադրությունը, վերլուծել պետության ու նրա շուրջը ձևավորված ամբողջ անվտանգային միջավայրը, գնահատել, վերլուծել առկա և հավանական մարտահրավերներն ու սպառնալիքները, որոշել պատերազմում պետության ընդհանուր քաղաքական նպատակներն ու դրանց հասնելու ռազմավարությունը և հետո միայն դրանից բխեցնել պետության ռազմական դոկտրինը, որը կներառի ռազմական նպատակների սահմանումը, դրան համապատասխան ՁՈՒ-ի կիրառման հիմնական ուղղությունները, եղանակ-

<sup>6</sup> Տես նույն տեղում, էջ 6:

<sup>7</sup> Տես *П. В. Тарусин*. Военно-политическая элита как субъект оборонной политики. «Государственное управление. Электронный вестник», сентябрь 2010, № 24 (<https://cyberleninka.ru/article/n/voenno-politicheskaya-elita-kak-subekt-oboronnoy-politiki/viewer>):

ները, պահանջվող ռեսուրսները: Որպես կանոն, կայացած պետություններում այդ հարցերը ձևակերպված են լինում ազգային անվտանգության ռազմավարություններում, ռազմական դոկտրինում, այլ հայեցակարգային ռազմավարական փաստաթղթերում, որոնք կարող են ունենալ բաց և գաղտնի բաժիններ ու հավելվածներ: Այս ամենի կարևորությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ, նախ, պաշտպանությանը պետության պատրաստումը ենթադրում է ռազմավարական պլանավորում՝ ռազմավարական փաստաթղթերի մշակմամբ և այլ միջոցառումների իրականացմամբ, ինչը պետք է կատարվի նախապես՝ մինչև հնարավոր պատերազմի ծագումը: Մյուս կողմից՝ հնարավոր պատերազմի ժամանակ կառավարման բոլոր մակարդակներում պետք է հստակ պատկերացում լինի պետության ռազմաքաղաքական ղեկավարության մտահղացման մասին<sup>8</sup>: Ընդ որում, դա պետք է արվի և՛ տեսական, և՛ գործնական փուլերով, երբ որոշակի պարբերականությամբ գործնական աշխատանքների ընթացքն ու միջանկյալ արդյունքները գնահատվում և վերանայվում են (օրինակ՝ պաշտպանական ռազմավարական վերանայման ժամանակ):

Այն պետությունները, որոնք տվյալ կենսականորեն կարևոր գործունեությունը աչքաթող են անում, կամ կատարում են թերի, հնարավոր պատերազմի սանձազերծման դեպքում հայտնվում են ոչ համակարգված քառսային իրավիճակում՝ պատերազմում պարտվելու գրեթե երաշխավորված ելքով: Այդ դեպքում պատերազմի նպատակների հրնթացս մշակումը անգամ ուշացումով կարող է հետագա զարգացումների վրա ունենալ որոշակի դրական ազդեցություն, սակայն՝ ոչ բեկումնային նշանակությամբ, քանի որ ի սկզբանե բովանդակային առումով վերը նշված առաջին գործողությունը (ռազմավարական պլանավորում) չի ձեռնարկվել:

Բարձրագույն ռազմական հրամանատարությունը պետք է իմանա պետության քաղաքական ղեկավարության դիրքորոշումը և օպերացիա մշակելիս այն կիրառի որպես հրամանատարական մտահղացում, իսկ վերջինս, ինչպես հայտնի է, օպերատիվ արվեստում հրամանատարի որոշման ընդունման առանցքային բաղադրիչն է:

Հույժ կարևոր է տեսական մշակման ու հատկապես վերանայման փուլում ներգրավել «ուղեղային կենտրոնները»: Այն պետություններում, որոնցում պետության ղեկավարը այդ հարցերում միանձնյա է ընդունում որոշումները կամ իրեն շրջապատում է զուտ ռազմական կառավարման համակարգում ներգրավված անձանցով, որպես կանոն, այդ խնդիրները չեն լուծվում բավարար արդյունավետությամբ: Այս ամենը ապահովելու համար

<sup>8</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես *Գ. Կ. Տավարածյան*, Հայաստանի Հանրապետության պաշտպանության ռազմավարական պլանավորումը որպես պաշտպանական համակարգի հետևողական զարգացման անհրաժեշտ գործիք: «ՀԲ», 2018, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2018/08/hb-2018-n-1-2.pdf>):

պետք է ոչ այնքան ռազմական ռազմավարական, որքան քաղաքական կամ քաղաքական-ռազմական վերլուծություն:

Ինչպես վերը նշվեց, պատերազմը սերտորեն առնչվում է քաղաքականության և տնտեսության ոլորտներին: Քաղաքականությունը սահմանում է պատերազմի նպատակը և սոցիալական բնույթը, կարևոր դեր է ունենում դրա ինտենսիվության և վարման ձևերի, հիմնական ուժերի խմբավորումների ու գործողությունների ուղղությունների, մարդկային և նյութական ռեսուրսների մոբիլիզացման մակարդակի որոշման հարցերում: Դրանով հանդերձ, պատերազմը հետադարձ ազդեցություն է գործում քաղաքականության վրա՝ դանդաղեցնում կամ արագացնում հասարակական-քաղաքական գործընթացները: Այդ պայմաններում զինված ուժերի կարիքները բավարարելու համար պատերազմը պահանջում է տնտեսության արմատական վերակառուցում, դրա բոլոր հնարավորությունների մոբիլիզացում:

Հաղթանակը պատերազմի նպատակների իրականացման չափն է: Մինչդեռ, երբ տարբերակում ենք պատերազմի նպատակները (քաղաքական, ռազմական, տնտեսական), հասկանալի է դառնում, որ ոչ բոլոր դեպքերում է, երբ ռազմի դաշտում տարած հաղթանակը, այն է՝ ռազմական նպատակների իրագործումը, պայմանավորում է պատերազմի նպատակների մյուս համախմբերի՝ քաղաքական և տնտեսական նպատակների կատարում: Պատմությանը հայտնի են բազմաթիվ այդպիսի դեպքեր: Այսպես. օրինակ՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին տեղի ունեցած բոլոր ռուս-թուրքական պատերազմներում Ռուսաստանը ռազմի դաշտում հաղթել է Թուրքիային, բայց միշտ չէ, որ նույն կերպ իրացվել են նաև քաղաքական նպատակները: Օրինակ՝ 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում Ցարական Ռուսաստանը տարավ փայլուն ռազմական հաղթանակներ, բայց ինչպես Սան-Ստեֆանոյի, այնպես էլ Բեռլինի պայմանագրով Ռուսաստանի պլանավորած քաղաքական նպատակները գրեթե չիրագործվեցին, քանի որ միջազգային ճնշման տակ Ռուսաստանն ստիպված եղավ համաձայնվելու մի շարք էական զիջումների:

Այս իրողության վերաբերյալ ժամանակակից պատերազմներից կարելի է հիշատակել նաև Իրաքի դեմ 2003 թ. ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմարշավը, երբ անգամ մինչև պատերազմի ավարտն արդեն ի հայտ էին եկել բազմաթիվ հայտանիշներ, որ ամերիկա-բրիտանական ռազմական հաղթանակը ամենևին չի հանգեցրել այն քաղաքական արդյունքներին, որոնք պլանավորել էին դաշնակիցները<sup>9</sup>: Ռազմական արդյունքին հասնելը չփոխակերպվեց քաղաքական հաղթանակի:

Ռազմական հաղթանակը, նույնիսկ սահմանափակ մասշտաբներով, ինչպիսին էր 1991 թվականին Իրաքի դեմ ԱՄՆ-ի տարած հաղթանակը, քա-

<sup>9</sup> Այս մասին ավելի հանգամանորեն տես *А. Коккошин. Семь сюрпризов иракской войны. «Независимая газета», 7 апреля 2003 г.* ([https://www.ng.ru/world/2003-04-07/1\\_surprise.html](https://www.ng.ru/world/2003-04-07/1_surprise.html)):

դաքականան առունով մեծապես նպաստեց ԱՄՆ-ի Նախագահ Ջ. Բուշի անձնական վարկանիշի բարձրացմանը ընդհուպ մինչև 91 %-ի, բայց դա չօգնեց ընտրություններում երկրորդ անգամ հաղթելուն, քանի որ պատերազմի հետևանքով ԱՄՆ-ի տնտեսության վիճակը վատթարացել էր<sup>10</sup>: Սա այն դեպքում, երբ ռազմական հաղթանակը այնպիսի տարածաշրջանում, ինչպիսին Մերձավոր Արևելքն է, ռազմաքաղաքական վերահսկողություն էր ապահովում էներգակիրների հսկայական պաշարների, ԱՄՆ-ի և Պարսից ծոցի, Արևմտյան Եվրոպայի միջև համապատասխան ենթակառուցվածքների, Զինաստանի, Ճապոնիայի ու Հնդկաստանի և այլ խոշոր նավթային սպառողների հետ: Ստացվում է, որ ԱՄՆ-ն ունեցավ ռազմական և նույնիսկ քաղաքական հաղթանակ, բայց տնտեսական գործոնն ազդեցություն ունեցավ քաղաքականի վրա\*: Պատերազմում լիարժեք հաղթանակ տանել չհաջողվեց անգամ աշխարհի գերտերություն ԱՄՆ-ին: Այստեղից պարզ է դառնում, որ ռազմական, քաղաքական ու տնտեսական նպատակները պետք է ապահովեն համաչափելի արդյունքներ, ինչը միայն կարող է հիմք լինել դա հաղթանակ համարելու համար: Ընդ որում, կրկին կարևորվում են նպատակների տրամաբանական հաջորդականությունը, փոխկապվածությունը և փոխազդեցությունը:

Այդ նպատակով ԱՄՆ-ի Ցամաքային զորքերի հրամանատար Ու. Քլարկը մեծ տեղ է հատկացնում ՋՈՒ-ի կիրառման ռազմավարական պլանավորմանը: Նրա կարծիքով՝ նման օպերացիաների պլանավորումը պետք է սկսել. «այն ամենի որոշմամբ, ինչը պատերազմից հետո կլինի հաջողություն»<sup>11</sup>:

Պատերազմում պետությունների տարածված սխալն է հիմնական կողմնորոշվածությունը դեպի ռազմական հաղթանակ, որի դեպքում հակառակորդի զինուժի ջախջախումը դառնում է զլխավոր նպատակ: Դա, անշուշտ, կատարյալ հաղթանակի հասնելու համար կարևոր, բայց ոչ բավարար նախապայման է: Հակառակորդի զինուժի ջախջախումը միայն հնարավորություն է տալիս համարելու, որ իրագործվել են հենց օպերացիայի նպատակները, բայց դեռ չի նշանակում, որ իրագործվել են պատերազմի բուն նպատակները:

Մի կարևոր խնդրի մասին ևս. պլանավորած նպատակներից պետք է բխեն ռազմական գործողությունների ձևերը և եղանակները, որոնց ապահովմանն էլ պետք է միտված լինեն մյուս ուղղություններով պետության ձեռ-

<sup>10</sup> Տես, օրինակ, *Lawrence Mishel, Ruy A. Teixeira. The political Arithmetic of the NAFTA Vote. Economy Policy Institute, Briefing Paper, 1998* ([https://files.epi.org/page/-/old/briefingpapers/1993\\_bp\\_political.pdf](https://files.epi.org/page/-/old/briefingpapers/1993_bp_political.pdf)):

\* Կա տեսակետ, ըստ որի ԱՄՆ-ն այս պատերազմում ունեցել է ծածուկ քաղաքական նպատակ, այն է՝ ներդրելով պահանջվածից ավելի ռեսուրսներ՝ ապահովել երաշխավորված հաղթանակ, որպեսզի ձերբազատվեր վիետնամական պարտության բարդույթից:

<sup>11</sup> *У. Кларк. Как победить в современной войне: Ирак, терроризм и американская империя. Пер. с англ. М., 2004, с. 40.*

նարկած գործողությունները: Եթե պետությունը պատերազմում պլանավորում է սահմանափակ նպատակներ, ապա պետք է ընտրի դրանց համապատասխան ուժեր, միջոցներ, ձևեր ու եղանակներ: Այլապես պետությունը, հատկապես մեծ ռեսուրսներով օժտված պետությունը, պետք է պլանավորի սահմանափակ նպատակներ (ինչպես, օրինակ՝ ԱՄՆ-ը Պարսից ծոցի 1990–1991 թվականի պատերազմում), քանի որ այդ նպատակներին ուղղված ռեսուրսները չեն արտացոլի այդ նպատակների իրականացմանը ձեռք բերված հաղթանակով ապահովված արդյունքները: Նման պարագայում ևս չի կարելի ասել, թե պատերազմում ձեռք է բերվել կատարյալ հաղթանակ: Որպես օրինակ կրկին դիտարկելով ԱՄՆ-ը՝ կարող ենք գալ մի եզրահանգման. ԱՄՆ-ը «Սառը պատերազմի» տարիներին հնարավոր պատերազմի էր պատրաստվում մեկ այլ գերտերության՝ ԽՍՀՄ-ի դեմ, ուստի և ՋՈՒ-ի զինանոցում ներառում էր դրան համապատասխան սպառազինություն ու ռազմական տեխնիկա, ներառում էր ՋՈՒ-ի անհրաժեշտ կառուցվածքը, ամբողջ ռազմավարական պլանավորումը կատարում էր ըստ այդ նպատակների: Սակայն երբ 1990–1991 թթ. պատերազմում նա հանդես բերեց զրեթե նույն մոտեցումը, սակայն բոլորովին այլ մասշտաբների ռազմական գործողությունների համար (ակնհայտորեն շատ ավելի սահմանափակ նպատակների պայմաններում), բնականաբար, հաջող ելքն անգամ ի սկզբանե արդարացված չէր<sup>12</sup>:

Պատերազմի նպատակը դրա ցանկալի կամ հաշվարկված վերջնական արդյունքն է, պետության (պետությունների դաշինքի) արտաքին քաղաքականության ընդհանուր խնդիրների համալիրը, խնդիրների, որոնք պետք է որոշվեն պատերազմի ընթացքում: Այժմ ընդունված է պատերազմի նպատակներ համարել ոչ այնքան հակառակորդի ՋՈՒ-ի ոչնչացումը, որքան այնպիսի պայմանների ստեղծումը, երբ նրա կառավարությունը կամ հասարակությունը կհայտնվեն շփոթության վիճակում և կընդունեն իրենց պարտադրվող քաղաքական որոշումները: Պատերազմի նպատակը, ինչպես ցանկացած վերջնանպատակ, մասնավոր, այսինքն՝ միջանկյալ, նպատակների շարքի զուգամիտման կետն է, ընդամին դրանց թվում կարող են լինել այդ կամ այլ հակամարտող պետությունների, ՋՈՒ-ի որոշակի ռազմաքաղաքական խմբավորումների ջախջախումը, այդ պետությունների տարածքի (կամ դրա մի մասի) զավթումը, հակառակորդին դաշնակիցներից զրկումը, նրա բարոյական ճնշումը:

Տարբեր պատմական ժամանակաշրջաններում պատերազմի նպատակների և հաղթանակի բովանդակության, դրա ընկալման հարցերը բավական հանգամանորեն արժարժել են ռազմական գործի հայտնի տեսաբաններ, քաղաքագետներ, պետությունների ղեկավարներ, զորահրամանատար-

<sup>12</sup> Տես *А. А. Кокшын. Политология и социология военной стратегии. М., 2018, сс. 452–480:*

ներ: Կարծում ենք՝ ավելորդ չի լինի համառոտակի ներկայացնել պատերազմի ռազմական և դրա մյուս նպատակների համահարաբերակցական առնչության մասին պատկերացումների, ինչպես նաև պատերազմում հաղթանակի ընկալման զարգացման ընթացքը:

Չինացի զորավար Սուն Ցզին (մ.թ.ա. 6–5-րդ դդ.) իր «Երկ ռազմարվեստի մասին» հայտնի աշխատության մեջ ձևակերպում է պատերազմում պետության հաղթանակի բովանդակությունը՝ դրա համար նշելով հինգ պայման.

- «– հաղթում է նա, ով գիտի, թե երբ կարելի է կռվել, իսկ երբ՝ չի կարելի,
- հաղթում է նա, ով կարողանում է ղեկավարել մեծ և փոքր ուժերը,
- հաղթում է նա, ում մոտ վերևից ներքև գոյություն ունեն միասնական ցանկություններ,
- հաղթում է նա, ով ցուցաբերում է զգուշություն և սպասում հակառակորդի անզգուշությանը,
- հաղթում է նա, ում մոտ զորավարը տաղանադավոր է և նրան թագավորը չի ղեկավարում:

Այս հինգ պայմաններն են դեպի հաղթանակը տանող ուղիները:

Այդ պատճառով ասում են՝ եթե գիտես նրան ու ճանաչում ես քեզ, թեկուզ հարյուր ճակատամարտ վարիր՝ վտանգ չի լինի, եթե գիտես նրան և չես ճանաչում քեզ, մի անգամ կհաղթես և մի անգամ պարտություն կկրես, եթե չգիտես ոչ նրան, ոչ էլ քեզ, (ապա) յուրաքանչյուր ճակատամարտում պարտություն կկրես»<sup>13</sup>:

Հայտնի ֆրանսիացի ռազմական գործիչ և տեսաբան Անրի ժոմինին (1779–1869) պատերազմի նպատակները բխեցնում էր պետության կառավարման արվեստից, որը դրսևորվում էր որպես պատերազմի պատեհաժամությունը և անհրաժեշտությունը որոշելու նկատմամբ պետական գործչի մոտեցում: Նա առաջին հերթին դիտարկում է պատերազմի քաղաքական նպատակները: Դրանց թվում նա առանձնացնում է հիմնավորումները, ինչպիսիք են, օրինակ, որոշակի իրավունքների վերականգնումը կամ դրանցից հրաժարումը, պետության ընդհանուր շահերի պաշտպանությունը և պահպանումը, պետության պաշտպանությունը նրա անկախությանը սպառնալու դեպքում և այլն: Ժոմինին ձևակերպել է պատերազմի նպատակները ըստ դրա տեսակների (հարձակողական պատերազմ՝ իրավունքների վերականգնման համար, քաղաքական առումով պաշտպանական, իսկ ռազմական առումով՝ հարձակողական պատերազմ, նպատակամիտված պատերազմ, դաշնակիցներով և առանց դրանց պատերազմ, ազգային պատերազմ, քաղաքացիական և կրոնական պատերազմ և այլն)<sup>14</sup>:

<sup>13</sup> Սուն Ցզի, Երկ ռազմարվեստի մասին, Ն. Մաքիավելի, Տիրակալը (հատվածներ): Ե., 2020, էջ 16–17:

<sup>14</sup> Տես Գ. Զոմինի. Стратегия и тактика в военном искусстве. М., 2009, сс. 9–34:



Պրուսական զեներալ-լեյտենանտ և ռազմական տեսաբան Կառլ Վիլհելմ ֆոն Վիլիգենը (1790–1879), արժարժեցիկ պատերազմում հաղթանակի հարցը, նշում է, որ ռազմարվեստի խնդիրներից է բացարձակ հաղթանակը այդ բառի լայն իմաստով, ինչը չի նշանակում որևէ այլ բան, քան անմիջական պայքարից բխեցված ռազմական նպատակներին հասնելը<sup>15</sup>: Իհարկե, այս սահմանումը հատուկ շատ բան չի տալիս, թեև հեղինակն ինքը ևս շեշտում է, որ հաղթանակը բավական բարդ և բազմակողմ երևույթ է, կարիք ունի ռազմարվեստի տեսաբանների ավելի խորքային ուսումնասիրության: Ընդհանուր առմամբ, Վիլիգենի մոտեցումը փորձից տեսությանն անցնելու սկզբունքն է, որն էլ հիմք է ծառայում հետագա պատերազմներում հաղթանակի բովանդակությունը նախանշելու և, ըստ այդմ, դրան հասնելու ձևերը, միջոցները որոշելու համար:

Ռազմական գործիչ, ռազմական գործի տեսաբան, ֆելդմարշալ Հելմուտ ֆոն Մոլտկեն (Մոլտկե Ավագ) (1800–1891) որպես պատերազմի ռազմական նպատակ սահմանում էր հակառակորդ պետության հզորության կենտրոնին՝ առաջին հերթին նրա բանակին ու մայրաքաղաքին, հասցվող խորտակիչ հարվածը<sup>16</sup>: Այս նպատակի հեղինակ տեսաբանը Կլաուզկիցն է, իսկ պրակտիկ հետևորդներն էին Մոլտկեն, Ֆրիդրիխ Մեծը, Նապոլեոն Բոնապարտը:

Պրուսիայի ռազմական նախարար ֆոն Վերդի դյու Վեռնուան (1832–1910) նախ հստակեցնում է իր ժամանակ ընդունված «օպերացիայի օբյեկտ» հասկացությունը՝ առաջարկելով այն փոխարինել «օպերացիայի նպատակ» հասկացությամբ: Ըստ այդմ, նա, խոսելով պատերազմում տարբեր տեսակների նպատակների մասին, առանձնացնում է հետևյալները. քաղաքական նպատակ, որին պետք է ուղղված լինեն բոլոր օպերացիաները, վերջնական նպատակ, որը հաստատվում է քաղաքական մտադրության հետ համաձայնեցված: Վերջնական նպատակին հասնելու համար հրամանատարությունը առանձնացնում է այլ նպատակներ՝ սկսած օպերացիայի առաջին նպատակից, ապա միջանկյալ նպատակ, երկրորդային նպատակ: Վերջնական նպատակը պահանջում է տարբերակել լայնամասշտաբ նպատակը սահմանափակ նպատակից: Միևնույն ժամանակ, նա առանձնացնում է ևս մեկ նպատակ՝ այսպես կոչված «Տատանվող նպատակ»:

Ֆոն Վեռնուան համարում էր, որ քաղաքական դրությունից բխող քաղաքական նպատակը ռազմական գործողությունների հիմքն է: Այդպիսով՝ քաղաքական նպատակը պետք է համաձայնեցվի ռազմական հնարավորություններին: Ըստ նրա՝ սա ամենևին չի բացառում այնպիսի ռազմական հակամարտությունների ծագումը, երբ կողմերից մեկն ունի ակնհայտ առավելություն, սակայն համեմատաբար թույլ կողմը զենք է վերցնում ու պայքարում հանուն իր ժողովրդի կենսական շահերի, պատվի ու ազատության:

<sup>15</sup> Տես նույն տեղում, էջ 117:

<sup>16</sup> Տես «Стратегия в трудах военных классиков». М., 2003, сс. 259–260:

Պատմությանը հայտնի են դեպքեր, երբ այդպիսի անհուսալի նախաձեռնությունն ընդդեմ հզորի ավարտվում է առաջինիս հաղթանակով:

Քաղաքական նպատակը պետք է բարձրագույն հրամանատարության համար լինի պարզ, որպեսզի նա, հենվելով դրա վրա, դրան համապատասխանեցնի իր օպերատիվ մտահղացումը: Քաղաքական նպատակը կարող է փոփոխվել՝ կախված ռազմարշավի բարենպաստ ընթացքից, երբ ընդլայնվում են այդ նպատակները, կամ էլ՝ անհաջողությունից, երբ ստիպված են լինում ընդհուպ մինչև վերջ հրաժարվել պլանավորված նպատակներից<sup>17</sup>:

Ֆրանսիացի մարշալ, ռազմական գործի տեսաբան Ֆերդինանդ Ֆոշը (1851–1929), իր «Պատերազմի վարումը» աշխատության մեջ խոսելով պատերազմի նպատակների մասին, շեշտում է, որ ինչ-որ արդյունքի հասնելու համար պետք է ունենալ նպատակ, և դա առօրյա կյանքի տարրական կանոնն է: Մարտավարության մեջ դա ոչ ոք չի էլ քննարկում, քանի որ նպատակը մարտի գլխավոր օբյեկտն է, որին նպատակաուղղված են բոլոր ճիգերը և ուղղված է որոշիչ գրոհը: Այդ դեպքում ի՞նչը պետք է լինի ռազմավարության գործը: Ինչպե՞ս է հնարավոր ռազմավարության մեջ մնալ առանց նպատակի և պլանի այն դեպքում, երբ բոլոր օբյեկտիվ տվյալները հնարավոր է հաստատել դեռ խաղաղ ժամանակ: Հակառակորդի հզորության կենտրոնը, հետևաբար նաև այն կետերը, որոնց վրա հաղթանակի հասնելու համար պետք է ուղղել հարվածները, կարելի է Կլաուզևիցի օրինակով որոշել դեռ խաղաղ ժամանակ: Հետևաբար ռազմավարությունը, որի առաջին նպատակը հակառակորդի գլխավոր ուժերի հայտնաբերումն ու բախումն է, ևս ունի ավելի հեռահար նպատակներ, քան այդ հանդիպումն և մարտն են: Ըստ Ֆոշի՝ քաղաքականությունը (պետության ռազմաքաղաքական ղեկավարությունը) պետք է մեզ ասի, թե ինչի համար է նա վարում պատերազմը և ինչի համար վայր դնում փետուրը ու վերցնում սուրը:

Ռուս գեներալ և ռազմական գործի տեսաբան գեներալ Ալեքսանդր Սվեչինը (1878–1936) որպես պատերազմի նպատակ առանձնացնում էր, նախ, քաղաքական ու տնտեսական նպատակները, որոնց կատարմանն էլ պետք է ուղղված լինեն ռազմական նպատակները: Սվեչինը շատ էր կարևորում պատերազմի տնտեսական նպատակները. «Պատերազմն ունի տնտեսական պատճառներ, ծավալվում է որոշակի տնտեսական հիմքի վրա, հանդես է գալիս բուռն տնտեսական զարգացումների ձևով, որոնք հաճախ վերաճում են տնտեսական հեղափոխության և հանգեցնում որոշակի տնտեսական արդյունքների»<sup>18</sup>: Իսկ, օրինակ, պատերազմի քաղաքական նպատակների համար նա առանձնացնում էր հետևյալ մոտեցումը. «Ցանկացած նպատակ պետք է խստագույնս համապատասխանեցվի դրան հասնելու համար եղած միջոցներին: Քաղաքական նպատակը պետք է համա-

<sup>17</sup> Տես նույն տեղում, էջ 185–187:

<sup>18</sup> Տես «Հատվածներ Ա. Սվեչինի «ռազմավարություն» աշխատությունից», էջ 34:

պատասխանի ռազմական գործողություններ վարելու հնարավորություններին:

Այս պահանջը կատարելու համար քաղաքական գործիչը պետք է ճիշտ պատկերացում ունենա իր և թշնամու ուժերի հարաբերակցության մասին, ինչը պահանջում է վերին աստիճանի հասուն և խոր դատողություն, երկու թշնամի պետությունների պատմության, քաղաքականության և վիճակագրության իմացություն, ինչպես նաև հիմնական ռազմական հարցերում որոշակի իրազեկվածություն: Նպատակի վերջնական ձևակերպումը նա կկատարի միայն ռազմավարների հետ կարծիքների համապատասխան փոխանակումից հետո, քանի որ այն պետք է ոչ թե բարդացնի ռազմավարական որոշումների ընդունումը, այլ օգնի ռազմավարությանը»<sup>19</sup>:

Ընդ որում, պետության ռազմաքաղաքական ղեկավարության համար Սվեչինը կարևոր էր համարում պատերազմի քաղաքական նպատակները սահմանելիս որոշել, թե ընտրում են նրանք, արդյոք, հարձակողական, թե պաշտպանողական ռազմավարություն, և հարձակողական քաղաքական նպատակ համարում էր անգամ հակառակորդ պետության քաղաքական վարչակարգի տապալումը: Ընդ որում, հակառակորդ պետության քաղաքական վարչակարգի, նույնիսկ ամբողջ հասարակարգի տապալմանը միտված պատերազմի քաղաքական նպատակներ սահմանելու պատմությանը հայտնի թերևս առավել լավ օրինակը Պելոպոնեսյան պատերազմն է<sup>20</sup>, երբ ժողովրդավարական Աթենքը պայքարում էր արիստոկրատական Սպարտայի դեմ: Այս պատերազմն առանձնանում էր նաև այն բանով, որ հստակ կերպով սահմանված էին նաև պատերազմի տնտեսական նպատակները: Ընդ որում, երկու հակամարտող կողմերն էլ ունեին նույնաբովանդակ քաղաքական և տնտեսական նպատակներ:

Այս պատերազմը, քննարկվող խնդրի շրջանակներում, պարունակում է մեկ այլ հետաքրքրական կողմ ևս. Պերիկլեսի ռազմաքաղաքական առաջնորդությամբ Աթենքը ի սկզբանե ուներ պատերազմում հստակ սահմանված նպատակներ և դրանից բխեցված ռազմավարություն (ինչը պատերազմի առաջին փուլում նրանց համար ապահովում էր ռազմական հաղթանակներ), սակայն նրա մահից հետո Աթենքի ռազմաքաղաքական նոր ղեկավարությունը ոչ միայն չհետևեց Պերիկլեսի ռազմավարությանը, այլև չկարողացավ ձևավորել նորը՝ ապահովելու վերջնական հաղթանակը: Իսկ ռազմաքաղաքական ղեկավարության նոր ռազմավարություն չորդեգրելու պատճառներից էին առաջին փուլի հաղթանակների «թմրեցնող» ազդեցությունը, սեփական ուժերի գերազնահատելը, հակառակորդին թերազնահատելը, իրատեսության զգացումը կորցրած՝ սիցիլիական արկածախնդրության մեջ մխրձվելը:

<sup>19</sup> Տես նույն տեղում, էջ 35:

<sup>20</sup> Ավելի հանգամանորեն տես *Фукидид. История. Перевод и примечания Г. А. Стратановского* ([http://www.sobor.ru/sites/default/files/fukidid.\\_istoriya.pdf](http://www.sobor.ru/sites/default/files/fukidid._istoriya.pdf)):

Ժամանակակից հեղինակներից Պոպովն ու Խամզատովը ռազմական հաղթանակի կարևոր նախապայման են դիտարկել հետևյալ չորս հիմնական՝ նյութական, բարոյական, տեղեկատվական, իմացական գործոնների առկայությունը, և որպես հինգերորդ գործոն ավելացրել են պատահականության գործոնը<sup>21</sup>: Սա հիմնականում համապատասխանում է ժամանակակից պատերազմներում ամբողջական հաղթանակի հասնելու մեր պատկերացրած տրամագրի կառուցմանը՝ իմացական գործոնի առաջնահերթությամբ:

Պատերազմի նպատակների ամբողջական իրականացմանը պետք է հասնել պետական մեքենայի համապատասխան ճիշտ աշխատանքի կազմակերպմամբ, որի համար որոշիչ է և՛ ՁՈՒ-ի, և՛ ամբողջ պետական համակարգի արդյունավետ կառուցվածքը, դրանց գործառույթների հստակ սահմանումը և սահմանազատումը, ձեռնհաս մասնագետներով համալրվածությունը, աշխատանքների համաձայնեցված պլանավորումը և ժամանակին կատարումը: Սա է ժամանակակից պատերազմում տարած ռազմական հաղթանակները քաղաքական և տնտեսական հաջողությունների վերածելու ճանապարհը:

Ամփոփելով՝ կարող ենք եզրակացնել, որ պատերազմի նպատակները, ըստ ամենայնի, լինում են քաղաքական և ռազմական, ինչպես նաև քաղաքականից բխեցված՝ տնտեսական: Պատերազմում կատարյալ հաղթանակը կարող է համարվել սահմանված այդ նպատակների ամբողջական կամ մեծամասամբ իրականացումը: Միևնույն ժամանակ, այդ խնդիրը պետք է լինի պետության ռազմաքաղաքական ղեկավարության գործունեության առանցքային ուղղություն, հատկապես՝ ներկա ժամանակահատվածում, հնարավոր պատերազմին նախապատրաստվելիս ու ռազմավարական պլանավորումն իրականացնելիս: Պետության ռազմական շինարարության և ՁՈՒ-ի շինարարության հիմքում կարելի է դնել աշխարհի առաջատար պետություններում արդյունավետորեն կիրառվող «նպատակ–ռեսուրսներ–ծրագրեր» բանաձևը:

<sup>21</sup> *Stu H. M. Попов, М. М. Хамзатова. Война будущего: концептуальные основы и практические выводы. Очерки стратегической мысли. М., 2018, сс. 448–472:*

## ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

*Գ. Է. ՍԻՄՈՆՅԱՆ, պահեստագործի լեյտենանտ, քաղաքական  
գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի ռազմական  
ռազմավարական հետազոտությունների կենտրոնի  
գիտնական-վերլուծաբան*

Մարդկության պատմությունը վկայում է, որ ինքնիշխան ազգերն իրենց քաղաքական ու ոչ քաղաքական համակարգերի միջոցով սահմանում են «ազգային շահերը», որոնց պաշտպանությունը դառնում է պետության քաղաքականության առանցքային ուղեգիծը: Որպես կանոն, *ազգային շահերն* արձագանքում են *գոյաբանական պրոբլեմներին* և սահմանում են ինչպես ազգային անվտանգության ու պետության ներուժի պաշտպանության, այնպես էլ անընդհատ արդիականանալով՝ ազգի մրցունակության, լրացուցիչ գոյամիջոցների ու պետական ներուժի բազմապատկմանը միտված նոր խնդիրներ: Այս առանձնահատկությունը մշտապես ձևավորում է նոր սոցիալական տարածությունների նվաճման և ազդեցության գոտիների ընդլայնման *ռազմավարական կարիք*, ինչը չի կարող չհակասել այդ նույն տիրույթներին հավակնող այլ սուբյեկտների ռազմաքաղաքական շահերին և հետաքրքրություններին: Սա է պատճառը, որ *ազգերը փնտրում են տարածաշրջանային և համընդհանուր խաղաղությունն ու կայունությունն ապահովող ամուր անվտանգային համակարգերի կառուցման ուղիներ և, միևնույն ժամանակ, նախապատրաստվում են պատերազմների՝ մեծացնելով իրենց պետական ներուժը*:



Սույն դրույթի իրարամերժ պնդումները բխում են ինքնության կառուցողական և ապակառուցողական երկվությունից: Այս աքսիոմատիկ ճշմարտությունը հիմնվում է «մտածող մարդու» առանձնահատկությունների և հոգեկերտվածքի վրա: Դեռ Հին Չինաստանի ռազմաքաղաքական միտքը՝ հանձին Սուն Ցզիի (մ. թ. ա. 545 – մ. թ. ա. 470), այսպես է բնութագրում մարդու երկփեղկվածությունից բխող «պատերազմը»: «Պատերազմը պետության համար մեծ գործ է, կյանքի ու մահվան հարց է, գոյության կամ կործանման ուղի»<sup>1</sup>:

Շոտլանդացի տնտեսագետ, բարոյագետ-փիլիսոփա Ադամ Սմիթի (1723–1790) մշակած տնտեսագիտական տեսության երևան գալուն<sup>2</sup> ու

<sup>1</sup> Սուն Ցզի, Երկ ռազմարվեստի մասին, Ն. Մաքիավելի, Տիրակալը (հատվածներ): Ե., 2020, էջ 11:

<sup>2</sup> Տես Adam Smith. An Inquiry into the Nature and Causes of the Wealth of Nations. New York, 2007:

տնտեսագիտության դասական դպրոցի հիմնադրմանը, այնուհետև անգլիացի տնտեսագետ Դավիդ Ռիկարդոյի (1772–1823) դասական քաղաքատնտեսական տեսության<sup>3</sup> զարգացմանը զուգահեռաբար արդիականացան պատերազմի տեսության հիմունքները, ինչի հետևանքով պատերազմի տեսությունը համարվեց նաև պատերազմի «ազգագրական տեսությամբ»: Այս տեսությունը պայմանականորեն բաղկացած է երկու հիմնական ուղղություններից՝ *մայթուսականության* և *երիտասարդության գերակշռման* ուսմունքներից: Մայթուսականության հիմնադիրն է անգլիացի հոգևորական, գիտնական և ազգագրագետ Թոմաս Ռոբերտ Մայթուսը (1766–1834), որն իր «Էսսե ազգաբնակչության տեսության մասին»<sup>4</sup> գրքում գրում է, որ մարդկանց թվաքանակն ավելանում է երկրաչափական պրոգրեսիայով, իսկ գոյամիջոցները՝ թվաբանական, ուստի կստեղծվի մի իրավիճակ, երբ ռեսուրսների պակասը մարդկությանը կկանգնեցնի գոյաբանական սպառնալիքների առջև: Տվյալ խոհափիլիսոփայական հայացքների ճնշման տակ Մայթուսն առաջ է քաշել մի տեսակետ, համաձայն որի մարդկության թվաքանակը պետք է պարբերաբար կրճատվի պատերազմների, համաձարակների կամ սովի միջոցով: Ինչ վերաբերում է «երիտասարդության գերակշռման» ուղղությանը, այն զարգացվել է, մասնավորապես, ֆրանսիացի ազգագրագետ ու մշակութային քննադատ Գաստոն Բուտուլի (1896–1980) «Հետաձգված մանկասպանություն»<sup>5</sup>, ամերիկացի սոցիոլոգ ու քաղաքագետ Ջեյ Գոլդստոունի «Հեղափոխությունը և ապստամբությունը վաղ արդի աշխարհում»<sup>6</sup>, գերմանացի Գունար Հայնսոնի «Որդիները և համաշխարհային գերիշխանությունը»<sup>7</sup> գրքերում և Գրեհեմ Ֆուլլերի հոդվածներում<sup>8</sup>: Այս տեսության համաձայն՝ պատերազմը ծագում է այն դեպքում, երբ տվյալ պետությունում արական սեռի բնակչության 30 – 40 %-ը կազմում են «պայթյունավտանգ» տարիքի՝ 15–29 տարեկան, քաղաքացիները: Սովորաբար դրան նախորդում է ծնելիության աննախադեպ աճումը, երբ ինչ-որ սերնդի կանանց մի զգալի մասը իր կյանքի ընթացքում լույս աշխարհ է բերում 4 – 8

<sup>3</sup> Տես *David Ricardo*. On the principles of political economy and taxation. Kitchener, 2001:

<sup>4</sup> Տես *Thomas Malthus*. An Essay on the Principle of Population. London, 1798:

<sup>5</sup> Տես *Gaston Bouthoul*. L'infanticide difféié. Paris, 1970:

<sup>6</sup> Տես *Jack A. Goldstone*. Revolution and Rebellion in the Early Modern World. Berkeley, 1991:

<sup>7</sup> Տես *Gunnar Heinsohn*. Sons and Imperial Power: Terror and the Rise and Fall of Nations. Zurich, 2003:

<sup>8</sup> Տես *Graham E. Fuller*. The Youth Crisis in Middle Eastern Society. Michigan, 2004 (<https://www.ispu.org/wp-content/uploads/2017/07/the-youth-crisis-in-middle-eastern-society-graham-fuller.pdf>); *Առյուծի*՝ The Demographic Backdrop to Ethnic Conflict: A Geographic Overview. “The Challenge of Ethnic Conflict to National and International Order in the 1990s: Geographic Perspectives”. Washington, 1995, PP. 151–154 (<https://www.cia.gov/library/readingroom/docs/1995-10-01A.pdf>):

երեխա: Քանի որ բարձր կենսամակարդակ ունեցող հասարակություններում կյանքի որակի, ընտանիքի, կենցաղի մասին պատկերացումները սովորաբար այնպիսին են, որ կանայք նախընտրում են լույս աշխարհ բերել 3 երեխայից պակաս, ապա այդպիսի հասարակությունները միշտ վտանգված կլինեն հարևանությամբ զարգացող այն պետություններից, որոնց հասարակությունները բաղկացած են բազմազավակ ընտանիքներից: Այդ մասին ֆրանսիացի քաղաքագետ, Փարիզի միջազգային հետազոտությունների կենտրոնի ավագ գիտաշխատող պրոֆեսոր Ժակ Սեմելինը գրում է. «Մենք գիտենք, որ ցածր մակարդակի զարգացումը խթանում է բարձր մակարդակի ժողովրդագրական աճ, որը փոքրաթիվ ազգաբնակչություն ունեցող հարևանները կարող են ընկալել որպես սպառնալիք»<sup>9</sup>:

19-րդ և 20-րդ դարերում հոգեվերլուծության բնագավառում Ջիզմունդ Ֆրոյդի<sup>10</sup> (1856–1939), Կառլ Գուստավ Յունգի<sup>11</sup> (1875–1961), Էրիխ Ֆրոմմի<sup>12</sup> (1900–1980), Կոնրադ Լորենցի<sup>13</sup> (1903–1989) և ուրիշների կատարած հայտնագործությունները լույս սփռեցին մարդու ներաշխարհից բխող ագրեսիայի երևույթի վրա: Հիմնվելով այդ գիտնականների հետազոտությունների վրա՝ անգլիացի հոգեվերլուծաբան Ջոն Բոուլբին (1900–1990) և տնտեսագետ Էվան Ֆ. Մ. Դուրբինը (1906–1948) իրենց համատեղ «Անհատական ագրեսիվությունը և պատերազմը»<sup>14</sup> գրքում մեկնաբանեցին պատերազմի «վարքաբանական տեսությունը»: մարդը, պայմանավորված իր «Ես»-ի վարքաբանական երկվության դրսևորմամբ, ակտերէզոյից (*“Alter Ego”*) բխող ագրեսիան պրոյեկտում է նախապաշարմունքների վրա այլ ռասաների, կրոնների, ազգերի կամ գաղափարախոսությունների հանդեպ ատելության դրսևորման տեսքով: Այլ կերպ ասած՝ «Ես»-ից բխող «ապակառուցողական էներգիան» պատերազմի է փոխակերպվում (*“Sublimation”*): Ըստ այդմ, նրանք հանգեցին այն եզրակացության, որ եթե պատերազմը մարդու բնությունից բխող երևույթ է, ապա անհնար է այն լիարժեք կերպով պարպել: Պատերազմի բնական, մարդածին ծագումը դրան օժտում է սոցիալ-քաղաքական բնույթով: Դա է վկայում պատմական իրադարձությունների հարացույցը, համա-

<sup>9</sup> Jacques Semelin. Purify and Destroy: The Political Uses of Massacre and Genocide. Translated from the French by Cynthia Schoch. New York, 2007, P. 11:

<sup>10</sup> Stu Sigmund Freud. Group Psychology and the Analysis of the Ego. Authorized translation by James Strachey. London, 1949:

<sup>11</sup> Stu Carl Gustav Jung. The Archetypes and The Collective Unconscious. Translated by R. F. C. Hull. Princeton, 1980:

<sup>12</sup> Stu Erich Fromm. The anatomy of human destructiveness. New York, 1973:

<sup>13</sup> Stu Konrad Lorenz. Civilized Man's Eight Deadly Sins. First Edition. New York, 1974; *Նույնի՝ On Aggression*. Translated by Marjorie Kerr Wilson with a foreword by Julian Huxley. London, 2002:

<sup>14</sup> Stu E. F. M. Durbin, John Bowlby. Personal Aggressiveness and War. London, 1939:

ձայն որի՝ քաղաքակրթությունն ընթանում է պատերազմից դեպի խաղաղություն, խաղաղությունից դեպի պատերազմ զսպանակածն հարացույցով՝ ամեն պտույտի ընթացքում կրելով որակական և քանակական փոխակերպումներ: Անգլիացի փիլիսոփա, «Հանրային դաշինքի» տեսության հիմնադիրներից Թոմաս Հոբսը (1588–1679), իր «Քաղաքացու մասին»<sup>15</sup> գրքում հիմնավորելով «մարդը մարդուն գայլ է» (*“Homo homini lupus est”*) լատինական ասույթը, հանգում է այն եզրակացության, որ մարդիկ միմյանց հանդեպ բնական թշնամիներ են, և եթե չլինել կենտրոնաձիգ ուժեղ պետությունը, ապա հասարակության մեջ կսկսվեր «բոլորի պատերազմը բոլորի դեմ» (*“Bellum omnium contra omnes”*)<sup>16</sup>:

Ի հակադրություն Հոբսի՝ նույն տեսության մեկ այլ հիմնադիր Ժան-ժակ Ռուսոն (1712–1778) հիմնավորում էր հակառակը: Համաձայն Ռուսոյի՝ բնության մեջ մարդը մարդուն թշնամի չէ, այլ մարդկանց միջև ագրեսիայի և թշնամանքի ի հայտ գալը պայմանավորված է մասնավոր սեփականության ծագմամբ: Այսպիսով՝ նյութական բարիքի պատկանելության հիմնախնդիրը հրահրեց մի իրավիճակ, երբ մարդը՝ որպես հանրային էակ, հանուն հանրային համերաշխության ինքնակամորեն հրաժարվեց իր իրավունքների մի մասից և հաստատեց «հանրային դաշինք»՝ կառուցելով պետություն: Տնտեսական բարիքի հիմքով թշնամանքի և ագրեսիայի հայեցակարգն ամբողջանում է ֆրանսիացի երկիծաբան և տնտեսագետ Անտուան դը Մոնկրետյենի խոհափիլիսոփայության վրա հիմնված «Բնիշխանական» (*“physiocrate”*) դպրոցի ներկայացուցիչներ Ռիլյան Պետիի (1623–1687), Ֆրանսուա Քենեի (1694–1774), Ան Ռոբեր Ժակ Տյուրգոյի (1727–1781), Պիեռ Լեպեգան դը Բուազիլբերի (1646–1714) և ուրիշների հետազոտություններով, ինչպես նաև Ֆրիդրիխ Էնգելսի (1820–1895) «Ընտանիքի, մասնավոր սեփականության և պետության ծագումը»<sup>17</sup> գրքում բերված թեզերով: Այս և այլ գիտական հետազոտություններ հիմք դարձան պատերազմի **«տնտեսական տեսության»** կայացման համար:

20-րդ դարի 90-ականներին համաշխարհային քաղաքագիտական միտքը լայն քննարկման առարկա դարձրեց Սեմյուել Հանտինգտոնի (1927–2008) «Քաղաքակրթությունների բախում»<sup>18</sup> գիրքը, որով հիմք դրվեց պատերազմի **«քաղաքակրթական տեսությանը»**: Աշխարհը բաժանելով 9 քաղաքակրթությունների՝ արևմտյան, ուղղափառ, իսլամական, կամ մահմեդական, հնդկական, բուդդայական, կոնֆուցիական, կամ չինական, ճապոնական,

<sup>15</sup> Տես *Thomas Hobbes. On the Citizen. Oxford, 1987*:

<sup>16</sup> Տես նույն տեղում, էջ 179:

<sup>17</sup> Տես *Friedrich Engels. Der Ursprung der Familie, des Privateigentums und des Staats. Hottingen-Zürich, 1884*:

<sup>18</sup> Տես *Samuel P. Huntington. The Clash of Civilizations and the Remaking of World Order. New York, 2011*:



աֆրիկյան, լատինաամերիկյան՝ Հանտինգտոնը հիմնավորում է, որ աշխարհում տիրող սոցիալական անհավասարությունը և շփման կետում մշակույթների միջև անհանդուրժողականության աճման տեմպերը առաջ կբերեն քաղաքակրթությունների բախում, որը հղի է անկանխատեսելի հետևանքներով. «Քաղաքակրթությունների միջև համաշխարհային պատերազմից խուսափելը հնարավոր կլինի այն դեպքում, երբ համաշխարհային առաջնորդներն ընդունեն համաշխարհային քաղաքականության բազմաքաղաքակրթական իրողությունը և համագործակցեն այդ իրավիճակի հարատևման համար»<sup>19</sup>: Հակամարտածին իրավիճակը բացատրվում է այն բանով, որ աշխարհի մեծ մասում տեղի է ունեցել կրոնական վերածնունդ, որը քաղաքակրթություններին ավելի է հեռացնում միմյանցից, իսկ հարաբերական վերելքը և ներդաշնակության մթնոլորտը գիտնականն անվանում է պատրանք, որը բնական է մեծ համաշխարհային ցնցումներից հետո. «Գիտնականներն աշխարհը վերլուծում են երկվության տրամաբանությամբ՝ Արևմուտք–Արևելք, Հյուսիս–Հարավ, կենտրոն–ծայրամաս: Մահմեդականները ավանդաբար ունեն աշխարհի երկու բաժանում՝ **«դառ ալ-իսլամ»** և **«դառ ալ-հառք»** (խաղաղության ուստան և պատերազմի ուստան): Այս տարբերակումն արտացոլված և որոշ իմաստով կերպափոխված էր սառը պատերազմից հետո ամերիկացի գիտնականների առաջադրած մոտեցման մեջ, համաձայն որի՝ նրանք աշխարհը բաժանել էին «խաղաղ տարածքների» և «անկայուն տարածքների», որոնցից առաջինում ընդգրկված էին Արևմուտքն ու Ճապոնիան, իսկ երկրորդում՝ մնացյալը»<sup>20</sup>: Ի հակադրություն հանտինգտոնյան «քաղաքակրթությունների բախման» հայեցակարգից, Իրանի Իսլամական Հանրապետությունում 1995–2005 թթ. Նախագահ Մուհամադ Խաթամին համաշխարհային քաղաքականության մեջ ներմուծեց **«քաղաքակրթությունների երկխոսության»** հայեցակարգը՝ տվյալ այլընտրանքային մոտեցմամբ հարստացնելով պատերազմի քաղաքակրթական տեսությունը<sup>21</sup>:

1-ին գծապատկերում ներկայացված է տարբեր դարաշրջաններում ազգային ինքնագիտակցությամբ առանձնացած և պետականություն կերտած երկու ինքնիշխան հանրույթների (ազգ կամ ժողովուրդ) զարգացման դրությունից պատերազմի, պատերազմից խաղաղության: Ընդ որում, յուրաքանչյուր վերելք ձգտում է անվերջության (պայմանական *N*), սակայն այդ ձգտումը, կախված ներքին և արտաքին ազդակներից, կարող է ընդհատվել: Այլ կերպ ասած՝ պայմանական *N*-ը զարգացմանը նախորդող երկատման կետն է (ներկայիս ակնթարթ), որը ենթադրում է կամ **ձեղքում-վերելք**, կամ


<sup>19</sup> *С. Хантингтон. Столкновение цивилизаций. Пер. с англ. Т. Велимеева. М., 2007, с. 14:*

<sup>20</sup> Նույն տեղում, էջ 30:

<sup>21</sup> Տես «Диалог цивилизаций и исламский фактор», 09.12.2006 (<http://farsiiran.narod.ru/analitics/irmassmedia/dialogueislam.htm>); «О визите бывшего президента ИРИ Мохаммада Хатами в США», 05.09.2006 (<http://www.iimes.ru/?p=4900>):

**Վիլուզում-անկում:** Գծապատկերում ներկայացված է նաև մշակութային և գիտատեխնիկական առաջընթացը պայմանավորող հարթությունը (պայմանականորեն նշագրված մ. թ. 1 թիվ), ինչպես նաև քաղաքական հանրույթի զարգացման ուղեծիրը:

Գծապատկեր 1



Գաղտնիք չէ, որ միևնույն ժամանակահատվածում զուգահեռաբար գոյություն ունեցող հանրույթները կարող են գտնվել մտավոր և տարածական տարբեր հարթություններում, քաղաքակրթական զարգացման այլընտրանքային ձևաչափում, ընդ որում, այս կամ այն քաղաքակրթության զարգացման մակարդակի բարձր կամ ցածր գնահատման չափանիշները գիտական բանավեճի առարկա են: Այս երևույթն իր «Երրորդ ալիք» գրքում դիտարկել է ամերիկացի ապագայագետ Էլվին Թոֆլերը: Նրա կարծիքով՝ մարդկությունը, սպառելով կեցության հին աշխարհընկալումը, անցում է կատարում իր իսկ արդիականացմամբ պայմանավորված նոր հասարակարգի, որտեղ բոլոր ավանդական սկզբունքները ենթարկվում են վերաարժեքավորման. «17-րդ դ. փոփոխությունների առաջին ալիքը («ագրարային հասարակարգ») դեռ չէր


սպառել իրեն, երբ Եվրոպայում հանկարծ ի հայտ եկավ արդյունաբերական հեղաշրջումը, և սկսվեց համաշխարհային փոփոխությունների երկրորդ մեծ ալիքը: Այդ նոր գործընթացը՝ ինդուստրացումը, սկսեց տարածվել շատ ավելի արագ՝ ընդգրկելով երկրներ և մայր ցամաքներ»<sup>22</sup>: «Ալիքների» տեսության համաձայն՝ մարդկությունը 21-րդ դարում կանգնած է «Երրորդ»՝ արդեն սովորական ներկան կերպափոխող ալիքի շեմին (տես 2-րդ գծապատկերը):

Ինքնորոշված տարածության յուրաքանչյուր զարգացում ընթանում է պատմականորեն ձևավորված որոշակի ուղեծրով: «Ժամանակաչափական» («քրոնոմետրիկ», կամ իրական) և «քաիրոմետրիկ», կամ երևակայական ժամանակի ազդեցությամբ պայմանավորված՝ զարգացման ընթացքը տեղի է ունենում հորիզոնական և ուղղաձիգ հարթություններում: Այլ կերպ ասած՝ գոյություն ունեն զուգահեռ իրականություններ, որոնք, լինելով մշակութային, տեխնոլոգիական և մտածողական զարգացման ցածր կամ բարձր աստիճանի, կարող են զուգահեռաբար հանդես գալ նույն ֆիզիկական ժամանակներում՝ օրինակ Արևմտյան Եվրոպայի զարգացած երկրների քաղաքացիական ու համակարգային կացությունը նույն ժամանակաշրջանում Պապուա Նոր Գվինեայում կամ ամազոնյան անտառներում բնակվող ցեղերի հանրային և համակարգային կացության համեմատությամբ:

Թռիչքաձև զարգացման համար քաղաքակրթությունը, հասնելով իր զարգացման **կետին**, գծային զարգացման փոխարեն կատարում է թռիչքաձև անցում դեպի ավելի բարձր մակարդակում գտնվող ուղեծիր, այլապես պատմական իրողությունների հարացույցը ապագայում շարունակաբար պրոյեկտելու է անցյալի ոչ բարենպաստ իրողությունները (տես գծապատկեր 1-ի զսպանակաձև պատկերը): Հարահոս թռիչքի պարագայում ազգը, փոխելով զարգացման ուղեծիրը և արդիականացնելով իր իսկ ջանքերով կազմակերպվող համակարգերը, ժամանակի հրամայականներին ենթարկվող միջազգային իրավունքի լիիրավ սուբյեկտից վերածվում է ժամանակակից քաղաքակրթության: Այս մասին տնտեսական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՌԳԱ (ԽՍՀՄ ԳԱ) ակադեմիկոս Լեոնիդ Աբալկինը (1930–2011), «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթին տված հարցազրույցում ասել է. «Մեզանում կա ինչ-որ համատարած թերընկալում, այն հարցում, թե ինչքան կտրուկ է տարբերվում 30-ականների արդյունաբերական իրավիճակը 80-ականների ավարտի տեխնիկական իրավիճակից: Հորիզոնական հարթության վրա, առանց բարձր մակարդակի բանականության դրսևորման, առանց հանձարեղ վարպետության և միայն ոգու, տոկունության ու ֆիզիկական ուժի շնորհիվ կարելի է «պողպատը կարկատելով» հասնել և անցնել: Սակայն խզումը հորիզոնական չէ, այն ուղղաձիգ է, և ֆիզիկական արագացմամբ այդ անդունդը չես անցնի»<sup>23</sup>:

<sup>22</sup> Э. Тоффлер. Третья волна. Пер. с англ. М., 2004 с. 39:

<sup>23</sup> Ств «Сколько потребуется лет на перестройку». «Спутник. Дайджест советской прессы», июль 1989, № 7:



Տնտեսական գիտությունների դոկտոր Ալեքսանդր Աուգանը, կիրառելով ստեղծագործական փիլոսոֆիան՝ Յոզեֆ Ալոյիզ Շումպետերի<sup>24</sup> (1883–1950) տեսության սխեման, հետևյալ կերպ է վերլուծում երկրների տնտեսության զարգացման պատմությունը. «Դրա (այդ տեսության – Գ. Ս.) իմաստն այն է, որ, սովորաբար, տեխնոլոգիաների զարգացման մեջ սկզբունքորեն նոր բան չատ հազվադեպ է լինում...: Տեղի է ունենում որոշակի վերախմբավորում արդեն գոյություն ունեցող հարացույցի շրջանակներում: Այն, ինչը մենք կարծում ենք, թե զարգացում է, խճանկարում գտնվող գործոնների սովորական վերահամակցում է: Մենք դրանք փոխեցինք տեղերով և ասես ստացանք նոր պատկեր: Իսկ հարացույցը հազվադեպ է փոխվում:

...Կա ազգային նույնականացում, դա հարացույցն է: Այն որոշարկուն է սահմանները: Երկիրը այդ նույնականացման շրջանակներում գործադրում է

<sup>24</sup> Stü Joseph A. Schumpeter. The Theory of Economic Development. Cambridge, 1949:

տարաբնույթ ջանքեր, և պատկերն ասես փոխվում է, բայց գլխից վեր բաներ չեն բռնի: Նույնականացումը գծում է երկրի զարգացման կոշտ սահմանները: Զարգացման մեկ խմբից մյուս խումբ և անգամ մեկ խումբ թռչելով՝ անցման վառ՝ ճապոնիայի օրինակը, ցույց է տալիս, որ ազգային նույնականացումը ենթարկվել էր լուրջ ազդեցությունների: Հիշեցնեն, որ անցումն սկսվեց Մեյձիի բարեփոխումների շրջանում այն պահին, երբ ճապոնական ազգը, գտնվելով դանդաղ հանգչման վիճակում, ստիպողաբար դարձավ բաց արևմտյան տերությունների հետ արտաքին առևտրի համար: Ի դեպ, դա արվեց ոչ թե հանուն ճապոնիայի փրկության, այլ շուկայի ընդլայնման շահերի թելադրանքով, և որքան հիանալի կերպով է արտահայտվել ամերիկացի տնտեսագետ Մայլզ Ռ. Ռիլսոնը. «Եվ որքան էր պետք նվաստացնել երկիրը, որ նա այդքան վեհանա»<sup>25</sup>:

Հանրագումարելով պատերազմի տեսության հիմունքների սույն ամփոփ վերլուծության և դրա հիման վրա կազմված 1-ին գծապատկերի հետազոտական քննարկումը՝ փաստենք, որ պետությունը՝ որպես ինքնիշխան ազգի հիմնած առանցքային քաղաքական հաստատություն, ազգային շահերից բխող քաղաքականություն վարելու, ներքին և արտաքին սպառնալիքներին հաջողությամբ դիմակայելու, ինչպես նաև հարկ եղած դեպքում իր հրահրած մարտահրավերները նետելու նպատակով պետք է սիներգետիկական եղանակով գործադրի իր ընդհանրական ներուժը՝ մոբիլիզացնելով հանրային իշխանության բոլոր ռեսուրսները: Վերոգրյալը վերաբերում է ոչ միայն ռազմավարական քաղաքականության կիրառական մասին, այլև այդ քաղաքականության **ռազմավարական պլանավորմանը**: Ժամանակակից աշխարհում ռազմավարական պլանավորման, կամ ռազմավարական փաստաթղթերի կազմման համար պետք է, նախ, հստակ կերպով տեսակավորել պատերազմները՝ համաձայն դրանց բնույթի և այն իրավիճակների, որոնք կարող են պետության սահմանած ու պաշտպանած ազգային շահերի համար դառնալ լուրջ սպառնալիք:

Արտաքին մարտահրավերների հավանական տեսակների ճշգրիտ վերլուծությունը հնարավորություն է ընձեռում դրանց դիմակայելու համար մշակելու բազմաբովանդակ ռազմավարական փաստաթղթեր և նախապատրաստական վարժանքներ ու միջոցառումներ՝ իրավիճակի նկատմամբ վերահսկողություն հաստատելու նպատակով: Մինևույն ժամանակ, միայն խնդիրների հստակ գիտակցումն ու բարձր մակարդակի ճշգրիտ գնահատումը բավարար չեն մարտահրավերներին համապատասխանաբար պատասխանելու համար: Ընդհանուր առմամբ, պետությանն ուղղված ներքին և արտաքին մարտահրավերներին դիմակայելու համար բարձրագույն իշխանություն կրող քաղաքական ուժը՝ անձը կամ կուսակցությունը, չեն կարող «միայնակ», հիմնվելով բացառապես անձի կամ կուսակցության ներուժի


<sup>25</sup> Տես «Общественный договор и гражданское общество». «Полит.ру», 11.01.2005 (<http://polit.ru/article/2005/01/11/auzan/>):

վրա, մշակել պետական քաղաքականության ռազմավարություններ: Այդ քաղաքական ուժը, գալով իշխանության, իր հետ բերում է ազգային երազանքների տեսլականը, ոչ ավելին: Արդեն զբաղեցնելով հայեցողական պաշտոններ՝ տվյալ քաղաքական ուժն այդ երազանքների քաղաքական, հայեցակարգային նախագիծ կազմելու նպատակով հանրային ծառայության համակարգին, ինչպես նաև ոչ պետական, մասնավոր հատվածին հղում է պետական պատվեր:

Որպես կանոն, այս կամ այն հիմնախնդրի խորքային վերլուծությանն իրավասու խավը երկրի գիտական ներուժն է, որը կենտրոնացած է **«ուղեղային կենտրոններում»**, որոնք են՝ բուհերը, ինստիտուտները, ռազմավարական հետազոտական համալսարանները, սոցիոլոգիական կազմակերպությունները, վերլուծական կենտրոնները և անհատ վերլուծաբանները: Այդ իսկ պատճառով գործադիր իշխանության քաղաքականության հայեցակարգերի և ռազմավարությունների մշակման պետական պատվերը պետք է հղվի հենց «ուղեղային կենտրոններին», որոնք կմշակեն իշխող ուժի ազգային երազանքներից բխող քաղաքական ակնկալիքներին համահունչ ռազմավարություններ, հայեցակարգեր, իրավական ակտեր, օրենքներ, ռազմավարական և մարտավարական փաստաթղթեր: Այնուհետև ուղեղային կենտրոնների մշակումները հետագա համակարգման նպատակով կուղարկվեն քաղաքացիական ծառայության ոլորտ, գերատեսչությունների աշխատակազմերին: Քաղաքացիական ծառայության իրավասությունների շրջանակում է հանրային իշխանության բոլոր մակարդակներում բաց փաստաթղթերը և հայեցակարգերը շրջանառության մեջ դնելու գործառնությունը, որն իրականացվում է **«Ֆոկուս խմբերի»**, կլոր սեղանների, հանրային քննարկումների, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման միջոցով: Հանրային քննարկումների արդյունքներով ընտրազատված փաստաթղթերը լրամշակվում են, վերացվում են հավանական խութերն ու թերությունները: Վերջին փուլում կառավարությունը բոլոր գերատեսչությունների համար համակարգում և ընտրում է ներառական՝ սիներգետիկ քաղաքականություն (տես գծապատկեր 3):

Վերոգրյալ գործառնությունն իրականացնելուց հետո մշակվում են արդեն ձևակերպված ազգային շահերի համակարգով և դրանցից ածանցվող ռազմավարական նպատակներով պայմանավորված ռազմավարական փաստաթղթերը: Այդ փաստաթղթերը կհամակարգեն հասարակության համախմբումը հանրային իշխանության բոլոր համակարգերի շուրջ՝ **հաղթելու** օրակարգը կյանքի կոչելու նպատակով:

Հաղթելու օրակարգը պահանջում է համակարգերի սիներգետիկ գործառում, որը, համադրվելով լավ կառավարման վերաբերյալ մերիտոկրատական ընտրանու հայեցակարգի հետ, կպայմանավորի ազգային շահերի պաշտպանության կամ առաջնդման գործում մոբիլիզացված հանրային ներուժի արդյունավետ և նպատակային կիրառումը: Անհրաժեշտ է հասարակությանը սովորեցնել հավանական ձգնաժամային իրավիճակներում



**Կենսունակ լինելու արվեստը՝ նախապատրաստել ձգնաժամային իրավիճակներին:** Պատերազմը, ինչպես արդեն տեսանք, միջազգային հարաբերություններում պարբերաբար ի հայտ եկող բնականոն երևույթ է, ուստի դրան դիմակայելու կամ պատերազմ իրահրելու համար պետությունը պետք է հասարակությանն օժտի համապատասխան հմտություններով: Հենց այդ հմտությունների ամբողջությունն է քաղաքական ազգին տալիս համապատասխան «իմունիտետ», որի միջոցով այդ նույն ազգն իր քաղաքական համակարգերով հանդերձ թռիչքածն զարգանում է՝ օգտվելով պատմական իրադարձություններով ստեղծվող հնարավորություններից:

Ապագա պատերազմում կհաղթի այն հասարակությունը, որը կհաղթի նյարդերի դիմակայության ասպարեզում, կորսևորի առավել մեծ կամային հատկանիշներ և հաղթելու ծիրք: Այդպիսի հասարակությունները ազգային երազանքների ի կատար ածման համատեքստում սովորաբար ունենում են մեծ հավակնություններ, զարգացնում են կայուն և ժողովրդավարական քաղաքական համակարգեր, դրսևորում են բարձր մակարդակի հանրային միասնություն ու քաղաքացիական համերաշխություն, հաստատում են կարգ

ու կանոն, տիրապետում են մեծ հմտությունների ու գիտելիքների և կատարելագործված տեխնոլոգիաների, ինչպես նաև առաջնորդվում են առավելապաշտական և պարբերաբար **արդիականացող ազգային շահերով**:

## ВОЕННАЯ НАУКА

### ЦЕЛИ ВОЙНЫ И ВОПРОС ПОБЕДЫ КАК КЛЮЧЕВОЕ НАПРАВЛЕНИЕ ДЕЯТЕЛЬНОСТИ ВОЕННО-ПОЛИТИЧЕСКОГО РУКОВОДСТВА ГОСУДАРСТВА

*В. В. МЕЛКОНЯН, начальник Научно-образовательного центра  
НИУО МО РА*

#### РЕЗЮМЕ

Военно-политическое руководство государства занимает ключевое положение в системе военного управления страны, так как его полномочия и ресурсы позволяют оказывать влияние на стратегические решения, принимаемые в оборонной области. Сфера деятельности военно-политического руководства охватывает всю безопасностную систему государства. Одной из важнейших задач военно-политического руководства государства является определение целей государства в возможной войне и, в соответствии с этим, моделирование содержания победы.

Понятие «победа» достаточно абстрактное, но с военной точки зрения четкое и обладающее измеримыми характеристиками. Победа может быть военной, политической или моральной, абсолютной или частичной, реальной или условной, признанной или непризнанной, в конце концов – Пирровой.

Победа – это степень осуществления целей войны. Между тем, при разграничении целей войны (политической, военной, экономической) становится ясно, что не во всех случаях одержанная на поле брани победа, а именно осуществление военных целей, обуславливает выполнение других – политических и экономических – целей войны.

Обязанностью высшего военного командования является четкое доведение до дипломатического руководства государства сведений о том, когда есть угроза начала конфликта или проводится подготовка к нему. Дипломатия в свою очередь обязана информировать верховное командование о своих намерениях для того, чтобы оно успело в достаточной мере подготовиться. Политическая цель должна быть понятной верховному руководству, чтобы оно опиралось на нее и согласовывало с ней свое оперативное воображение.

Абсолютной победой в войне может считаться полное или частич-



ное осуществление predetermined целей. В то же время эта проблема должна быть ключевым направлением деятельности военно-политического руководства государства при подготовке к возможной войне и реализации стратегического планирования. В основе военного строительства государства и строительства вооруженных сил может быть заложена формула «цель – ресурсы – программы».

## ОСНОВЫ ТЕОРИИ ВОЙНЫ И НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИХ ПРАКТИЧЕСКОГО ПРИМЕНЕНИЯ

*Г. Э. СИМОНЯН, кандидат политических наук, ученый-аналитик Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

### РЕЗЮМЕ

В связи с существующими безопасностными, экзистенциальными проблемами война продолжает оставаться актуальным и чрезвычайно важным предметом научно-практических исследований. В этом отношении по мере развития новейших технологий важны как все-стороннее изучение и новая трактовка теорий военного искусства, так и прогнозирование, вскрывающее форму новых войн.

В данной статье изучение теоретических основ войны проводилось в контексте междисциплинарных исследований, причем проблема изучалась не только в контексте наследия классиков военного искусства, но и в контексте разнопланового анализа таких понятий, как «человек», «общество», «система», изучение которых проводилось в области различных научных отраслей. Примечателен тот факт, что цивилизация, ведущая борьбу за средства к существованию, в зависимости от своей конструктивной и деструктивной идентичности постоянно движется в парадигме «мир-война-мир». В процессе очередного исторического перелома всякая нация вместе со своей политической системой приходит к точке бифуркации, определяющей вопрос бытия-небытия. В зависимости от геополитической обстановки (наличия или отсутствия «исторического шанса»), нация в силу особенностей формулировки своих национальных интересов и в этом контексте точного выбора и реализации своей стратегической политики может либо равнозначно реагировать на внешние и внутренние вызовы и, постоянно увеличивая удельный вес своего влияния, выходить на новую плоскость развития, либо терпеть поражение, оказываясь перед угрозой эрозии суверенности или полного уничтожения.

**MILITARY SCIENCE**

**GOALS OF WAR AND THE ISSUE OF VICTORY  
AS A KEY DIRECTION IN THE ACTIVITIES  
OF THE STATE MILITARY-POLITICAL LEADERSHIP**

*V. V. MELKONYAN, Head, Academic-Educational Center, NDRU, MOD, RA*

SUMMARY

The military-political leadership of the state holds a key position in the military management system of the state: its authority and resources enable it to influence the defense sphere strategic decisions. The sphere of activity of the military-political leadership embraces the entire state security system. One of the essential tasks of the state military-political leadership is to define the goals of the state for the war, thus shaping the content of the victory.

The concept of “victory” is quite abstract; however, from a military point of view it is clear and measurable. Victory can be military, political or moral, ultimate or partial, real or conditional, recognized or unrecognized, and in the end “Pyrrhic”.

Victory is the measure of achieving the goals of war. However, when we differentiate the goals of war (political, military, economic), it becomes clear that not always the victory on the battlefield, that is, the achievement of military goals, determines the accomplishment of other, i. e., the political and economic sets of war goals.

It is the due task of the Supreme Military Command to clearly inform the diplomatic leadership of the country when a conflict is threatening or is being prepared. Diplomacy, in its turn, must inform the Supreme Command on its intentions so that it manages to duly prepare. The political goal must be crystal clear to the Supreme Command so that the latter can rely on it and adapt its operative vision to it.

The ultimate victory in war may be considered the complete or partial accomplishment of all the goal set. Simultaneously, that question should be the key direction in the activities of the state military-political leadership in preparing for the potential war and conducting strategic planning. The “goal–resources–programs” formula should underlie the military construction of the state and the construction of its armed forces.

THE FUNDAMENTALS OF THE WAR THEORY AND SOME ISSUES  
OF THEIR PRACTICAL APPLICATION

*G. E. SIMONYAN, PhD in Political Science, Research Fellow, Center for Military  
Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

SUMMARY

With regard to security and existential problems, war has been remaining an urgent and top critical issue for academic and practical research. In this sense, all-inclusive studies and new interpretations of theories of the art of war are highlighted, so as the predictions revealing the kind of future wars in parallel with the development of advanced technologies.

In the article above the theoretical foundations for war have been studied in the context of interdisciplinary analyses, in an attempt to considering the issue not only in the context of the legacy left by the classics of the art of war, but also that of the diverse research conducted as a result of different disciplines regarding the value systems of “man”, “community”, and “systems”. In light of this, it is noteworthy, that the civilization fighting for means of existence, due to its constructive and deconstructive identity, constantly moving in the direction of “peace–war–peace” paradigm. During the recurrent historical turns, each nation, with its political systems, arrives at the “bifurcation” point that predetermines its “to be or not to be” question. Due to the geopolitical situation (the potentiality or absence of a “historical chance”), the nation, with its peculiarities of formulating its national interests and, in this context, its accurate choice and organization of strategic policy, is able to equally respond to external and internal challenges, and to enter a new level of development, continuously increasing its share of influence, or loses, facing the erosion or complete destruction of sovereignty.

**ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ  
ԱՌԱՋԱԿՈՐ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՓՈՐՁԸ  
ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՇԱՀԵՐԸ**

*Թ. Ն. ՄԱՆԱՍԵՐՅԱՆ, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր*



2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի և Թուրքիայի սանձազերծած լայնամասշտաբ պատերազմը մեկ անգամ ևս վկայում է, որ թշնամին չի գործում միայնակ: Անվտանգության ապահովման մեջ էական դեր են խաղում արտերկրի հետ համագործակցային կապերի հաստատումն ու դրանց ամրապնդումը: Իր հերթին, կենսական նշանակություն ունի ազգային անվտանգության կարևոր բաղադրիչներից մեկի՝ արտաքին տնտեսական անվտանգության ապահովման միջազգային փորձի խոր և համակողմանի ուսումնասիրությունը, ինչը անվտանգության ապահովման նախադրյալներից մեկն է:

Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ *Մեծ Բրիտանիայում* ազգային անվտանգության կարևորագույն ոլորտները կանոնակարգվում են կառավարության գաղտնի որոշումներով, կանոնակարգերով և հրահանգներով: 1989 թ. ընդունված «Անվտանգության ծառայության մասին» օրենքը, բացի ազգային անվտանգության հարցերից, արծարծում է նաև տնտեսական անվտանգության հարցեր: Այս երկրում թեև գոյություն չունի տնտեսական անվտանգության ապահովման միասնական ծրագիր, սակայն մի շարք օրենքներով, մասնավորապես՝ «Պետական գաղտնիքի մասին», ինչպես նաև «Տվյալների պաշտպանության մասին» օրենքներով, կանոնակարգվում են տվյալ ոլորտի տարբեր ուղղություններ<sup>1</sup>:

Արդյունաբերական ընկերություններում գաղտնիության ապահովումը կատարվում է համապատասխան նախարարությունների անվտանգության ծառայությունների միջոցով, որոնք Անգլիական հակահետախուզության ծառայության (M15) հետ համատեղ մշակում են գաղտնիքների պահպանման և աշխատակիցների համապատասխան թույլտվությունների հարցերը: Ցանկացած կապալառու ընկերության պայմանագրի հետ միաժամանակ տրամադրվում են նաև գաղտնի ոլորտների վերաբերյալ գրություն և համապատասխան հրահանգագրեր:

<sup>1</sup> *Stu Matt Denham*. What's the difference between M15 and M16? What happened to M11 - M14 and are there agencies with higher numbers (M17, M18, etc.)? "The Guardian", 2011 (<https://www.theguardian.com/notesandqueries/query/0,5753,-20949,00.html>):

Վերջին տարիներին Մեծ Բրիտանիայում նկատվում է «սպիտակ օձիքավոր» ծառայողների կատարած հանցագործությունների թվի կտրուկ աճում, և արդեն արդարադատության հսկայական համակարգն ի վիճակի չէ դրա դեմ պայքարելու: Ֆինանսական մեքենայություններ հիմնականում կատարում են բարձր դիրք զբաղեցնող պաշտոնյաները, որոնց պատճառած վնասը գնահատվում է տասնյակ միլիոններից մինչև միլիարդների ֆունտ ստեռլինգներ: Այս հանգամանքի հաշվառմամբ Մեծ Բրիտանիայում ստեղծվել է մի նոր կառույց՝ Առավել կարևոր խարդախության գործերով քննչական վարչություն (SFO), որն օժտված է շատ լայն լիազորություններով, և որի տարեկան բյուջեն կազմում է 21 մլն ֆունտ ստեռլինգ:

*Ֆրանսիայում* տնտեսական անվտանգության իրավական հիմքերն ամրագրված են դեռ 1964 թ. ընդունված «Ազգային անվտանգության մասին» օրենքով, ինչպես նաև Նախագահի և Վարչապետի մի շարք հրամանագրերով ու կարգադրություններով<sup>2</sup>, մասնավորապես՝ 1981 թ. ընդունված «Պաշտպանության և պետական անվտանգության վերաբերյալ տեղեկատվության և գաղտնիքների պաշտպանության մասին» դեկրետով<sup>3</sup>:

*Գերմանիայում* տնտեսական անվտանգություն ապահովող հատուկ ծառայությունների գործունեությունը կանոնակարգվում է մի շարք օրենքներով, որոշումներով և կանոնակարգերով: Սակայն այս ոլորտում միասնական ծրագիր չկա, այլ միայն դրա առանձին դրույթներ ամրագրված են 1990 թ. Բունդեստագի ընդունած «Սահմանադրության պահպանման մասին» օրենքում<sup>4</sup>: Արդյունաբերական և գիտահետազոտական ընկերություններում գաղտնիության ապահովման պատասխանատվությունը դրված է Էկոնոմիկայի նախարարության վրա, որն օժտված է այս ոլորտը կարգավորող առանձին նորմատիվ ակտեր ընդունելու իրավունքով: Մասնավորապես՝ 1985 թվականին ընդունվել է մի նորմատիվ ակտ, որով ավելի կոշտ միջոցառումներ են նախատեսվում գաղտնի նյութերով աշխատող անձանց ստուգման համար: ԳԴՀ կառավարությունը ևս քայլեր է ձեռնարկում տնտեսական անվտանգության ոլորտի կարգավորման ուղղությամբ, ներառյալ՝ 1997 թ. ընդունված «Պետական գաղտնիքների մասին» նոր դիրեկտիվը: Ներկայումս այս երկրում ակտիվ աշխատանքներ են տարվում նաև այս ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերանայման ուղղությամբ:

Վերջին տարիներին *ԱՄՆ-ի* հատուկ ծառայությունները մեծ քանակությամբ մասնագիտական սարքեր ու տեխնիկա են տրամադրել մասնավոր անվտանգային հիմնարկներին: Ներկայումս ԱՄՆ-ում քննարկվում է այս ոլորտը համադասող մարմնի ստեղծման գաղափարը: Ենթադրվում է, որ դրա

<sup>2</sup> Stu "Serious Fraud Office". "The Guardian", September 2020 (<https://www.theguardian.com/law/serious-fraud-office>):

<sup>3</sup> Stu "Library of Congress" (<https://www.loc.gov/law/help/guide/nations/france.php>):

<sup>4</sup> Stu "Basic Law for the Federal Republic of Germany (Grundgesetz, GG)" (<http://www.iuscomp.org/gla/statutes/GG.htm>):

աշխատանքը կկազմակերպվի Արդյունաբերական անվտանգության միջազգային ասոցիացիայի օրինակով:

*Ճապոնիայում* ընկերությունների անվտանգության ծառայությունների ղեկավարներն ունեն ոստիկանության հետ կապի ուղիղ գիծ, և յուրաքանչյուր ձեռնարկության հատկացված է առանձին տարածքային ոստիկան, որը և համագործակցում է անվտանգության ծառայության հետ:

*Մեծ Բրիտանիայում* անվտանգության ծառայությունների գործունեությունը համադասվում է Տնտեսական ոլորտում անվտանգության ապահովման բրիտանական ասոցիացիայի (BSIA) միջոցով<sup>5</sup>, որի տարեկան բյուջեն կազմում է 1 մլն ֆունտ ստեռլինգ: Սակայն տվյալ ոլորտում կան բազմաթիվ վիճելի հարցեր և բազմակարծություն:

Հատկապես հեռանկարային է հանցագործությունների կանխարգելման ոլորտում պետական և մասնավոր իրավապահ մարմինների համագործակցությունը: Օրինակ՝ Ավստրիայում մասնավոր խուզարկուներին պարբերաբար տրամադրվում են հանցագործության դեմ պայքարին առնչվող տեղեկություններ, Մեծ Բրիտանիայում նրանք պարբերաբար մասնակցում են հանցագործության դեմ պայքարին վերաբերող հարցերով ներքին գործերի նախարարությունում կազմակերպվող նիստերին և այլն<sup>6</sup>:

Անօրինական ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման դեմ պայքարում, անկասկած, մեծապես կարևորվում են պետական ու մասնավոր կառույցների համագործակցությունը և իրավական բազայի ստեղծումը: Օրինակ՝ ԱՄՆ-ի գործող օրենսդրությամբ բանկերը և մյուս ֆինանսական հաստատությունները պարտավոր են առնվազն հինգ տարի պահպանել և վերահսկող մարմիններին ներկայացնել կատարված գործարքների վերաբերյալ բոլոր ֆինանսական փաստաթղթերը: Բացի այդ, հաշիվ բացելու ժամանակ պահանջվում է սոցիալական քարտը, որը պարունակում է նաև տեղեկություններ ֆինանսական վիճակի մասին: Կիրառվում է նաև կազմակերպությունների կատարած արժույթային գործարքների, ինչպես նաև արտասահմանյան բանկերում հաճախորդների ունեցած հաշիվների շարժի մասին պետական վերահսկող մարմիններին ներկայացվող պարտադիր հաշվետվությունների կիրառման կարգ: ԱՄՆ-ի ֆինանսների նախարարությունում ստեղծվել է Ներքին եկամուտների ծառայություն (կոչվում է նաև Հարկային վարչություն), որն էլ ընդունում է հաշվետվությունները: 1990-ական թվականների սկզբին այս համակարգի ներդրման համար պահանջվեց

<sup>5</sup> Տես «British Security Industry Association (BSIA)» ([https://www.prosecurityzone.com/Company\\_British\\_security\\_industry\\_association\\_bsia\\_201.asp#axzz37ZNV7Kct](https://www.prosecurityzone.com/Company_British_security_industry_association_bsia_201.asp#axzz37ZNV7Kct)):

<sup>6</sup> Տես *Tina Weber*. A comparative overview of legislation governing the private security industry in the European Union. Final Report of a project for CoESS/UNI Europa funded by the European Commission, Version 11.04.2002 ([http://www.coess.eu/Uploads/dbaAttachedFiles/A\\_comparative\\_overview\\_of\\_legislation\\_governing\\_the\\_private\\_security\\_industry\\_in\\_the\\_EU\\_full\\_EN.pdf](http://www.coess.eu/Uploads/dbaAttachedFiles/A_comparative_overview_of_legislation_governing_the_private_security_industry_in_the_EU_full_EN.pdf)):

տարեկան մոտ 1 մլրդ դոլար, սակայն ըստ փորձագետների եզրակացության՝ դրա շնորհիվ ապահովվող բյուջեի մուտքերը մի քանի անգամ գերազանցում են այդ ծախսերը: ԱՄՆ-ում տվյալ ոլորտում մեծապես կարևորվում է նաև արտաքին հետախուզական մարմինների ներգրավումը:

Փողերի լվացման դեմ պայքարի ոլորտում առկա հիմնախնդիրները որպես միջազգային բանկային և ֆինանսական կենտրոն հատկապես կարևորում է *Շվեյցարիան*: Այս պետությունում քաղաքական և իրավական կայունությունը, բանկային հաշիվների գաղտնիության ապահովության երաշխավորությունը, բարձրակարգ բանկային ծառայությունների զարգացումը նպաստում են մեծածավալ ֆինանսական գործարքների կատարմանը, ինչն էլ ապես դժվարացնում է փողերի լվացմանն ուղղված գործարքների հայտնաբերումն ու կանխումը: Ֆինանսական անկանխիկ գործարքների տարեկան ծավալը Շվեյցարիայում հասնում է 200 մլրդ շվեյցարական ֆրանկի: Միևնույն ժամանակ, շուրջ 100 մլրդ շվեյցարական ֆրանկի հասնող գործարքներ են կատարվում կանխիկ գումարով, ինչի հետևանքով փողերի լվացման մասին պետությունում գործող օրենքի արդյունավետությունն զգալիորեն նվազում է: Օտարերկրյա տարադրամի առք ու վաճառքի ժամանակ բանկը գործ ունի ոչ թե կոնկրետ անձանց հետ, այլ բազմաթիվ ֆիրմաների: Եթե հանցավոր խմբավորումներին հաջողվում է թափանցել այդ ֆիրմաներից որևէ մեկը և իր գործակալի միջոցով անցկացնել այդ գումարը, ապա հետագայում հնարավոր չի լինի բանկի միջոցով վերահսկել տվյալ դրամական շարժը: Սույն տեսական հանցագործության դեմ պայքարելու նպատակով 1989 թ. Շվեյցարիայի ազգային պալատը հավանության արժանացրեց քրեական օրենսգրքի երկու նոր հոդվածների նախագծերը, ըստ որոնց՝ փողերի լվացման համար պատիժը խստացվում է<sup>7</sup>: Իսկ 1990 թ. խորհրդարանն ընդունել է մի օրենք, ըստ որի՝ տնտեսական և ֆինանսական հանցագործությունները բացահայտող քննիչների թիվը մեծացվել է և ստեղծվել են հատուկ մասնագիտական խմբեր:

Փողերի լվացման դեմ տարվող պայքարի արդյունավետությունը մեծացնելու համար շվեյցարական փորձագետներն առաջարկում են հետևյալ միջոցները.

- տեղեկատվության թաքնված աղբյուրների լայն կիրառում,
- հեռախոսային զրույցների լսում և նամակների գաղտնի ընթերցում,
- սահմանային և մաքսատան հսկողության խստացում,
- ոստիկանական ծառայությունների միջազգային համագործակցության ակտիվացում,
- ոլորտում աշխատող մասնագետների որակավորման բարձրացում և համապատասխան կադրերի պատրաստման համակարգի բարելավում:

*Իտալիայում* փողերի լվացման ոլորտում օրենսդրության կատարելագործման նպատակով մեծ տեղ է հատկացվում եկամուտների և բանկային

<sup>7</sup> Stu "Swiss Criminal Code", 21 December 1937 (Status as of 1 July 2020) (<http://www.admin.ch/ch/e/rs/3/311.0.en.pdf>):

գործարքների նկատմամբ հսկողության հարցերը կարգավորող նորմերին: Մաֆիայի դեմ պայքարին վերաբերող և 1982 թ. ընդունված հմ. 646 օրենքում կան դրույթներ, ըստ որոնց՝ թույլատրվում է մաֆիայի հետ համագործակցության մեջ կասկածվող անձանց բանկային հաշիվների ստուգում: Իրավապահ մարմինները կարող են ստուգել մարդու կենսաձևը, նյութական վիճակը, եկամտի աղբյուրները և այլն<sup>8</sup>: Դատախազությունն իրավունք ունի նուտարական գրասենյակներից, բանկերից, պետական հաստատություններից պահանջել համապատասխան փաստաթղթեր: Նախաքննության ընթացքում կասկածյալի ունեցվածքի վրա դրվում է արգելանք, իսկ մեղքը ապացուցելու դեպքում. ամբողջ գույքը բռնագանձվում է: 1989 թ. Իտալիայում ընդունվել է երկրի ֆինանսավարկային կառույցների գործունեության մասին օրենք, ըստ որի՝ 10 մլն իտալական լիրայից մեծ ֆինանսական գործունեություն վարող անձինք պետք է հաշվառվեն: 1991 թ. ընդունվել է հմ. 97 օրենքը, ըստ որի՝ փոխվել է փոստային և բանկային դրամական փոխանցումների ամբողջ գործընթացը. եթե այդ փոխանցման չափը գերազանցում է 20 մլն լիրան, ապա փոխանցում կատարող քաղաքացին պետք է լրացնի իր ազգանունը, սոցիալական վիճակի մասին տվյալներ, իսկ իրավաբանական անձինք պետք է լրացնեն այն կազմակերպության անունը, որի հաշվից կատարվում է փոխանցումը: Օրենքի կատարման մասին ֆինանսների նախարարը յուրաքանչյուր տարի հաշվետվություն է ներկայացնում խորհրդարանին:

Մաֆիայի դեմ պայքարի խորհրդարանական հանձնաժողովի հաշվետվության մեջ նշվում է, որ իտալացի օրենսդիրներին պետք է, մասնավորապես, կենտրոնանալ հետևյալ հարցերի վրա.

- անօրինական եկամուտների վլացման հետ կապված հանցագործությունների կազմը,
- բանկային գործարքների միօրինակացում և ֆինանսական կազմակերպությունների համար գործունեության միասնական կարգը,
- իրավապահ մարմիններին ֆինանսական կազմակերպությունների աշխատողների օգնության տրամադրման պայմանները:

Սույն պայմանները Իտալիայում հիմնականում պահպանվում են շրջանառության մեջ եվրոն մտցնելուց ի վեր:

*Կանադայում* անօրինական ֆինանսական գործարքների դեմ պայքարը մղվում է իրավապահ մարմինների ու ֆինանսական կազմակերպությունների սերտ համագործակցության պայմաններում: Կիրառվում է միջոցառումների համալիր ծրագիր, որը ներառում է՝

- ավանդատուի անձի պարտադիր նույնականացում,
- որպես ավանդ ներդրվող միջոցների աղբյուրների պարզաբանում,
- ավանդների պարբերական գույքագրում,

<sup>8</sup> *Stu P. Arliacci*. Effects of the new anti-Mafia law on the proceeds of crime and on the Italian economy. UNODC, 1984, PP. 91–100:



- չստուգված հաճախորդների հետ գործարքներից հրաժարում:

Այսպես. բանկային հաշիվ բացելու համար հաճախորդից պահանջվում է անձը հաստատող փաստաթուղթ (անձնագիր կամ վարորդական իրավունք՝ քաղաքացիության, բնակության վայրի, հասցեի գրառմամբ): Ավանդատուի տվյալները, ինչպես նաև ավանդի շարժը նախ ստուգվում են կես տարին երկու անգամ, իսկ հաջորդ տարի՝ վեց ամիսը մեկ անգամ: Հատուկ ուշադրություն է դարձվում մեծ չափերի ավանդներին, եթե նույնիսկ ավանդատուն համարվում է տվյալ բանկի մշտական հաճախորդը: Հատուկ մշակված մեթոդաբանության շնորհիվ կազմվում է այն կասկածելի գործարքների ցանկը, որոնց հանդեպ պետք է կիրառվի խստացված հսկողություն.

- մեծ կանխիկ գումարներով գործարքներ, որոնք այդ հաշվի ծավալի համար սովորական չեն,
- մեկ օրվա ընթացքում փոքր կանխիկ գումարներով բազմակի գործարքներ,
- խոշոր չափերի փոխանցումներ այն երկրներ, որոնք կապված են թմրանյութերի վաճառքի հետ կամ (և) հովանավորում են ահաբեկչական գործողություններ,
- հաշվից հաշիվ փոխանցումներ ոչ թե հաշվի տիրոջ, այլ նրա լիազորած անձի կողմից,
- խնայողական հաշիվների փոխանցումներ,
- մեկ անձի անունով զգալի գումարներով մի քանի հաշվեհամարների բացում, և այլն:

Բոլոր ֆինանսական կազմակերպությունները պետք է ներկայացնեն հաշվետվություններ 3 մլն կանադական դոլարը գերազանցող գործարքների մասին<sup>9</sup>: Ֆինանսական կազմակերպությունները պահում են համապատասխան փաստաթղթերը: Բանկի աշխատողները պարտավորվում են իրավապահ մարմիններին տեղեկացնել կասկած հարուցող կամ անօրինական ցանկացած գործարքի մասին: Բանկի անձնակազմին խստորեն արգելվում է մասնակցել սպեկուլյատիվ ֆինանսական գործարքներին և զբաղվել անձնական բիզնեսով:

1994 թ. Գերմանիայում ընդունվել է նոր օրենք, որն ուղղված է փողերի լվացման դեմ, ապա այն 2008 թ. լրամշակվել է<sup>10</sup>: Դրա մշակման գործում մեծ մասնակցություն են ունեցել ֆինանսների նախարարությունը և օրենսդիր հանձնաժողովը: Օրենքի հիմնական նպատակներն են օրինական շրջանառության մեջ անօրինական ձանապարհով ստացված գումարների շրջա-

<sup>9</sup> Տես "Guideline 2: Suspicious Transactions". Financial Transactions and Reports Analysis Centre of Canada, December 2010 (<http://www.fintrac.ca/publications/guide/Guide2/2eng.asp>):

<sup>10</sup> Տես "Money Laundering Act (Geldwäschegesetz – GwG)", 13 August 2008 ([http://www.gafisud.info/documentos/por/base/Alemania/002GwG%20%20Money%20Laundering%20Act%20\(Ley%20de%20Lavado\).pdf](http://www.gafisud.info/documentos/por/base/Alemania/002GwG%20%20Money%20Laundering%20Act%20(Ley%20de%20Lavado).pdf)):

նառության կանխումը և այնպիսի պայմանների ստեղծումը, որոնց պարագայում նմանատիպ գործունեությունը կդառնա անհնար: Այս գործում հիմնական միջոց պետք է լինի հաճախորդի նույնականացման համակարգի ներդրումը: Մասնավորապես՝ ֆինանսական կազմակերպությունը պետք է ունենա հաճախորդի հետևյալ տվյալները.

- ֆիրմայի անունը՝ ֆիզիկական անձի անուն, ազգանուն,
- ֆիրմայի գրանցման վայրը,
- ֆիրմայի գրանցման տարեթիվը:

Ըստ օրենքի՝ բանկերը, ապահովագրական ընկերությունները, վարկային կազմակերպությունները, գրավատները, աճուրդներ անցկացնող կազմակերպությունները համարվում են այն կազմակերպությունները, որոնք կարող են մեծապես ներգրավված լինել անօրինական գումարների լվացման գործում: Այդ կազմակերպությունների համար գործում են հետևյալ կանոնները.

- կազմակերպության ղեկավարությունը պետք է առանձնացնի փորձառու աշխատող իրավապահ մարմինների հետ շփումներ հաստատելու համար,
- յուրաքանչյուր ֆինանսական կազմակերպություն պետք է մշակի և ներդրի փողերի լվացման դեմ պայքարի հատուկ մեթոդներ,
- պետք է պարբերաբար ստուգվի, թե արդյոք կազմակերպության աշխատողները վստահելի են,
- բանկի աշխատողների հետ պետք է անցկացվի փողերի լվացման բացահայտման մեթոդների ուսուցում:

25 հազար եվրոն գերազանցող կանխիկ և անկանխիկ փոխանցումների դեպքում բանկերը, գրավատները, փոստերը պետք է կատարեն իրենց հաճախորդների նույնականացում: Ֆիզիկական անձի կամ ֆիրմայի նույնականացում չի նախատեսվում, եթե հաճախորդին ներկայացնում է պետականորեն գրանցված իրավաբանական անձը:

*Ֆրանսիայում* 1993 թ. կառավարական առանձին որոշմամբ բոլոր ֆինանսական կազմակերպություններին հանձնարարվել է ուժեղացնել փողերի լվացման դեմ պայքարը<sup>11</sup>: Համաձայն այս որոշման՝ ֆինանսական կազմակերպությունները պետք է տեղեկացնեն բոլոր կասկածելի փոխանցումների մասին: Բացի թմրանյութերի վաճառքից, քրեական ոլորտներ են ճանաչվել նաև խաղատները, գոլֆը, անշարժ գույքի առուծախը, արտադրական թափոնների վերամշակումը: 1990 թ. ընդունված օրենքի համաձայն՝ ավանդների գաղտնիությունը հանվում է, եթե կասկածի տակ է դրվում օրինական ճանապարհով դրանց ձեռքբերվածությունը:

<sup>11</sup> Stu “Money Laundering Legislation. National Measures”. Fraud Working Group. Brussels, October 2002 ([https://www.ebf.eu/wp-content/uploads/2017/01/Money\\_Laundering\\_Nov02-2004-01934-02-E.pdf](https://www.ebf.eu/wp-content/uploads/2017/01/Money_Laundering_Nov02-2004-01934-02-E.pdf)):

Արևմտյան փորձագետները նշում են, որ հնարավոր է մաֆիական գործարքների դեմ հաջող կերպով պայքարել միայն այն դեպքում, երբ հանցագործ համակարգերի և ֆինանսական խախտումների դեմ պայքարում կիրառվում են կոշտ միջոցներ: Միջոցառումների արդյունավետության մեծացման համար հիմնական խոչընդոտը ձեռնարկվող տարբեր քայլերի անհամաձայնեցվածությունն է: Սակայն այս դժվարությունները հնարավոր կլինի հաղթահարել, եթե կառավարությունները ցուցաբերեն այդ երևույթների դեմ պայքարելու քաղաքական կամք:

1991 թվականից ԱՄՆ-ի և Վենեսուելայի միջև գործում է միջկառավարական համաձայնագիր<sup>12</sup>, ըստ որի՝ կողմերը միմյանց աջակցում են անօրինական ճանապարհով ձեռք բերված եկամուտների օրինականացման դեպքերի բացահայտման գործում: Օգնություն ցուցաբերելու մերժումը արդարացված է միայն այն դեպքում, եթե դա պայմանավորված է ազգային անվտանգության դեմ ուղղված ռեալ սպառնալիքով: Սույն ոլորտում միջազգային համագործակցության խթանման և արդյունավետության մեծացման համար անհրաժեշտ է հետևյալ միջոցների ձեռնարկումը.

- բոլոր պետություններն ընդունեն օրենսդրական ակտեր, ըստ որոնց՝ իրավապահ մարմինները կկարողանան անխոչընդոտ կերպով մեկ այլ պետությունից ստանալ տեղեկություններ, մասնավորապես՝ բանկային փաստաթղթեր,
- պետությունները ակտիվորեն կնքեն փողերի լվացման դեմ պայքարի վերաբերյալ համագործակցային երկկողմ պայմանագրեր,
- պետությունները կնքեն փողերի լվացման դեմ պայքարի միջոցների մասին բազմակողմ պայմանագրեր:

Հայաստանում ևս նպատակահարմար է ընդունել համապատասխան նորմատիվային ակտեր, որոնք ի զորու կինեն ապահովելու տնտեսության ոչ պետական սուբյեկտների առևտրային գաղտնիքի իրավական պաշտպանությունը: Դրան, թերևս, էապես պետք է նպաստի «Ազգային անվտանգության ռազմավարությունը», որում նշվում են ազգային անվտանգության դեմ ուղղված գլխավոր սպառնալիքներն ու մարտահրավերները, և թե պետությունն ինչպես է պատրաստվում դիմակայելու այդ մարտահրավերներին և չեզոքացնելու այդ սպառնալիքները<sup>13</sup>: Չնայած նման փաստաթղթի առկայությանը, մեր կարծիքով, անհրաժեշտություն է առաջացել մշակելու նոր ռազմավարություն, որում ավելի հստակ կերպով արտացոլվեն Հայաստանում, տարածաշրջանում և աշխարհում տեղի ունեցած հիմնարար փոփո-

<sup>12</sup> Տես «International Narcotics Control Strategy Report 2012». Washington, March 2012 (<http://caracas.usembassy.gov/newsevents/reports/internationalnarcoticscontrolstrategy/2012.html>):

<sup>13</sup> Տես «Ան քարտուղարի մամուլի ասուլիսը»: «ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակ», 26.07.2019 (<https://www.seco.am/information/interviews/39?lang=hy>):

խությունները, մասնավորապես՝ Ռուսաստան–Արևմուտք հարաբերություններում նկատվող նոր միտումները, Իրան–ԱՄՆ լարված հարաբերություններով պայմանավորված՝ մեզ սահմանակից Իրանի համար սահմանված պատժամիջոցները հաղթահարելու նորանոր խնդիրները, Մերձավորարևելյան տարածաշրջանին վերաբերող պրոբլեմները: 2018 թվականին Հայաստանում «թավշյա» հեղափոխությունից հետո կատարվել են հիմնարար փոփոխություններ: Մեծ փոփոխությունների է ենթարկվել Հայաստանի տնտեսական ինտեգրման քաղաքականությունը. Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ, ինչպես նաև Եվրամիության հետ ստորագրել է Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիր: Նոր իրողություններ են ստեղծվել տարածաշրջանում 2020 թ. աշունից հետո: Վերը նշված և թվարկումից դուրս մնացած այլ իրողությունների հաշվառմամբ՝ նպատակահարմար է դրանց լույսով վերանայել ազգային անվտանգության ռազմավարությունը, որի իրականացման հենասյունն են լինելու Հայաստանի Հանրապետության Զինված ուժերը<sup>14</sup>:

Տնտեսական անվտանգության ապահովման տեսանկյունից, մեր կարծիքով, կարևորվում են 2008 թ. ընդունված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը<sup>15</sup>, 1996 թ. ընդունված և 2020 թ. լրանշակված «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքը<sup>16</sup>, 2020 թ. ապրիլին ընդունված «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» ՀՀ օրենքը<sup>17</sup> և այլ օրենքներ:

Կարծում ենք՝ պետք է օրենսդրորեն ամրագրել այն դրույթը, որով տնտեսության ոչ պետական սուբյեկտների ղեկավարները պարտավորվեն իրենց անվտանգության ապահովման համար կիրառել լիարժեք միջոցներ: Այդ նպատակով հատկացված գումարները չպետք է հարկվեն:

Մասնավոր սեփականության անվտանգության ապահովմանը վերաբերող օրենսդրությունն զգալի չափով սահմանափակ է և չի ներառում այդ գործունեության ամբողջ շրջանը: Իրավիճակը պարտադրում է, որ ընդունվեն և կիրառվեն տնտեսական անվտանգությունն ապահովող այնպիսի օրենսդրական ծրագրեր, որոնք արտացոլեն ինչպես գործող օրենքներում կատարված փոփոխությունները, այնպես էլ մի շարք, մասնավորապես՝ «Առևտրային գաղտնիքի մասին», «Շուկայի տեղական սուբյեկտների շահերի պաշտպանության մասին» և այլ օրենքների պահանջները:

<sup>14</sup> Տես նույն տեղում:

<sup>15</sup> Տես ՀՀ 2008 թ. մայիսի 26-ի «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» հմ. ՀՕ-80-Ն օրենքը (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=93142>):

<sup>16</sup> Տես ՀՀ 1996 թ. հոկտեմբերի 7-ի «Բանկային գաղտնիքի մասին» հմ. ՀՕ-80 օրենքը (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=1685&lang=arm>):

<sup>17</sup> Տես ՀՀ 2020 թ. ապրիլի 16-ի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» հմ. ՀՕ-240-Ն օրենքը (<http://www.parliament.am/legislation.php?sel=show&ID=7145&lang=arm>):

Այսպիսով՝ կարևոր է շարունակաբար ուսումնասիրել իրենց տնտեսական անվտանգության ապահովման կարգավորման ուղղությամբ տարբեր երկրների կիրառած ուսանելի փորձը և դրա տեղայնացման դեպքում մանրակրկիտ վերլուծության ենթարկել Հայաստանի, ինչպես նաև տարածաշրջանի զարգացման առանձնահատկությունները: Վերջապես՝ անհրաժեշտ է հայրենական փորձագիտական հանրության հետ ծավալել արդյունավետ համագործակցություն՝ հստակ կերպով ձևակերպված խնդիրների և առաջնահերթությունների առնչությամբ:

## « ՀԱՅԵՍՏԱՆԻ ՄՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՄՈՒՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ\*»

*Ա. Գ. ԴԱՎԹՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ, «Հ Հ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի ՌեսԻս գիտնական-վերլուծաբան»*

### ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի պատերազմների բնույթը նոր պահանջներ է ներկայացնում լայնածավալ պատերազմների սպառնալիքի առջև կանգնած պետությունների ազգային անվտանգության համակարգերին: Տնտեսությունը, լինելով յուրաքանչյուր պետության անվտանգության ապահովման կարևորագույն բազա, պետք է զարգանա այդ պահանջներին համապատասխան, լինի հնարավորինս ինքնաբավ և մրցունակ: Թե՛ պատերազմի պատրաստման, թե՛ բուն պատերազմի ժամանակ ռազմական և քաղաքացիական կարիքների բավարարման գործում էական նշանակություն ունեն տնտեսության ռեսուրսների առավելագույն ներգրավումը և այդ ռեսուրսների արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրումը:



Հոդվածի նպատակն է արդի պատերազմի բնույթի պայմաններում ներկայացնելու «ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման և մոբիլիզացիայի կատարելագործման ուղիները»: Հոդվածի առաջին մասում ուշադրություն է դարձվում ժամանակակից պատերազմների բնույթին և պահանջներին, իսկ երկրորդ մասում՝ «ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստմանը և մոբիլիզացման հիմնախնդիրներին, առաջ են քաշվում նաև «ՀՀ տնտեսութ-

\* Հետազոտությունն իրականացվել է «ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ժամկազրով գիտական թեմայի շրջանակներում:

յան մոբիլիզացիոն հնարավորությունների մեծացման վերաբերյալ որոշակի առաջարկություններ:

#### ԱՐԴԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ ԵՎ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Արդի պատերազմների բնույթը ենթադրում է ռազմական գործողությունների արագընթացություն, ինտենսիվություն և հակառակորդ պետության տարածքի ամբողջ խորությամբ գերձշգրիտ գեների նոր միջոցներով խոցման հնարավորություն: Նշենք նաև, որ 21-րդ դարի պատերազմները և զինված հակամարտությունները բնութագրվում են զինված պայքարի տարածության որակական ընդլայնմամբ: Ավանդական պատերազմներում հիմնական առաջնահերթությունը մնում է ֆիզիկական տարածությունը (հակառակորդի պաշտպանական ներուժը, զինված ուժերը, տնտեսական և ժողովրդագրական ներուժը): Նոր հազարամյակի մեկնարկից ի վեր զինված պայքարի բնույթը տեղափոխվել է մտավոր (քաղաքական ընտրախաձեղի գիտակցություն, ժողովրդի զանգվածային գիտակցություն, հոգեբանական վիճակ, ՁԼՄ-ներ) և հոգևոր (ժողովրդի կրոնական գիտակցություն, հասարակական բարոյականություն, միջկրոնական և ներկրոնական հարաբերություններ, ինչ-պես նաև ավանդական կրոնական համակարգ) տարածություններ: Ընդ որում, ռազմական ուժը աստիճանաբար սկսվում է կիրառվել, առաջին հերթին, մասշտաբային «ոչ ուժային» օպերացիաներին աջակցելու համար<sup>1</sup>: Բացի այդ, ներկայումս զինված ուժերը համարվում են ազգային անվտանգության համակարգի բաղադրիչներից միայն մեկը, իսկ միջազգային մակարդակում պետության քաղաքական և մյուս նպատակներին հասնել հնարավոր է միայն ազգային հզորության բոլոր բաղադրիչների, այսինքն՝ քաղաքական, դիվանագիտական, տնտեսական, տեղեկատվահոգեբանական և բուն ռազմական միջոցառումների համալիր, սիներգիկ կիրառման դեպքում<sup>2</sup>: Այս տրամաբանությամբ ագրեսիայի մեծացման ժամանակաշրջանում առաջանում է պետության ռազմական կազմակերպվածքի գիտաարտադրական բաղադրիչի արդյունավետ օգտագործման, արտադրական ցիկլերի վերականգնման, հատուկ կրթական ծրագրերի իրականացման անհրաժեշտություն: Այս միջոցառումները հնարավորություն են տալիս մեծացնելու քաղաքացիական և ռազմական նշանակության արտադրանքի թողարկման ծավալները, հաջությամբ լուծելու հնացած ռազմատեխնիկական արտադրանքը նորով փոխարինելու խնդիրը: Որպես արդյունք մեծանում են երկրի ռազմատնտեսական ներուժի արդյունավետությունը և մոբիլությունը, ինչն

<sup>1</sup> Տես *И. Радиков*. Новая сущность войны в XXI в. и ее отражение в военной доктрине Российской Федерации. «Вестник Санкт-Петербургского университета», 2015, сер. 6, вып. 2 (<https://cyberleninka.ru/article/n/novaya-suschnost-voyny-v-xxi-v-i-ee-otrazhenie-v-voennoy-doktrine-rossiyskoy-federatsii>):

<sup>2</sup> Տես նույն տեղում:

արտահայտվում է ռազմական արտադրանքի թողարկման, ՍՌՏ կարևորագույն տեսակների մեծ տեմպերով արտադրության նպատակով տնտեսության ձկուն վերակառուցմամբ:

Տնտեսության մոբիլիզացիոն հայեցակարգի և պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել, որ արդի պայմաններում (այդ թվում նաև Հայաստանի պարագայում) մոբիլիզացիոն պատրաստումը և ծավալումը կապված են ավելի մեծ դժվարությունների հետ, քան նախկինում: Դա պայմանավորված է մի շարք հանգամանքներով, առաջին հերթին՝ նորագույն զինատեսակների մարտական հնարավորություններով, որոնց կիրառումը հենց պատերազմի սկզբին կարճ ժամանակում կարող է անդառնալի վնասներ պատճառել պատերազմող պետությունների տնտեսական ներուժներին այդ երկրների տարածքների ամբողջ խորությունում: Բացի այդ, տնտեսության մոբիլիզացիոն պատրաստումը չափազանց բարդացել է՝ կապված ՍՌՏ-ին ներկայացվող տեխնիկական պահանջների մեծացման, և հետևաբար՝ արժեքի մեծացման, արտադրման ժամանակահատվածի երկարացման, ՍՌՏ արտադրության գործընթացում ներգրավված մասնագետների ու ինժեներների որակավորման պահանջների խստացման և բազմաթիվ կապալառուների ու մատակարարների առավել ձկուն գործակցության անհրաժեշտության հետ: Պետք է նաև հաշվի առնել այն հանգամանքը, որ վերջին տարիներին ռազմական արտադրության միջազգայնացման գործընթացն անխուսափելիորեն տանում է դեպի մոբիլիզացիոն բազայի միջազգայնացում: Այդ իսկ պատճառով տնտեսության մոբիլիզացման պետական պլանների մշակման ժամանակ անհրաժեշտ է ավելի մեծ ուշադրություն դարձնել օտարերկրյա աղբյուրներից ռեսուրսների ներգրավման և դաշնակից պետությունների տնտեսական մոբիլիզացման պլանների հնարավորություններին<sup>3</sup>:

Արդի պատերազմների բնույթը թելադրում է նաև զինված ուժերի կառավարման համակարգի բարեփոխումների անհրաժեշտություն: Այս առումով, կառավարման գործում էական նշանակություն ունեն բյուրոկրատական խոչընդոտների վերացումը, մարտավարական և օպերատիվ օղակներից մինչև ռազմավարական կառավարման օղակներ տեղեկույթի արագ փոխանցումը, դրա վերլուծությունը և ըստ այդմ՝ որոշումների ընդունումը: Մյուս կողմից՝ հակառակորդի ռազմական (հատկապես՝ հարձակողական) գործողությունների լայնածավալությունը և երկարատևությունը պահանջում են յուրային զինված ուժերի ստորաբաժանումների ու խմբավորումների և՛ պարենային, և՛ ռազմական նախանշանակման ապրանքների գծով բարձր

<sup>3</sup> Տես *Օ. Մ. Гилькова*. Мобилизационная подготовка экономики к войне: особенности, закономерности и проблемы. «Экономическая наука сегодня: теория и практика», 24 марта 2017 (<https://interactive-plus.ru/e-articles/373/Action373-119312.pdf>):

մակարդակի ապահովվածություն և պաշարների առկայություն: Այս խնդրի լուծումը նույնպես մեծապես կախված է տնտեսության արտադրական ներուժից, քանի որ պահանջվում է պարենային և ռազմական նախանշանակման ապրանքների թողարկման ծավալների ավելացում: Ընդ որում, խոսքը ոչ թե տնտեսության ռազմականացման, այլ մակրոտնտեսական կայունության և առաջարկ-պահանջարկ ընդունելի հարաբերակցության պահպանմամբ առկա ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով արտադրության ծավալների մեծացման մասին է:

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՔԻԼԻԶԱՑԻՈՆ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԵՎ ՍՈՔԻԼԻԶԱՑՄԱՆ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստումը հնարավոր լայնածավալ պատերազմական գործողությունների պայմաններում ազգային անվտանգության ապահովման առանցքային գործառույթ է: Մինևույն ժամանակ, բավարար չէ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման խնդիրները ներկայացնել միայն տնտեսական տեսանկյունից, քանի որ յուրաքանչյուր պետության տնտեսություն փոխկապված է նրա էներգետիկ, տրանսպորտային, ժողովրդագրական, տարածքային զարգացման, կրթական և այլ ոլորտների հետ՝ կազմելով պետության մոբիլիզացիոն նախապատրաստումը «սնուցող» համակարգի մաս: Խնդիրը բարդանում է, քանի որ միջազգային պրակտիկայում չեն լուծվել ազգային տնտեսությունների ազատականացման և մասնավորեցման փուլերում զորահավաքային պատրաստման մեթոդական խնդիրներ: Դրանով է պայմանավորված մոբիլիզացիոն արտադրության նոր ռազմավարությունների մշակման անհրաժեշտությունը՝ հիմնված շուկայական հիմնարար սկզբունքների վրա:

Հարկ է նշել, որ մինչ բուն պատերազմական գործողությունների մեկնարկը տնտեսության մոբիլիզացիոն պատրաստումը ենթադրում է ինչպես պետական, այնպես էլ մասնավոր հատվածներում ազգային ռեսուրսների առանձնացում, ծավալների գնահատում և ռազմական ու քաղաքացիական հատվածների պահանջումների բավարարման (նաև պատերազմական գործողությունների համար՝ կանխատեսման հիման վրա) ուղղությամբ հստակ միջոցառումների պլանավորում և իրականացում: Այս միջոցառումների ներդաշնակության և նպատակաուղղվածության ապահովումը ավելի է կարևորվում ժամանակակից պատերազմական գործողությունների ինտենսիվության, արագընթացության և սահմանի ամբողջ երկայնքով իրականացման պայմաններում: Բացի այդ, ՀՀ տրանսպորտային կիսաշրջափակվածությունը հավելյալ բարդություններ է առաջացնում տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման համար: Ուստի պետական մարմինները մոբիլիզացիոն պատրաստման միջոցառումների պլանավորման և իրականացման ժամանակ պետք է անպայմանորեն հաշվի առնեն վերոնշյալ գործոնները:



Հետևաբար, նշված գործոնների հաշվառմամբ, Հայաստանի Հանրապետության համար առաջնային խնդիր է ազգային ռեսուրսների կառավարման արդյունավետության մեծացումը. մասնավորապես՝ ՀՀ տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման խնդիրներից է արտադրական գործընթացում ազգային ռեսուրսների բազայի ավելի արդյունավետ օգտագործմամբ արտադրության ծավալների մեծացումը: Սա բավական տրամաբանական է նաև այն պատճառով, որ այն երկրներում, որտեղ տեղի են ունենում անմիջական պատերազմական գործողություններ, նկատվում է հատկապես օտարերկրյա սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների արտադրության ծավալների անկում: Այդ տրամաբանությամբ նաև անհրաժեշտ է արտադրության ծավալների ընդլայնման միջոցով հասնել հիմնական պարենային և երկակի նախանշանակման ապրանքների ռազմավարական պաշարների մեծացման և ապահովել դրանց առավելագույն ապակենտրոնացվածությունը երկրի ամբողջ տարածքում:

ՀՀ-ում արտադրության ծավալների մեծացման խնդրի լուծումը սերտորեն կապված է մեկ այլ կարևոր խնդրի՝ ըստ մոբիլիզացիոն կարիքների՝ աշխատուժի մասնագիտական կարողությունների ընդլայնման անհրաժեշտության հետ: Պետք է նշել, որ տնտեսության ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքացիական հատվածներում արտադրության ծավալների ավելացման համար կարևոր է մասնագիտական բազայի ընդլայնումը: Գաղտնիք չէ, որ ՀՀ բարձրագույն և միջին մասնագիտական կրթական համակարգերի և աշխատուժի շուկայի միջև կապը թույլ է, ինչի պատճառով մասնագիտական որակավորում ունեցող աշխատուժի մի սովորական ստիպված է աշխատել ոչ իր մասնագիտությամբ: Որպես արդյունք՝ Հայաստանը կորցնում է իր արտադրության ծավալների մեծացման հնարավորությունները՝ աշխատուժի ծանրակշիռ զանգվածի արտադրության գործընթացից դուրս մնալու պատճառով: Մյուս կողմից՝ Հայաստանում աշխատուժի հիմնական մասը զբաղված է գյուղատնտեսության, մշակող արդյունաբերության, շինարարության և ծառայությունների ոլորտներում, այնինչ որակյալ աշխատուժի պակաս է զգացվում ճշգրիտ ճարտարագիտության և բարձր տեխնոլոգիաների ոլորտներում: Այս հարցում կարևորվում է հատկապես բարձր ավելացված արժեք ապահովող արտադրական գործընթացում ներգրավված մասնագետների թվի ավելացումը, ինչը ուղղակիորեն պետք է բխի մոբիլիզացիոն կարիքների բավարարման համար արտադրության ծավալների մեծացման նպատակով կրթության բնագավառում և աշխատուժի շուկայում պետական հետևողական քաղաքականությունից:

Մյուս խնդիրն առնչվում է ռազմամթերքի արտադրության համար արտադրական հզորությունների ավելացմանը: Նախ՝ ի տարբերություն պարենային ապահովվածությունից, եթե պատերազմի ընթացքում այս կամ այն միջոցառումներով հնարավոր է որոշակիորեն նորմավորել և հնարավորինս նվազեցնել պետության բնակչության պարենային սպառման ծավալները,

ապա ռազմական ոլորտում իրավիճակը այլ է: Եթե պետության ռազմաքաղաքական դեկլարությունը որդեգրի հյուժնան պատերազմի ռազմավարություն՝ միաժամանակ դիմելով անհամաչափ գործողությունների, ապա կարևոր է ՍՌՏ և ռազմամթերքի խնայողաբար սպառումը: Սակայն չկա ոչ մի երաշխիք, որ հակառակորդի լայնածավալ ռազմական գործողությունները չեն ստիպի հրաժարվել այդ գործելակերպից: ՀՀ-ի համար նպատակահարմար է մինչ պատերազմի բռնկումը աստիճանաբար ավելացնել ռազմական արտադրանքի ծավալները և առնվազն կայուն պահել պատերազմի ընթացքում, քանի որ բուն պատերազմի ժամանակ ռազմական արտադրանքի ներմուծումը չափազանց խնդրահարույց է ռազմաքաղաքական, տրանսպորտային, ֆինանսական և այլ պատճառներով:

Գաղտնիք չէ, որ Հայաստանը ռազմական նախանշանակման արտադրանքի մոտավորապես 85 %-ը ներմուծում է այլ պետություններից և տարիներ շարունակ Ադրբեջանի հետ գտնվում է ՍՌՏ մրցավազքում: Հնարավոր պատերազմի դեպքում ՍՌՏ ներմուծման կրճատումը հիմնականում պետք է պայմանավորվի տեղում ռազմամթերքի արտադրությամբ: Ուստի նպատակահարմար է տեղական ռազմական արդյունաբերության զարգացմամբ մեծացնել ռազմական արտադրանքի թողարկման ծավալները:

Ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը անհրաժեշտ է դիտարկել որպես երկրի արդյունաբերական համակարգի արդիականացման շարժիչ: Ռազմաարդյունաբերական համալիրի արտադրական բազայից է կախված ազգային անվտանգության վիճակը, ինչպես նաև տարածքային միավորների համալիր և համակարգային զարգացումը, դրանց միջև տնտեսական կապերի ընդլայնումը և ամրապնդումը: Այս սկզբունքի պահպանումը ներկայումս նույնքան արդիական է, որքան համաշխարհային երկու պատերազմների ընթացքում: Նույն տրամաբանությամբ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ ԱՄՆ-ում տնտեսության մասնակի մոբիլիզացում է իրականացվել ռազմաարդյունաբերական հզոր համալիր ստեղծելու նպատակով: Այդ գործում կարևորվում էին ներդրումների խթանումը, ռազմավարական նշանակության ռազմական տեխնիկայի և ապրանքների մշակումը և թողարկումը: Ներդրումների խթանումը կատարվում էր լայն շրջանակի այնպիսի միջոցառումների օգնությամբ, ինչպիսիք են ներդրումների սուբսիդավորումը, պետական երաշխիքների տրամադրումը, պետական գնումների դեպքում շահույթի բարձր նորմերի ապահովումը<sup>4</sup>:

Հայաստանի տնտեսության մոբիլիզացման պրոբլեմներից է նաև պետական, մարզային և համայնքային մակարդակների միջև հարաբերութ-

<sup>4</sup> Stu С. Филин, А. Якушев. Формирование условий и стратегического инструментария мобилизации экономики. «Национальные интересы: приоритеты и безопасность», 2016, № 9 (<https://cyberleninka.ru/article/n/formirovanie-usloviy-i-strategicheskogo-instrumentariya-mobilizatsii-ekonomiki>):

յուններում բյուրոկրատական ընթացակարգերի առկայությունը: Դրանք հիմնականում արտահայտվում են համայնքային-մարզային-պետական և հակառակ ուղղությամբ կառավարման մարմինների միջև տեղեկույթի փոխանցման, վերլուծության և որոշումների ընդունման գործընթացում: Ընդունված որոշումները, հանձնարարականները կամ կարգադրությունները չեն կատարվում ճիշտ ժամանակին՝ նվազեցնելով կառավարման արդյունավետությունը: Մեր գնահատմամբ՝ պետական, մարզային և համայնքային մակարդակների միջև չկա տնտեսության մոբիլիզացիոն ներուժի մեծացման ընդհանուր պարզորոշ տեսլական կամ ռազմավարություն, ինչը հանգեցնում է այդ երեք մակարդակներում անհամաձայնեցված կառավարման:

Տնտեսության մոբիլիզացիոն կարողությունները կախված են նաև ըստ ոլորտների ձեռնարկությունների բաշխվածությունից և դրանցում զբաղվածության մակարդակից: Այսպես. 2017 թ. զբաղվածության մակարդակով առաջատար ոլորտներն են մեծածախ և մանրածախ առևտուրը (66182 մարդ) և մշակող հանքարդյունաբերությունը (56411 մարդ): Փոքր և միջին ձեռնարկությունների (ՓՄՁ) շուրջ 59 %-ը գործում է մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտում: ՓՄՁ-ների ընդամենը 8,4 %-ն է զբաղված արտադրության (որի շուրջ 40 %-ը՝ պարենային մթերքի արտադրության) ոլորտում, դրան հաջորդում են կեցության և սննդի կազմակերպման ոլորտը՝ 4 %, և տեղեկատվության ու կապի ոլորտը՝ 2,6 % ցուցանիշներով: Հայաստանում ՓՄՁ սուբյեկտները զբաղվածությամբ ապահովում են շուրջ 266000 մարդու, ինչը կազմում է ընդհանուր զբաղվածության 26,3 %-ը<sup>5</sup>: 2017 թ. ՀՀ տնտեսական գործունեության ընդհանուր շրջանառությունում Երևանի մասնաբաժինը կազմում է 72,1 %<sup>6</sup>: Ամբողջ արդյունաբերության մոտ 40 %-ը նույնպես կենտրոնացած է Երևանում<sup>7</sup>:

Այսպիսով՝ ՀՀ-ում ձեռնարկատիրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ տնտեսության արտադրության հատվածում ՓՄՁ-ների մասնաբաժինը չափազանց փոքր է, ինչը բացասաբար է ազդում տնտեսության մոբիլիզացիոն ներուժի վրա: Հետևաբար անհրաժեշտ է պետական տնտեսական քաղաքականությունն ուղղել գերազանցապես արտադրական գործունեությամբ զբաղվող ձեռնարկությունների թվի մեծացմանը: Մյուս խնդիրը պետության արտադրական հզորությունների տարածքային առավելագույն ապակենտրոնացումն է, ինչը հնարավորություն կտա նպաստելու տարած-

<sup>5</sup> Տես «ՓՄՁ ոլորտի գնահատման հետազոտություն Հայաստանում»: Ե., 2018 ([https://ccd.armla.am/wp-content/uploads/2018/12/SME-assessment\\_2018\\_November-20.pdf](https://ccd.armla.am/wp-content/uploads/2018/12/SME-assessment_2018_November-20.pdf)):

<sup>6</sup> Տես «Հայաստանի ձեռնարկությունների վիճակագրական տեղեկագիր. 2018 թ.» (<http://www.oecd.org/eurasia/competitiveness-programme/eastern-partners/Compendium-Entreprise-Statistics-Armenia-2018-ARM.pdf>):

<sup>7</sup> Տես *Սեդա Հերզնյան*, Արտադրված է Հայաստանում. Երևանում արդյունաբերության ընդամենը չորս ճյուղ է զարգացած, 17.02.2016 (<https://hetq.am/hy/article/65783>):

քային տնտեսական համահարթեցմանը և, հետևաբար, առանձին մարզերի ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

Ինչպես ՀՀ, այնպես էլ մյուս պետությունների պաշտպանական համակարգերի արդյունավետ դեկավարման ու կառավարման և ռազմական տնտեսությունների զարգացման կարևորագույն գործոն է մատակարարման շղթայի կառավարումը: Խաղաղ պայմաններում և պատերազմական վիճակում մատակարարման շղթայի անխափանության ապահովման համար էական նշանակություն ունեն արագ և գերակտիվ գործողությունների միջոցով մատակարարման այլընտրանքային ուղիների որոնումը և օգտագործումը: Հետևաբար անհրաժեշտ է մշակել թիկունքային և տրանսպորտային ապահովման և անվտանգության հայեցակարգ, որում առանցքային պետք է լինի մատակարարման շղթայի կառավարման բաղադրիչների՝ համագործակցության, համադասման և վստահելիության ապահովման միջոցառումների իրականացումը:

Տնտեսության մոբիլիզացիոն ներուժի մեծացման հնարավորությունները պետք է դիտարկել նաև ՀՀ ներկայիս տնտեսական քաղաքականության համատեքստում: Այսպես, ըստ ՀՀ 2020–2022 թթ. պետական միջնաժամկետ ծրագրի՝ ապագա տարիներին ՀՀ տնտեսությունը պետք է զարգանա առաջարկի վրա հիմնված տնտեսական աճի մոդելով (որն իր կենսունակությունն ապացուցել է աշխարհի բազմաթիվ երկրներում), որտեղ տնտեսական աճի առանցքային շարժիչը պետք է լինի արտահանումը (*export-led growth model*)<sup>8</sup>: Ընդ որում, տնտեսության կառուցվածքում կմեծանա արտահանելի ոլորտների, մասնավորապես՝ արդյունաբերության և արտահանելի ծառայությունների դերը: Տնտեսական աճմանը կնպաստեն նաև շինարարության և գյուղատնտեսության ոլորտներում ավելի բարձր արդյունքները<sup>9</sup>:

Նշենք, որ ՀՀ կառավարության կանխատեսմամբ միջնաժամկետ հեռանկարում տնտեսության աճումը պայմանավորված կլինի ծառայությունների և արդյունաբերության, հատկապես՝ այդ ճյուղերի արտահանելի մասի աճմամբ: Այս կանխատեսումը պատահական չէ, քանի որ ամբողջական առաջարկի ճյուղային կառուցվածքում վերջին տարիներին արձանագրվել է ծառայությունների և արդյունաբերության մասնաբաժնի շարունակական մեծացում, ինչը 2016–2018 թթ. միջինը կազմել է ՀՆԱ-ի 67,4 %-ը, իսկ միջնաժամկետ հեռանկարում կանխատեսվում է, որ միջինը կկազմի ՀՆԱ-ի 71,2 %-ը<sup>10</sup>:

Այնուամենայնիվ, ՀՀ արդյունաբերության զարգացման հեռանկարները մեծապես կախված են համաշխարհային շուկայում հանքահումքային ռեսուրսների տատանումներից: Այսինքն՝ նույնիսկ վերամշակող հանքարդյու-

<sup>8</sup> Տես «Հայաստանի Հանրապետության 2020-2022 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր» ՀՀ կառավարության 2019 թ. հուլիսի 10-ի հմ. 900-Ն որոշման հավելված (<http://www.irtek.am/views/act.aspx?aid=151628>):

<sup>9</sup> Տես նույն տեղում:

<sup>10</sup> Տես նույն տեղում:

նաբերության զարգացման ուղղությամբ պետական գործուն քայլերի ձեռնարկման դեպքում վերջնական արտադրանքի շուկայական գինը կախված է լինելու համաշխարհային շուկայում գնային տատանումներից: Դրա վառ օրինակն է ներկայումս COVID-19 կորոնավիրուսային համաճարակի պատճառով համաշխարհային շուկայում բազային հումքի տեսակների (բացի թերևս ոսկուց) գների շեշտակի անկումը, որը, ամենայն հավանականությամբ, դեռևս կշարունակվի առաջիկա մեկ-երկու տարիների ընթացքում: Այդ ժամանակահատվածում հայրենական արդյունաբերության զարգացման հեռանկարները դառնում են բավական մշուշոտ: Այս պայմաններում հայրենական հանքարդյունաբերության ոլորտում պետական քաղաքականությունը պետք է կողմնորոշվի դեպի ոչ թե ամբողջապես արտաքին շուկայի պահանջարկի (այնտեղ գների մեծ տատանումների ֆոնին), այլև մշակող բաղադրիչի զարգացմամբ ներքին շուկայի պահանջարկի բավարարում: Դրանով հնարավոր կլինի որոշակիորեն նվազեցնել արտաքին շուկաներից բխող բացասական ազդեցությունը:

Հարկ է նշել, որ տնտեսության մոբիլիզացիոն ներուժը մեծապես պայմանավորված է տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակով: Այս առումով տարածքային սոցիալ-տնտեսական զարգացման անհամաչափությունների հետագա խորացումը խոչընդոտում է երկրի ներքին սոցիալական ու տնտեսական կայունությանը և անվտանգությանը՝ առաջ բերելով տնտեսապես թույլ զարգացած տարածքներից բնակչության անցանկալի արտահոսք: Ռուսոի, տարածքային զարգացման անհամաչափությունների հաղթահարումը, տարածքային համաչափ զարգացումը և դրան նպատակաուղղված քաղաքականությունը դիտարկվում են որպես պետության տարածքային զարգացման գերակայություն թե՛ միջնաժամկետ, թե՛ երկարաժամկետ հեռանկարում: Տարածքային զարգացման նպատակային քաղաքականությունը պետք է ուղղված լինի մարզերում ու համայնքներում տնտեսական աճման խրախուսմանը և սոցիալական զարգացմանը: Այն պետք է ապահովի առավել ցածր զարգացում ունեցող տարածքների տնտեսական առաջանցիկ զարգացման տեմպեր և միջնաժամկետ հեռանկարում դրանց զարգացման մակարդակների աստիճանական մոտեցում միջին համապետական մակարդակին<sup>11</sup>:

Ըստ տարածքային անհամաչափությունների հարթեցմանն ուղղված քաղաքականության արդյունքների վերաբերյալ կանխատեսումների՝ տարածքային միասնական զարգացման համալիր քաղաքականությունը հնարավորություն կտա էապես բարելավելու իրավիճակը: Ըստ նպատակադրումների՝ 2021 թ. մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշը մարզային մակարդակում (առանց Երևան քաղաքի) կկազմի միջին հանրապետական

<sup>11</sup> Տես «Տարածքային համաչափ զարգացում» (<http://www.mtad.am/files/docs/1503.pdf>):

շնչային ՀՆԱ-ի 90 %-ը, իսկ 2025-ին՝ 94 %-ը: Դա հնարավորություն կտա մարզային զարգացման անհամաչափությունները հասցնելու հնարավոր նվազագույնի<sup>12</sup>:

Ուզմնարդյունաբերության ոլորտի զարգացման ուղղությամբ միջոցառումներ են իրականացնում ՀՀ Կառավարությունը, պաշտպանության նախարարությունը և նորաստեղծ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը: Ներկայումս առաջնահերթություն է ռազմաարդյունաբերական համալիրում ներդրումների խթանման և համատեղ ձեռնարկությունների ստեղծման քաղաքականության վարումը՝ հարկային և վարչարարական ընթացակարգերի բարելավման, օտարերկրյա ներդրումների ներգրավման և հանրային, մասնավոր ու միջազգային կոոպերացիայի սկզբունքով համատեղ ձեռնարկությունների ստեղծման միջոցով: ՀՀ-ում համապատասխան արտադրական կարողությունների ստեղծման, գիտահետազոտական ու կիրառական գիտության զարգացման և գիտատեխնիկական մասնագիտական ներուժի ավելացման խնդիրները գտնվում են ռազմաքաղաքական ղեկավարության ուշադրության կենտրոնում<sup>13</sup>: Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության գործունեության կիզակետում է լինելու հայրենական ռազմաարդյունաբերության զարգացումը բարձր տեխնոլոգիաների ոլորտի աջակցության միջոցով: Արդեն մշակվել և ՀՀ Կառավարության հավանությանն է արժանացել Հայաստանի Հանրապետության ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման 2020–2025 թթ. ռազմավարությունը<sup>14</sup>, որում որպես ռազմաարդյունաբերության զարգացման խնդիրներ նշված են.

- Ուզմնավարական նշանակության արտադրությունների և ծառայությունների կայուն և արդյունավետ գործունեության ապահովումը և առանցքային նշանակություն ունեցող նոր արտադրությունների հիմնումը:
- ՌԱՀ-ի նորարարական էկոհամակարգի ձևավորումը, որը կխթանի առաջադեմ տեխնոլոգիական լուծումների կիրառումը սպառազինության և կառավարման ավտոմատացված համակարգերի տեխնոլոգիական վերագինման համար:
- ռազմական արդյունաբերության կլաստերների ձևավորման միջոցով հայկական ռազմաարդյունաբերական արտադրությունների մրցունակության մեծացումը և միջազգայնացումը: Պետք է նկատել, որ այս ոլորտում Հա-

<sup>12</sup> Տես նույն տեղում:

<sup>13</sup> Տես Դ. Է. Տոնյան, ՀՀ Պաշտպանության համակարգի զարգացման տեսլականը: «ՀԲ», 2018, հմ. 1–2 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2018/08/hb-2018-n-1-2.pdf>):

<sup>14</sup> Տես Հայաստանի Հանրապետության կառավարության «Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության զարգացման ռազմավարությանը, Հայաստանի թվայնացման ռազմավարությանը և ռազմական արդյունաբերության համալիրի զարգացման ռազմավարությանը հավանություն տալու մասին» որոշման նախագիծը (<https://www.e-draft.am/projects/2173/about>):

յաստանի համար առկա է չիրացված նշանակալի ներուժ ԵԱՏՄ-ի շրջանակներում: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է այնպիսի նորամուծական կլաստերների ձևավորմանը, որոնք Հայաստանին հնարավորություն կտան մասնակցելու ռազմաարդյունաբերական արտադրանքի արտադրությանը, դրա կենսաշրջանի նախնական փուլերում (օրինակ՝ գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական մշակումներ կատարելով), իսկ այնուհետև միության մի այլ պետությունից (օրինակ՝ Բելառուսից կամ Ռուսաստանից) որպես վերջնական արդիական սպառազինություն ձեռք բերելու բավական էժան գնով, քանի որ դրանց նախագծման ու մշակման աշխատանքները կատարվել են Հայաստանում: Մեկ այլ օրինակ. Հայաստանը կարող է արտադրել ռազմական նախանշանակման արտադրանքի մասեր, դետալներ, համալրող սարքավորանք և դրանք արտահանել ԵԱՏՄ գործընկեր երկրներ՝ վերջնական արտադրանքի ստացման համար, ինչպես նաև ինքը կարող է հանդես գալ որպես ներկրվող տարբեր բաղադրիչներ հավաքող և վերջնական արտադրանք թողարկող երկիր: Մասնագիտացումը պայմանավորված կլինի կլաստերի տեղակայման, կառուցվածքի, նպատակային շուկայի առանձնահատկություններով<sup>15</sup>:

Հայաստանի տնտեսության մոբիլիզացիոն պատրաստման և մոբիլիզացման վերոնշյալ խնդիրների լուծումը պահանջում է հավելյալ ֆինանսական միջոցներ: Ավելին. այդ միջոցների պահանջարկն ավելի է մեծանում պատերազմական ժամանակ երկրում մակրոտնտեսական կայունությանն ուղղված սպառնալիքների, մասնավորապես՝ տնտեսական ակտիվության անկման և ֆինանսական միջոցների արտահոսքի պայմաններում, որոնք իրենց հերթին հանգեցնում են ինֆլյացիոն ճնշումների և գործազրկության մակարդակի բարձրացման: Այս առումով.

- անհրաժեշտության դեպքում ՀՀ արտաքին պետական պահուստները կարող են շուտափույթ ուղղվել նյութատեխնիկական ապահովմանը և ռազմական նախանշանակման ապրանքների ձեռքբերմանը կամ ապրանքային և փողի շուկաների հավասարակշռության ապահովմանը:

- Կենտրոնական բանկը կարող է նաև մեծացնել ՀՀ պետական պարտատոմսերի վաճառքի ծավալները՝ հավելյալ ֆինանսական միջոցներ ներգրավելու համար:

- Կենսաթոշակային հիմնադրամներում կուտակված միջոցների որոշակի մասը նույնպես կարող է Կենտրոնական բանկի պահանջով ուղղվել երկակի նախանշանակման ապրանքների, տեխնոլոգիաների և առաջին անհրաժեշտության ապրանքատեսակների արտադրության, դեղերի և դեղամիջոցների, ինչպես նաև բժշկական սարքավորումների ձեռքբերման ֆինանսավորմանը:

<sup>15</sup> Տես *Գ. Է. Հարությունյան*, Ռազմաարդյունաբերության ոլորտում տարածաշրջանային կլաստերների ձևավորման հիմնախնդիրները (ԵԱՏՄ տնտեսական տարածքի օրինակով): «ՀԲ», 2019, հմ. 2 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2019/11/haykakanbanak-2019-n2.pdf>):

Այսպիսով՝ պատերազմների ժամանակակից բնույթը խիստ պահանջներ է ներկայացնում երկրների տնտեսական համակարգերին: Հայաստանի պարագայում էական նշանակություն ունի քաղաքացիական և ռազմական ոլորտների միաժամանակյա և փոխլրացնող զարգացումը, որի առանցքում պետք է լինի արտադրությունների ծավալի մեծացմամբ ինքնաբավության առավելագույն մակարդակի ապահովումը: Դրան հասնելու համար նպատակահարմար է տնտեսության ռազմական և քաղաքացիական հատվածների մոբիլիզացիոն կարողությունների ընդլայնում ինչպես պետական, մարզային և համայնքային մակարդակներում կառավարման արդյունավետության մեծացման, արտադրության գործընթացում ձեռնարկությունների ակտիվ և իշխանության կողմից ֆինանսական հավելյալ միջոցների ներգրավման, այնպես էլ համապատասխան աշխատուժի թվաքանակի և մասնագիտական որակների բարձրացման միջոցով:

## ЭКОНОМИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

### ВЕДУЩИЙ МИРОВОЙ ОПЫТ ОБЕСПЕЧЕНИЯ ЭКОНОМИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ И ИНТЕРЕСЫ АРМЕНИИ

*Т. Н. МАНАСЕРЯН, доктор экономических наук, профессор*

#### РЕЗЮМЕ

Широкомасштабная война, развязанная Азербайджаном и Турцией 27 сентября 2020 года, еще раз доказывает, что противник действует не в одиночку. Установление и укрепление сотрудничества с зарубежными странами играет важную роль в обеспечении безопасности. В свою очередь, глубокое и всестороннее изучение международного опыта обеспечения внешнеэкономической безопасности, являющейся одной из важнейших составляющих национальной безопасности имеет жизненно важное значение. Таким образом, важно постоянно изучать уроки, извлеченные из опыта разных стран, в целях обеспечения экономической безопасности путем локализации успешных примеров, а также детально анализировать особенности развития Армении и всего региона. Наконец, необходимо развивать эффективное сотрудничество с экспертным сообществом Армении для четкого определения актуальных вопросов и приоритетов.



## ПУТИ МОБИЛИЗАЦИОННОЙ ПОДГОТОВКИ И УСОВЕРШЕНСТВОВАНИЯ МОБИЛИЗАЦИИ ЭКОНОМИКИ РА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

*А. Г. ДАВТЯН, кандидат экономических наук, доцент, ученый-аналитик ГСИМ  
Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

### РЕЗЮМЕ

При разработке мобилизационных концепций и планов экономики необходимо учитывать особенности современных войн (быстротечность, интенсивность, применение высокоточного оружия и т. д.). В случае с РА, с учетом этих особенностей первостепенное значение придается самодостаточности экономики, повышению эффективности управления национальными ресурсами, увеличению производственных объемов и стратегических запасов основных продовольственных товаров и товаров двойного назначения, эффективному управлению цепочками поставок. Важны также обеспечение оптимального распределения в территориальных единицах предприятий с мобилизационными мощностями и увеличение производственной ориентации МСП (малых и средних предприятий). С точки зрения повышения мобилизационного потенциала экономики будет продуктивным также ориентировка государственной политики в горнопромышленной отрасли в сторону обрабатывающего компонента. В настоящее время первоочередным является стимуляция инвестиций в военно-промышленный комплекс и осуществления совместных инициатив путем создания совместных предприятий по принципу нормализации налоговых и административных процедур, привлечения иностранных инвестиций и общественной, частной и международной кооперации.

Мероприятия по мобилизационной подготовке и мобилизации экономики требуют привлечения дополнительных финансовых средств. При необходимости возможны увеличение объемов продаж государственных облигаций РА, использование некоторой части международных государственных резервов РА, а также по требованию Центрального банка РА средств, накопившихся в пенсионных фондах.

**ECONOMIC SECURITY**

**LEADING WORLD EXPERIENCE OF ENSURING  
ECONOMIC SECURITY AND ARMENIA'S INTERESTS**

*T. N. MANASERYAN, Doctor of Economics, Professor*

**SUMMARY**

The large-scale war unleashed by Azerbaijan and Turkey on September 27, 2020, once again proves that the adversary is not acting alone. Establishing and strengthening the cooperation with foreign countries plays an important role in ensuring security. In its turn, an in-depth and comprehensive study of the international experience of ensuring external economic security, later being one of the most important components of the national security, is of vital importance. Thus, it is important to continuously study the lessons learned from the experience of different countries in order to provide the economic security by localizing successful examples, as well as to analyze in detail the peculiarities of the development of Armenia and the entire region. Finally, it is necessary to develop effective cooperation with the expert community of Armenia to clearly define relevant issues and priorities.

**THE WAYS OF MOBILIZATION PREPARATION  
AND IMPROVEMENT OF MOBILIZATION OF THE RA ECONOMY  
UNDER MODERN CONDITIONS**

*A. G. DAVTYAN, PhD in Economics, Associate Professor, Research Fellow, Strategic Games and Simulation Group, Center for Regional Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA*

**SUMMARY**

When developing the mobilization concept and mobilization plans of the economy one should bear in mind the features of modern wars (velocity, intensity, application of high precision weapons, etc.). In case with the RA in view of these characteristics, a high priority is to be given to the self-sufficiency of the economy, the increase of the efficiency of the management of national resources, the increase of the volumes of production and that of the strategic stocks of the basic food and dual-purpose goods, and the effective management of the supply chains. It is also important to ensure the optimal distribution of enterprises with mobilization potential within the territorial units, and the increase of the SMEs' (Small and Medium-sized Enterprises) production orientation. From

the perspective of increasing the mobilization potential of the economy it will also be quite productive to orient the state's policy in the sphere of domestic mining towards the processing component. Nowadays it's a priority to facilitate investments and establish joint initiatives in the field of military industry via improvement of tax and administrative procedures, engagement of foreign investments, and establishing joint enterprises on the principle of public, private and international cooperation.

The activities towards the mobilization preparation of the economy and its mobilization require additional financial assets. If deemed necessary, it is possible that the volume of the RA state bonds sales increase, some part of the RA state foreign reserves, as well as the accumulated resources of the pension fund, as per demand by the RA Central Bank, be used.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ  
ԸՆԴՂԻՄԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ  
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

*Ա. Մ. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, փոխգնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի  
Ռազմական ռազմավարական հետազոտությունների կենտրոնի  
ավագ դասախոս, ՊԱՀՀ-ի հայցորդ*

Ազգային անվտանգության ապահովման առաջնային գործիքներից է պետության տեղեկատվական քաղաքականությունը:

Ժամանակակից պատերազմներում մեծացել է տեղեկատվական ընդդիմամարտության (հաճախ կիրառվում է որպես տեղեկատվական հակապայքար) դերը: Քանի որ անվտանգության ապահովմանը լրջորեն սպառնում են տեղեկատվական պատերազմները, այս առումով տեղեկատվական պայքար վարելու մեթոդների արդիականացմանը և տեղեկատվական անվտանգության պահպանմանը պետությունները մեծ տեղ և կարևորություն են տալիս: Ճիշտ է՝ տեղեկատվական ընդդիմամարտության գործողությունների վաղօրոք անցկացումը առանց ռազմական ուժի կիրառման քաղաքական նպատակներին հասնելն է (հետագայում՝ միջազգային հանրության շահեկան դիրքորոշումների ձևավորման դեպքում, նաև ուժի կիրառումը), սակայն հատկապես կարևորվում է դրա իրականացումը բուն պատերազմի ժամանակ:



Տեղեկատվական ընդդիմամարտությունը տեղեկատվական հակամարտության սուբյեկտների մրցակցություն է հասարակական հարաբերությունների տարաբնույթ ոլորտների վրա ազդեցության մեծացման նպատակով, ինչի հետևանքով դիմակայող (ընդդիմակա) մի կողմը ստանում է առավելություն մյուսի նկատմամբ<sup>1</sup>:

Ըստ էության, տեղեկատվական ընդդիմամարտությունը պայքարի ձև է, տեղեկատվական, հոգեբանական տիրույթներում պետական ու սոցիալական համակարգերի մրցակցություն՝ քաղաքական, տնտեսական, դիվանագիտական, ռազմական, տեղեկատվական և այլ մեթոդների, եղանակների ու միջոցների կիրառմամբ, որպեսզի դիմակայող կողմի տեղեկատվական

<sup>1</sup> Сту Г. М. Шушков, И. В. Сергеев. Концептуальные основы информационной безопасности Российской Федерации. «Актуальные вопросы научной и научно-педагогической деятельности молодых ученых». Сборник научных трудов III Всероссийской заочной научно-практической конференции (23.11.2015 – 30.12.2015 г., Москва). Под ред. Е. А. Певцовой. М., 2016, сс. 69–76:

միջավայրի և սոցիալական հարաբերությունների այս կամ այն ոլորտի վրա ներգործի և իր տեղեկատվական միջավայրը պաշտպանի՝ հասնելով առաջադրված նպատակներին:

Տեղեկատվական ընդդիմամարտությունը բարդ ու ինքնատիպ կերպով համադրվում է զինված պայքարի և քաղաքական-դիվանագիտական ընդդիմամարտության տնտեսական, գիտատեխնիկական և այլ ոլորտների հետ: Տեղեկատվական-քարոզչական և հոգեբանական թիրախային օպերացիաներն ապակողմնորոշում են հակառակորդի հասակարությանը, ազդում առանձին պետությունների և, ընդհանուր առմամբ, միջազգային հանրության կարծիքի վրա: Այդ օպերացիաները նպատակ ունեն քաղաքականապես մեկուսացնելու հակառակորդին, հուսալքելու, թուլացնելու նրա մարտական ոգին և օրինականացնելու իր գործողությունները: Հոգեպես ընկճված, հուսալքված կամ տեղեկատվական առումով մեկուսացած, ապակողմնորոշված հակառակորդը առավել խոցելի է. այդպիսի հակառակորդի հասարակության հետ հնարավոր է իրականացնել տեղեկատվական ապակողմնորոշիչ օպերացիաներ:

Տեղեկատվական ընդդիմամարտության գլխավոր նպատակը պատերազմի ռազմաքաղաքական նպատակներին հասնելու համար հակառակորդի նկատմամբ տեղեկատվական գերազանցության հասնելն է, գերակա դիրքի նվաճումը և պահպանումը: Խիստ կարևոր է թույլ չտալ, որպեսզի հնարավոր հակառակորդը կամ հիմնական մրցակիցը հասնեն տեղեկատվական գերազանցության, որովհետև եթե տեղեկատվական ընդդիմամարտությանը անմիջապես հաջորդում է զինված պայքարը, ապա այդպիսի գերազանցությունը կողմերից մեկին տալիս է էական ռազմավարական և օպերատիվ առավելություն: Տեղեկատվական գերազանցության նվաճումը պետք է նախորդի պատերազմի մեկնարկին: Իսկ ահա բուն պատերազմի ժամանակ տեղեկատվական հակապայքարը ձեռք է բերում նոր կերպ ու թափ՝ կրելով ինչպես ռազմական, այնպես էլ քաղաքական ու սոցիալական մի շարք ազդեցություններ:

Տեղեկատվական ընդդիմամարտությունը մեծ ազդեցություն ունի նաև զինված ուժերի վրա: Ժամանակակից պատերազմներում տեղեկատվական օպերացիաների թիրախ են դառնում նաև զինված ուժերը, քանի որ այդ օպերացիաները միտված են ազդելու սպայի ու զինվորի մտածողության վրա, որպեսզի կտրտեն նրա մարտական ոգին:

Տեղեկատվական հարձակման ժամանակ հասարակությունն ու բանակը հաճախ հայտնվում են ծանր կացության մեջ, քանի որ մարտի դաշտում և հասարակության մեջ տարածվող լուրերը երբեմն այնքան իրարամերձ են լինում, որ կարող են առաջացնել թյուրիմացություն, հուսալքություն կամ խուճապ մարտ մղող անձնակազմի շրջանում:

Տեղեկատվական ընդդիմամարտության միջոցով հակառակորդի համար ստեղծվում է օբյեկտիվ իրականության աղավաղված պատկեր, և երբ նրա ջանքերն ուղղվում են ստացված տեղեկույթի ճշմարտացիության

պարզմանն ու վերլուծությանը, ուշանում է կարևոր և պատեհաժամ որոշումների կայացումը: Իսկ ցանկացած պայքարում հաղթում է նա, ով չի ուշացնում ճիշտ որոշումների կայացումը:

Երկրորդ աշխարհամարտում չնայած Չեխիան ուներ ավելի հզոր բանակ, քան Գերմանիան, սակայն վերջինիս իրականացրած տեղեկատվաքարոզչական գործողությունների հետևանքով անսահման վախ ու իր ուժերի նկատմամբ անվստահություն էր տարածվել չեխական կողմում:

Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը, և հատկապես՝ սոցիալական մեդիան, տեղեկույթի տարածումը դարձրել են անհամեմատ արագընթաց և հասանելի, ինչը կարևոր է ինչպես տեղեկատվական պատերազմի, այնպես էլ տեղեկատվական ընդդիմամարտության (հակապայքարի) կազմակերպման տեսանկյունից<sup>2</sup>:

Ապրիլյան քառօրյայի դեպքերը, 2020 թ. Արցախյան պատերազմը ցույց տվեցին, թե որքան կարևոր են սոցիալական մեդիայով տարածվող տեղեկույթի վերահսկողությունը ու պաշտոնական լրահոսից օգտվելը պատերազմի ժամանակ և թե որքան արդյունավետ պետք է իրականացվի պայքարը տեղեկատվական բոլոր հարթակներում:

Ավելին, 2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբեջանական դաշինքի սանձազերծած պատերազմի ամբողջ ընթացքում նկատելի էր հակառակորդի նախապես իրականացրած տեղեկատվական-քարոզչական աշխատանքը. պատերազմի օրերին լայն թափով թե՛ նյութեր տարածվեցին պատերազմի դաշտից, թե՛ հակահայկական բովանդակությամբ տեսանյութեր ու լուսանկարներ: Թշնամական տեղեկատվական հարթակները հետևողականորեն ու միտումնավոր կերպով խեղաթյուրում էին հայկական կողմի տարածած նյութերը ու կեղծ լուրը տեղադրում լրատվական հարթակներում՝ ներկայացնելով դրանք իրենց համար շահեկան լույսի ներքո:

Տեղեկատվական ընդդիմամարտությունը կարևորվում է նաև ռազմավարական զսպման տեսանկյունից, ընդ որում, ինչպես պատերազմին նախորդող շրջանում, այնպես էլ պատերազմի ժամանակ:

Տեղեկույթի ճնշմամբ հնարավորինս զսպվում և չեզոքացվում է հակառակորդի հնարավոր նոր ագրեսիա ձեռնարկելու մտադրությունը և իրագործումը, քանի որ նա գնահատում է ձեռնարկվող նոր ագրեսիայի դեպքում իրեն ուղղված հնարավոր վնասի հետևանքները:

Պատերազմի ժամանակ հակառակորդի տարածած բացասական տեղեկույթին պետք է տրվի համարժեք հակազդում, նախաձեռնվի յուրային տեղեկույթի (անհրաժեշտության դեպքում՝ նաև կեղծ) տարածումը՝ հավանական ագրեսոր պետության և դրա հասարակության շրջանում կայուն համոզմունք ստեղծելով ագրեսիայի անթույլատրելիության վերաբերյալ՝ նրա

<sup>2</sup> Stu Roger C. Molander, Andrew S. Riddile, Peter A. Wilson. Strategic Information Warfare. A New Face of War. RAND, 1996 ([https://www.rand.org/content/dam/rand/pubs/monograph\\_reports/2005/MR661.pdf](https://www.rand.org/content/dam/rand/pubs/monograph_reports/2005/MR661.pdf)):

նկատմամբ անընդունելի չափի հասնող վնասով պատասխան հարված հասցնելու հստակ հաղորդագրությամբ:

Այսպիսով՝ պատերազմի ժամանակ տեղեկատվական ընդդիմամարտությունը զսպման ոչ ուժային և ուժային միջոցների համադրում է, քանի որ, մի կողմից՝ **ուժային**, այդ թվում՝ ռազմական, հետախուզական, կիբեռհարձակումների և ծրագրահեն միջոցներով վնասվում են հակառակորդի տեղեկատվական կենտրոնները (տեղեկատվական կառավարման կետեր, ռազմավարական օբյեկտներ, լրատվական օբյեկտներ, պետական կայքեր և այլն), մյուս կողմից՝ **ոչ ուժային**՝ տեղեկատվական միջոցներով (ՋԼՄ-ներ, ռադիո և հեռուստատեսություն) հակառակորդի տեղեկատվական դաշտում տարածվում է ահռելի ծավալով քարոզչական, ներագդող կամ նույնիսկ կեղծ, ստահող տեղեկույթ, ինչի հետևանքով հակառակորդը ապակողմնորոշվում, հուսալքվում, վախենում և հայտնվում է դժվարին կացության մեջ՝ մի կողմից փորձելով հաղթահարել հարձակումները, մյուս կողմից՝ վերլուծել ու ճշտել խուճապ, վախ ու տարակուսանք առաջացնող տեղեկատվական այդ հոսքի ճշմարտացիությունը:

Ընդ որում, առավել մեծ արդյունքի կարելի է հասնել այն կողմի նկատմամբ, որն ունի ավելի զարգացած տեղեկությանի համակարգ, քանի որ դրանով այն ոչ միայն պաշտպանված է, այլև, միևնույն ժամանակ, ճանաչելի է ու խոցելի: Եթե հակառակորդի տեղեկատվական տիրույթը զարգացած չէ, ապա դժվար է իրականացնել արդյունավետ օպերացիաներ և հակառակը՝ լավ զարգացած տեղեկատվական-հաղորդակցային դաշտում հատուկ ծրագրային ներգործության միջոցների լայնամասշտաբ կիրառմամբ կարելի է հակառակորդին պատճառել զգալի կորուստներ<sup>3</sup>:

Պատերազմի ժամանակ իրականացվում են նաև տեղեկատվական հակապայքարի հատուկ օպերացիաներ՝ հետախուզության ու հակահետախուզության, ռադիոէլեկտրոնային պայքարի միջոցների, հոգեբանական և տեղեկատվական հատուկ օպերացիաների, կիբեռօպերացիաների միջոցով<sup>4</sup>:

Հասարակական ընկալումների, տրամադրությունների վրա տեղեկատվական-քարոզչական ներգործությունն ունի ռազմավարական կարևորություն: Այդ է պատճառը, որ արդեն բուն պատերազմի ժամանակ գործադրվող տեղեկատվական-քարոզչական տեխնոլոգիաները ու մեթոդները արժանի են հատուկ ուշադրության:

Տեղեկատվական ընդդիմամարտություն ծավալելիս շատ կարևոր է հասարակության մեղիագրագիտության աստիճանը, որի զարգացման համար անհրաժեշտ է կրթական աշխատանք իրականացնել դեռևս խաղաղ ժամանակ: 2020 թ. Արցախյան պատերազմը ցույց տվեց, որ պետական մար-

<sup>3</sup> Տես *C. И. Макаренко*. Информационное противоборство и радиоэлектронная борьба в сетевых войнах начала XXI века. СПб., 2017 (<https://sccs.intelgr.com/editors/Makarenko/Makarenko-InfPro.pdf>):

<sup>4</sup> Տես *Jan Eloff, Anna Granova*. Information Warfare, 2009 (<https://www.sciencedirect.com/topics/computer-science/information-warfare>):

մինները, հատկապես՝ ՊՆ լրատվական հարթակները, պատերազմի ամբողջ ընթացքում հասարակությանը, սոցիալական ցանցերի օգտատերերին և ՋԼՄ-ներին մշտապես հորդորում էին հետևել միայն պաշտոնական լրահոսին: Այդ հորդորները որոշ չափով արդյունք տալիս էին, սակայն նաև նկատելի էին հասարակության շոշափելի հատվածի ոչ պաշտոնական, չճշտված, անգամ հակահայ քարոզչություն իրականացնող ադրբեջանական կայքերից օգտվելու փաստեր:

Մրցակցային տեղեկատվության պայմաններում, երբ ՋԼՄ-ների ու սոցցանցերի տեղեկությունները շատ անգամ խառնվում են ու հնարավոր չի լինում ճշտել իրական աղբյուրը (հատկապես բացասական լուրերը տարածվում են ավելի մեծ արագությամբ, քան պաշտոնական կամ հեղինակություն վայելող լրատվամիջոցների լուրերը), հաճախ բացասաբար է ազդում հասարակական տրամադրությունների վրա:

Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ հայրենական ՋԼՄ-ները, պատերազմի ժամանակ ակտիվորեն տարածելով հակառակորդի լրատվական հարթակների հաղորդագրությունները, այդպիսով ակամա նպաստում էին դրանց տարածմանը: Այսպես, օրինակ, Արցախյան երկրորդ պատերազմի մեկնարկին՝ հենց սեպտեմբերի 27-ին, Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը հատուկ հայտարարությամբ էր հանդես եկել՝ հայ ժողովրդին հորդորելով «տեր կանգնել իրենց ապագային՝ ընդդեմ իրենց կործանման տանող ղեկավարության և նրանց որպես խամաճիկ օգտագործող ուժերի», միևնույն ժամանակ համաշխարհային հանրությանը կոչ անելով կանգնել Ադրբեջանի կողքին<sup>5</sup>: Սա և նմանատիպ հաղորդագրությունները լայնորեն տարածում էին հայկական ՋԼՄ-ները:

Պատերազմի ժամանակ հակասական տրամադրություններ կարող է առաջացնել նաև թշնամու իրականացրած ևս մեկ հնարք: Օրինակ՝ հրապարակվում է ուժի դրդմամբ հայ ռազմագերու արված տեսագրությունը, որտեղ նա ասում է, թե ինչպես են իրեն ստիպել, վախեցրել, որպեսզի կռվի թշնամու դեմ: Այդ տեսագրություններում ռազմագերին ստիպողաբար քննադատում, անգամ վիրավորում է իր պետությանն ու իշխանություններին<sup>6</sup>: Պարզ է, որ գերեվարված մարդու ասածը չպետք է ընդունվի որպես ճշմարտություն: Սակայն տարածելով այդ տեսագրությունները՝ հակառակորդը կարողանում է ազդել ընդդիմամարտող կողմի հասարակության տրամադրությունների վրա, քանի որ տվյալ հասարակության որոշ հատվածներ, առանց խորանալու խնդրի էության և գերու վիճակի մեջ, սկսում են նրան խստորեն քննադատել, համարել ազգի դավաճան: Այդպիսի դրսևորումները հատկապես

<sup>5</sup> Տես «Էրդողան. «Թուրքիան շարունակելու է սատարել ադրբեջանցի եղբայրներին»»: «Ազատություն ռադիոկայան», 27 սեպտեմբերի 2020 (<https://www.azatutyun.am/a/30860733.html>):

<sup>6</sup> Տես «Ըստ Արցախի ՄԻՊ-ի՝ Ադրբեջանը շարունակում է անմարդկային վերաբերմունքը հայ ռազմագերիների նկատմամբ»: «Ազատություն ռադիոկայան», 23 հոկտեմբերի 2020 (<https://www.azatutyun.am/a/30909353.html>):



նկատելի են սոցցանցերում: Դա է պատճառը, որ 2020 թ. Արցախյան պատերազմի ժամանակ, Արցախի Մարդու իրավունքների պաշտպանը հատուկ ուղերձով դիմում էր՝ չտարածել հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունք արտահայտող ադրբեջանական տեսանյութերը<sup>7</sup>: Պետք է նշել նաև, որ Արցախյան վերջին պատերազմի ժամանակ Ադրբեջանում հենց առաջին օրվանից փակել էին սոցցանցերը, կային համացանցի հասանելիության զգալի սահմանափակումներ, որպեսզի հասարակությունը չիմանա իրական պատկերը. կոծկում էին զոհերի թիվը՝ պատճառաբանելով, թե այդ մասին կհայտնեն պատերազմի ավարտին: Եթե հասարակությունը տեղեկացված լիներ, ապա գուցե դժգոհության մեծ ալիք բարձրանար իշխանությունների դեմ, ինչից խուսափում էր ալիկյան վարչախումբը: Փակելով սոցիալական ցանցերը՝ տեղի իշխանությունները ցույց տվեցին, որ չեն վստահում իրենց հասարակությանը, իրենց ժողովրդին ու խուսափում են նաև բացահայտումներից: ՌԻստի հասարակությունը փորձում էր գտնել հնարավոր լուծումներ՝ տարբեր ծրագրերով ունենալու սոցցանցերի հասանելիություն: Բացահայտելով դա՝ ադրբեջանական իշխանությունները հաստատեցին պարետային ժամ և քրեական պատիժ սահմանեցին նրանց համար, ովքեր կփորձեին օգտվել սոցցանցերից զարտուղի ճանապարհով: Ապացուցվեց, որ բացի թուրք-ադրբեջանական զինված ուժերից, պատերազմում հայկական զինված ուժերի դեմ կռվում էին վարձկան-գրոհայիններ ու ահաբեկիչներ Սիրիայից ու Լիբիայից: Դրա հետևանքով Ադրբեջանի հասարակությունն այդքան էլ չէր զգում պատերազմի պատճառած անընդունելի վնասը իր ՋՈՒ-ի կենդանի ուժի կորստի առումով: Այսպես. ադրբեջանական հասարակությունը քիչ էր տեղեկացված, իսկ որոշ դեպքերում էլ բացարձակ անտեղյակ էր, ինչը պետական տեղեկատվական քարոզչամեքենայի գործիքարանի ևս մի դրսևորում էր:

Պատերազմի ժամանակ յուրային տեղեկատվական հարթակների հնարավոր ոչ ճիշտ գործունեության պատճառով հաճախ թիրախավորվում են նաև յուրային զինված ուժերը, իսկ սոցիալական ցանցերում էլ տարածվում է բանակը քննադատող տեղեկույթ ու տամադրություններ: Եվս մեկ անգամ նշենք, որ սոցիալական մեդիայի գրագետ ու խելամիտ կիրառման շնորհիվ կարելի է հասնել ոչ միայն բանակի գործունեության ճիշտ ընկալմանն ու արժանի դրական գնահատմանը, այլև բանակի հեղինակության բարձրացմանը հասարակության շրջանում<sup>8</sup>:

<sup>7</sup> Տես, օրինակ, «ՄԻՊ-ը խնդրում է չտարածել հայ ռազմագերիների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի ադրբեջանական տեսանյութերը»: «Artsakh Press», 23 հոկտեմբերի 2020 (<https://artsakhpress.am/arm/news/134320/mip-y-khndrum-e-chtaratsel-hay-razmagerineri-nkatmamb-anmardkayin-verabermunqi-adrbejanakan-tesanyutery.html>), նաև՝ «Մարդու իրավունքների պաշտպանը պատրաստել է հայ ռազմագերիների հանդեպ անմարդկային վերաբերմունքի դեպքերը ներկայացնող երկրորդ զեկույցը», 27 հոկտեմբերի 2020 (<https://www.artsakhombuds.am/hy/news/472>):

<sup>8</sup> Տես Ա. Շահվերդյան, Սոցիալական մեդիայի միջոցով ՀՀ Չինված ուժերի հեղինակության բարձրացման խնդիրը՝ ՀՀ պաշտպանության համակարգի զարգացման տեսլա-

Ամփոփելով նշենք, որ այսօր, ըստ տեղեկատվական ընդդիմամարտության զարգացման միտումների, պայքարի այս եղանակն ունի մեծ արդյունավետություն<sup>9</sup>: Ընդ որում, ի տարբերություն ուժային ու ոչ ուժային այլ միջոցներից, պայքարի այս ձևը հասանելի ու մատչելի է ոչ միայն զարգացած, այլև զարգացող կամ աղքատ պետություններին և նույնիսկ անդրազգային կազմակերպություններին ու անհատներին: Տեղեկատվական հակապայքարի մեջ կարող են մտնել ինչպես պետական, այնպես էլ մասնավոր սեկտորի մասնագիտական օղակները, մասնագիտացված կառույցները և առանձին անհատներ (այդ թվում՝ լրագրողներ, բլոգերներ, հրապարակախոսներ, փորձագետներ, հասարակական գործիչներ և այլն):

Փորձելով հետևություններ անել անցած տարիների և հատկապես 2016 թ. Ապրիլյան քառօրյաի ու Արցախյան 2020 թ. պատերազմի արդյունքներից՝ պետք է նշել, որ տեղեկատվական հակապայքարի արդյունավետ ծավալման համար անհրաժեշտ է պետական բոլոր մարմինների հետևողական աշխատանք: Կարևոր է նաև պետության արտաքին քաղաքականության ուղղությամբ իրականացվող տեղեկատվական-քարոզչական աշխատանքը, քանի որ, նախապես տեղեկացված լինելով հակառակորդի մտադրությունների մասին, պետությունը պետք է ձեռնարկի համարժեք տեղեկատվական-քարոզչական քայլեր՝ միջազգային հանրության ուշադրությունը հրավիրելով հնարավոր վտանգների ու սպառնալիքների վրա և հակառակորդին ներկայացնել որպես ագրեսոր, տապալելու ու չեզոքացնելու համար նրա ռազմական հնարավոր, ընթացիկ և հետագա բոլոր մտադրություններն ու գործողությունները:

Բավական աշխատանք ունենի կատարելու նաև Ջինված ուժերը, քանի որ տեղեկատվական հակապայքարը մեծ ազդեցություն ունի ՁՈՒ-ի կառուցվածքի և կազմի վրա, արդյունավետ ընդդիմամարտություն ապահովելու համար ՁՈՒ-ի համապատասխան ստորաբաժանումները պետք է ունենան համարժեք մասնագիտական և նյութական ապահովում<sup>10</sup>:

Կարծում ենք՝ նպատակահարմար է ստեղծել տեղեկատվական հակապայքարով զբաղվող պետական կենտրոնական մարմին, որը կհամակարգի տեղեկատվական-քարոզչական ամբողջ աշխատանքը ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական ժամանակ: Այդ մարմինը ոչ միայն տեղեկատվական, այլև քարոզչական գործունեությամբ զբաղվող բոլոր մասնա-

կանի համատեքստում: «ՀԲ», 2018 թ., հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2018/12/HB-2018-n4.pdf>):

<sup>9</sup> Տես *Н. С. Степанова*. Информационное противоборство на современном этапе: анализ и тенденции. «Молодой ученый», 2009, № 2 (<https://moluch.ru/archive/2/153/>):

<sup>10</sup> Տես *А. В. Раскин, В. Е. Таразевич, И. В. Тарасов*. Роль и место информационного противоборства в обеспечении живучести войск в современной войне. «Стратегическая стабильность», 2012, № 1 (<http://pstmprint.ru/wp-content/uploads/2016/11/SS-1-2012-3.pdf>):

գետներին, կազմակերպություններին ու անհատներին միավորելով և մեկ միասնական ճակատ ստեղծելով՝ առավել արդյունավետ կդարձնի տեղեկատվական հակապայքարը: Այն չի սահմանափակվի մեկ կամ մի քանի անհատների տրամադրած պաշտոնական տեղեկությով, կծավալի մեծ աշխատանք ինչպես տեղեկատվական, այնպես էլ կիրառական տեղեկատվության տիրույթում, կհամակարգի ՀՀ և ԱՀ տեղեկատվական գործողությունները, կբացառի տեղեկատվական հնարավոր հակադրությունները կամ իրարամերժ լրահոսը, կիրականացնի իրականության օբյեկտիվ լուսաբանում՝ միավորելով հայկական երկու հանրապետությունների լրատվական ամբողջ ներուժը: Բացի այդ, տվյալ մարմինը կիրականացնի նաև գիտահետազոտական աշխատանք՝ պատրաստելով ու լայնորեն տարածելով գիտական հիմնավորմամբ հայամետ նյութեր (հրապարակումներ, հոդվածներ, տեսանյութեր, ֆիլմեր և այլն), որոնք զգալի արձագանք կգտնեն հատկապես միջազգային մասնագիտական, պետական, դիվանագիտական ու հասարակական հարթակներում: Տվյալ մարմինը նաև հետևողականորեն կվարի սոցիալական մեդիայի հարթակը և կկարողանա գտնել ու միավորել բոլոր այն պետականամետ ու հայամետ անհատներին, որոնք կիրականացնեն թիրախային ու նպատակային գործունեություն՝ տեղեկատվական հակապայքարը դարձնելով ավելի արդյունավետ: Նույն այս մարմինը լայն թափով կծավալի տեղեկատվական աշխատանք նաև Սփյուռքի հայկական կառույցների համար, որպեսզի Սփյուռքը ուղղորդվի մեկ պետական լրատվական ու գաղափարական օղակից և ստանա անհրաժեշտ տեղեկությ: Ինքնակազմակերպվող և պատերազմի ժամանակ բողոքի միջոցառումներ, ակցիաներ ու երթեր անցկացնող Սփյուռքի ներկայացուցիչները պետք է հստակ աջակցություն ունենան հայրենիքից, որպեսզի իրենց ձեռնարկումները լինեն առավել արդյունավետ և նպատակային: Առաջարկվող մարմինը պետք է ունենա հստակ գործառույթներ, այդ թվում՝ տվյալների հավաքագրում, վերլուծություն, տեղեկատվական դաշտի մշտագնում և գնահատում, պետական տեղեկատվական-քարոզչական ու հետազոտական, վերլուծական նյութերի պատրաստում և լայն տարածում, ՋԼՄ-ների և սոցիալական մեդիայի հետ բազմաշերտ, ցանցային և ծավալուն աշխատանք: Այն պետք է ներառի ինչպես քաղաքացիական, այնպես էլ ուժային ոլորտի մասնագետների և հատկապես՝ զինվորականների, որոնք կկարողանան ճիշտ, գրագետ և նպատակաուղղված տեղեկատվական-քարոզչական, գաղափարական աշխատանքով առավել սերտացնել ինչպես բանակ-հասարակություն կապը, այնպես էլ ավելի համախմբված, թիրախամետ, արդյունավետ և խոցիչ դարձնել թշնամու դեմ մղվող տեղեկատվական հակապայքարը:

**ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

**НЕКОТОРЫЕ ОСОБЕННОСТИ ИНФОРМАЦИОННОГО  
ПРОТИВОБОРСТВА ВО ВРЕМЯ ВОЙНЫ**

*А. М. ШАХВЕРДЯН, подполковник, старший преподаватель  
Центра военных стратегических исследований ИНСИ НИУО МО РА,  
соискатель НИУО МО РА*

**РЕЗЮМЕ**

В современных войнах существенно возросла роль информационного противоборства. Достижение информационного превосходства должно предшествовать непосредственному началу войны, а уже в период самой войны данное противоборство приобретает новый образ и новый размах, поскольку протекает по мере развития военных действий. Данная проблема актуальна также и по той причине, что в течение ведения противником информационной войны ее мишенью становятся не только общество, но и вооруженные силы.

С развитием информационных технологий, и в особенности социальных медиа, распространение информации стало быстрым и общедоступным. Апрельская война 2016 г., Вторая Арцахская война 2020 г. выявили, насколько важен контроль над распространяемой по социальным медиа информацией и насколько продуктивно должно быть организовано информационное противоборство на всех платформах.

В настоящее время тенденции развития информационного противоборства показали, что этот способ борьбы обладает большой эффективностью и для продуктивного развертывания информационного противоборства необходима последовательная работа всех звеньев государственного управления.

С этой целью предлагается создание информационно-агитационного, идеологического и исследовательского органа, который объединит гражданские и военные усилия по ведению информационного противоборства в отношении противника.

**SOME PECULIARITIES OF INFORMATION COUNTERFIGHT  
DURING WAR**

*A. M. SHAHVERDYAN, Lieutenant Colonel, Senior Lecturer, Center for Military  
Strategic Studies, INSS, NDRU, MOD, RA, Graduate Student, NDRU*

**SUMMARY**

The role of information counterfight has significantly increased in modern warfare. The achievement of information superiority must precede the immediate start of the war, and already during the war itself it acquires a new form and momentum, as it goes hand in hand with the hostilities. The problem is urgent due to the fact that during the information war, waged by the enemy, not only the society but also the armed forces are targeted.

The development of information technologies, especially the social media, have made the dissemination of information incomparably faster and more accessible. The 2016 Four-Day April War, the Second Artsakh War in 2020 showed how important it is to control information disseminated on social media during the war, and how effectively the information struggle must be carried out on all information platforms.

At present, the tendencies of the development of the information counterfight show that this method of struggle is very effective, and in order to allow the effective expansion of the information counterfight, consistent work with all state bodies is needed.

For this purpose, it is proposed to create an information-propaganda, ideological and research body, which will combine civil-military efforts in the information counterfight against the enemy.

## ՀՐԹԻՈՒԱՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ\*



«Իսկանդեր» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիր (Ռուսաստան)



«Լորա» օպերատիվ-մարտավարական հրթիռային համալիր (Իսրայել)

\* Ներդիրում ներկայացված հրթիռահրետանային միջոցների USP-ները տես էջ 121 – 122:



9458 «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ (ԽՍՀՄ)



«Մ270» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ (ԱՄՆ)



2019 «Մստա-Ս» ինքնագնաց հրետանային կայանք  
(ԽՍՀՄ)



«Մ109Ա7» ինքնագնաց հրետանային կայանք  
(ԱՄՆ)





«Պզ 2000» ինքնագնաց հրետանային կայանք  
(Նիդերլանդներ)



«ԱՍ90 Պալմարիա» ինքնագնաց հրետանային կայանք  
(Իտալիա)

**ԱՊԱԳԱ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԸ  
ՈՐՊԵՏ ՌԱԶՄԱԿԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՈՒՂԵՑՈՒՅՑ\***

*Գ. Է. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, տնտեսական գիտությունների թեկնածու,  
դոցենտ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ԱՌՀԻ-ի Տարածաշրջանային ռազմավարական  
վերլուծությունների կենտրոնի Ռազմավարական խաղերի  
և մոդելավորման խմբի պետ*



*Wie niet sterk is moet slim zijn...\*\**

*Louis van de Vuurst. Johan Crujff: Van Trainer Tot  
Adviseur, Maart 2016 (<http://www.ajax.nl/streams/ajax-actueel/johan-crujff-van-trainer-tot-adviseur-.htm>)).*

**ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԻ ԲՆՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ**

Ժամանակակից պատերազմների բնույթի վերլուծությունը անհնար է առանց կանխամտածված ժամանակավրիպման: Ընդ որում, խոսքը չի վերաբերում միայն պատերազմների բնույթի վերաբերյալ անցյալում դիտարկված օրինաչափությունների անկաշկանդ դրսևորմանը ներկայումս, ինչը ոչ մի կերպ հնարավորություն չի տալիս «ժամանակակից» բառը լիարժեք իմաստով կիրառելու որպես պատերազմի մակդիր: Այլ նույնքան վստահությամբ խոսքը վերաբերում է նաև «ապագայի» պատերազմների բնույթի «ժամանակակից» դրսևորումներին, որոնց հետ առերեսվելու ժամանակը նույնպես եկել է, քանի որ տեխնոլոգիական փոփոխությունների սրընթացությունը պահանջում է նոր մարտահրավերներին համարժեք արձագանքելու բարձր պատրաստականություն:

Ռազմագիտական գրականությունում ակտիվորեն շրջանառում է Ուինստոն Չերչիլի այն միտքը, որ «գեներալները միշտ պատրաստվում են նախորդ պատերազմներին»: Առաջին հայացքից թվում է՝ միտքը բացասական երանգ ունի, մինչդեռ այն, արտահայտելով օբյեկտիվ իրականությունը, արտացոլում է ռազմական հակամարտությունների նախորդ փորձի ուսումնասիրման կարևորությունը՝ նոր պատերազմական իրականությանն հնարավորինս անսխալաբար արձագանքելու և հաջորդ պատերազմում հաղթելու համար: Սա ամենևին չի նշանակում հետահայաց դիրքորոշում,

\* Հետազոտությունը կատարվել է ՀՀ գիտության կոմիտեի տրամադրած ֆինանսավորմամբ՝ 19T-5B12 ծածկագրով գիտական թեմայի շրջանակներում:

\*\* «Նրանք, ովքեր ուժեղ չեն, պիտի խելացի լինեն»:

առաջին հերթին այն պատճառով, որ պատերազմները, չլինելով սոցիալ-քաղաքական երևույթ և շարունակելով միջազգային հարաբերություններում մնալ որպես էական գործոն, ըստ էության, չեն փոխվում՝ միշտ դրսևորվելով միևնույն շարժառիթներով, կանոններով ու օրինաչափություններով<sup>1</sup>: Պատերազմի անփոփոխ հատկանիշն է նաև արտադրական ոլորտի հետ ուժեղ փոխազդեցությունը: Եվ հենց այս վերջին անփոփոխ հատկանիշն էլ պայմանավորում է պատերազմի՝ որպես տեխնոլոգիական երևույթի, «փոփոխականությունը»: Այլ կերպ ասած՝ տեխնոլոգիական փոփոխությունները, նորամուծությունները, գաղափարների էվոյուցիան ունակ են բավական հեշտությամբ և արագորեն կերպափոխելու «պատերազմի պրակտիկան», դրա դրսևորման ձևերը:

Պատերազմի հաստատուն և փոփոխուն շերտերը տարբերակելու համար վերլուծաբաններն առաջարկում են հոմանիշ չդիտել «բնույթ» և «էություն» կատեգորիաները, նկատելով, որ պատերազմի էությունն անփոփոխ է, իսկ բնույթը՝ փոփոխական<sup>2</sup>: Նման տարբերակումը կարևոր է հասկանալու համար, որ թեև աշխարհը թևակոխում է այսպես կոչված «կոգնիտիվ» (բանական) պատերազմների փուլ<sup>3</sup>, մարդկային կորուստները, բռնությունն ու դաժանությունը, ավերածություններն ու ռեսուրսների սղությունը շարունակելու են մնալ որպես պատերազմի անխուսափելի օրինաչափություն: Իսկ պետություններն իրենց ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունն ու բնակչության ֆիզիկական անվտանգությունը երաշխավորելու համար ապավինելու են իրենց ռազմական ուժին և հնարավորություններին, և, որպես կանոն, հաղթելու է նա, ով ավելի ուժեղ է: Դրա հետ մեկտեղ նկատելիորեն մեծանալու է նաև այն կողմի հաղթանակի հավանականությունը, որն ավելի խելացի է:

Այնուամենայնիվ, նոր ժամանակներում պատերազմի բնույթի էական կերպափոխումը նույնպես կլինի անխուսափելի, կփոխվեն նաև ռազմական ուժի ու հզորության չափանիշները: Ինչպես իրավացիորեն Կլաուզևիցն է նկատել, այդ կերպափոխումները, սակայն, կարող են տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ տեղի ունենան հասարակության ու նոր սոցիալական պայմանների փոփոխություններ<sup>4</sup>: Հասարակական կյանքի բոլոր ասպեկտ-

<sup>1</sup> Տես *B. F. Braumoeller*. Only the Dead: The Persistence of War in the Modern Age. Oxford University Press, 2019:

<sup>2</sup> Տես *Максим Сучков, Сим Тэк*. Будущее войны. Доклад Международного дискуссионного клуба “Валдай”. М., Август, 2019, с. 7:

<sup>3</sup> Տես *Rajesh Uppal*. Future Neuro Cognitive Warfare shall Target Cognitive, Physiological and Behavioral Vulnerabilities of Adversary. “International Defense, Security and Technology”, 29 March 2020 (<https://idstch.com/threats/future-neuro-cognitive-warfare-shall-target-cognitive-physiological-behavioral-vulnerabilites-adversary/>):

<sup>4</sup> Տես *Gilbert Foo Kong Pin*. Clausewitz’s views on the Transformation of War, Politics and Society – An Analysis of the Wars in the 19th and 20th Centuries. “Pointer” Journal of the Singapore Armed Forces, 2014, Vol. 40, N 4:

ների վրա որոշիչ ազդեցության տեսանկյունից բեկումնային կարելի է համարել 4-րդ արդյունաբերական հեղափոխությունը, որն արդեն սկսել է փոխել մարդկային կյանքի բոլոր բնագավառները<sup>5</sup> ձևավորելով նոր բնույթի պահանջմունքներ, դրանց բավարարման համար նյութական և ոչ նյութական միջոցների նոր որակական ու քանակական չափումներ, առաջարկելով առարկայական, կառուցվածքային, տարածական և իմաստային ընկալման նոր հարթություններ: Նույնպիսի փոփոխություններ ակնկալվում են նաև ռազմական ոլորտում: Ավելին. գիտնականները համակարծիք են այն հարցում, որ արհեստական բանականությունը, որը գործնականում իր մեջ խտացնում է 4.0 Արդյունաբերության բոլոր տեխնոլոգիաները (մեքենայական ուսուցում, մեծածավալ տվյալներ, իրերի համացանց, ռոբոտատեխնիկա և այլն), փոխելու է պատերազմի բոլոր առումները և հիմք է դնելու նոր տիպի սպառազինությունների մրցավազքի<sup>6</sup>:

Կանխատեսումներ կան նաև առ այն, որ արհեստական բանականության ոլորտում գիտական ձեռքբերումները կարող են կրճատել միջուկային սպառազինություններով պայմանավորված ռիսկերը (վաղ նախագրուշացման և արդյունավետ կառավարման շնորհիվ)<sup>7</sup> միևնույն ժամանակ առաջացնելով համաշխարհային մակարդակով ռազմավարական կայունության խախտման այլ, ավելի լուրջ պատճառներ<sup>7</sup>:

ՈՐՈՇ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ՀԱՅ-ԱՂՐԲԵԶԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Դեռ ոչ վաղ անցյալում հայ-ադրբեջանական հնարավոր պատերազմի վերաբերյալ կանխատեսումներում նկատել էինք, որ ամենայն հավանականությամբ սպասվում է լայնամասշտաբ պատերազմ, որը բնութագրվելու է հակառակորդի ձեռնարկած գործողությունների սրընթացությամբ և հետապնդելու է բազմակողմանի ու համապարփակ հարձակմամբ կարճ ժամանակում ռազմավարական նշանակության օբյեկտները խոցելու և արագ հաջողության հասնելու նպատակ<sup>8</sup>: Դժվար չէր կռահել նաև այն, որ պատերազմն

<sup>5</sup> Stu *Sung Hyun Park, Wan Seon Shin, Young Hyun Park, Youngjo Lee*. Building a new culture for quality management in the era of the Fourth Industrial Revolution. “Total quality Management”, 2017, Vol. 28, N 9:

<sup>6</sup> Stu “Battle algorithm: Artificial intelligence is changing every aspect of war”. “The Economist”, 07.09.2019 (<https://www.economist.com/science-and-technology/2019/09/07/artificial-intelligence-is-changing-every-aspect-of-war>):

<sup>7</sup> Stu *Vincent Boulanin, Lora Saalman et al*. Artificial Intelligence, Strategic Stability and Nuclear Risk. SIPRI, June 2020, P. ix:

<sup>8</sup> Stu *Գ. Հարությունյան, Հայկական ռազմարդյունաբերության զարգացման առաջնահերթությունները ժամանակակից պատերազմների բնույթի հաշվառմամբ: «Հայկական ռազմարդյունաբերության զարգացման ժամանակակից մարտահրավերները և հնարավորությունները»* գիտաժողովի նյութեր»: Ե., 2020, էջ 16–36:

ունենալու է հիբրիդային և անհամաչափ բնույթ, դրանում լայնորեն կիրառվելու են տեղեկատվական պայքարի միջոցներ՝ հակառակորդի բարոյահոգեբանական վիճակը ճնշելու համար, ահաբեկչական տարրեր, արտաքին քաղաքական ճնշումներ և դիվանագիտական լծակներ՝ պատերազմի նպատակներին հասնելու համար<sup>9</sup>: Պատերազմի մեկ այլ կարևոր առանձնահատկությունը անօդաչու թռչող ապարատների լայնածավալ կիրառումն էր, որն էլ, ըստ էության, որոշում էր ռազմական գործողությունների ռազմավարությունն ու մարտավարությունը պատերազմող երկու կողմերի համար<sup>10</sup>:

Թեև հնարավոր լայնամասշտաբ պատերազմի վերսկսման կանխատեսումները հիմնվում էին առավելապես Ադրբեջանի գնած հարձակողական տեսակի սպառազինությունների վրա, այնուամենայնիվ, պատերազմն անխուսափելի էր ևս մի կարևոր պատճառով. թե՛ Ադրբեջանի, թե՛ Հայաստանի զինանոցներում առկա սպառազինություններն իրականում սովորական պատերազմների վարման համար նախատեսված սպառազինություններ են (բացառությամբ, թերևս, նշած ԱԹԱ-ների), որոնք առավել մեծ արդյունավետությամբ կարող են կիրառվել «գիտատար հին պատերազմներում»<sup>11</sup>: Վերջիններիս առանձնահատկությունն արդիականացված հին սպառազինությունների կիրառությունն է, ինչը հնարավորություն է տալիս վարելու հեռահար պատերազմ՝ օգտագործելով համակարգիչներ և նոր տեղեկատվական տեխնոլոգիաներ<sup>12</sup>: Սակայն նոր սրընթաց տեխնոլոգիական փոփոխությունների հետևանքով նման սպառազինությունները նույնպես արագ կորցնում են և առաջիկայում էլ շարունակելու են կորցնել իրենց արդիականությունն ու արդյունավետությունը: Ռազմական փորձագետները համակարծիք են այն հարցում, որ ռազմական գերտերությունների միջև նոր տեխնոլոգիական հիմքով սպառազինությունների մրցավազքը շատ մոտ ապագայում հանգեցնելու է սկզբունքորեն նոր տեսակի սպառազինությունների ի հայտ գալուն, սպառազինություններ, որոնց դեմ սովորական զինատեսակներով պայքարելը լինելու է խիստ դժվար, եթե չասենք, որ դառնալու է անհնար<sup>13</sup>: Ջինված հակամարտությունների մեջ ներքաշված պետությունները չէին կարող հաշվի չնստել այս իրողության հետ: Խոսքը վերաբերում է մասնավորապես Ադրբեջանին, որը միայն վերջին 10 տարիների ընթացքում

<sup>9</sup> Տես նույն տեղում:

<sup>10</sup> Տես *Виктор Сокирко*. Бои в Карабахе показывают образец войны будущего. “Взгляд”, 8 Октября 2020 г. (<https://vz.ru/world/2020/10/8/1063885.html>):

<sup>11</sup> Տես *Mary Kaldor*. New and Old Wars: Organized Violence in a Global Era. 3rd Edition. Cambridge, 2012, P. 295:

<sup>12</sup> Տես *Freedman Lawrence*. The Revolution in Strategic Affairs. Adelphi Paper 318. London, 1998:

<sup>13</sup> Տես *Stephan De Spiegeleire, Matthijs Maas, Tim Sweijs*. Artificial Intelligence and the Future of Defense. The Hague Centre for Strategic Studies, 2017:

պաշտոնական վիճակագրությամբ ռազմական կարիքներին է ուղղել ԱՄՆ-ի մոտ 20 մլրդ դոլար, ինչը ավելի քան 4 անգամ գերազանցում է նույն ժամանակահատվածում Հայաստանի կատարած ռազմական ծախսերը (ԱՄՆ-ի մոտ 4,9 մլրդ դոլար): Մեր կարծիքով՝ Ադրբեջանի՝ ագրեսիվ պատերազմական գործողությունների շարժառիթներից մեկն էլ այն էր, որ սրընթաց տեխնոլոգիական փոփոխությունները շուտով կարող են անպիտան դարձնել իր զինանոցում կուտակված սպառազինությունների մի զգալի մասը: Կարելի է նաև ենթադրել, որ գնահատելով բարձր տեխնոլոգիական ռազմաարդյունաբերություն ունենալու Հայաստանի ներուժը և վերջին տարիների ջանքերը, Ադրբեջանն օբյեկտիվ մտավախություն է ունեցել, որ ապագայի պատերազմներում, որոնք իրենց բնույթով առավելապես հիմնվելու են «խելացի» տեխնոլոգիաների վրա, հաղթելու ավելի մեծ հավանականություն կունենա Հայաստանը: ՌԻստի նպատակադրվել էր կենդանի ուժի և ՍՌՏ քանակական գերազանցության շնորհիվ վարելու կայծակնային պատերազմ, քանի դեռ քանակական առավելությունը կարող է պատերազմներում լինել որոշիչ: Հայ-ադրբեջանական պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց, որը 21-րդ դարում զինված ուժերի զանգվածայնության վրա հիմնվելը հաղթանակի գրավական չէ, և որ շատ ավելի կարևոր է առաջադիմական նորամուծությունների և պատերազմի վարման անկանխատեսելի հնարների կիրառումը:

**ԻՆՉՊԻՍԻՆ ԵՆ ԼԻՆԵԼՈՒ ԱՊԱԳԱՅԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ  
ԵՎ ՍՊԱՌԱԶԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Արհեստական բանականության համատարած կիրառումը կարող է հանգեցնել նաև սպառազինությունների հնարավորությունների անհավատալի կերպափոխումների: Այսօր արդեն անօդաչու թռչող ապարատները, տիեզերական հետախուզությունը, լազերային ու գերծայնային սպառազինությունները վերածվել են ժամանակակից պատերազմների սովորական բաղադրատարրերի: Սակայն տեղեկատվական դարաշրջանից անցումը «բանականության դարաշրջանի» (*age of intelligence*<sup>14</sup>), որն ուղեկցվում է քվանտային հաշվարկներով, ժամանակի ու տարածության պարամետրների վրա ազդեցության ներուժ ունեցող տեխնոլոգիաների ի հայտ գալով, նոր տեսակի նյութերի ստացման և էներգիայի նոր աղբյուրների հայտնագործման, ինչպես նաև մարդկային ունակությունների և թվային տեխնոլոգիաների փոխսերտաձման իրողություններով, հնարավորություն է տալիս կանխատեսելու, որ աշխարհը շուտով ականատես է լինելու բոլորովին այլ տեսակի պատերազմների:

Վերջին մի քանի տարիների ընթացքում արհեստական բանականութե-

<sup>14</sup> Stu Mike Bai. Huawei AI: Computing in the age of intelligence, 9 April 2020 (<https://www.huawei.com/en/voice-of-huawei-europe/huawei-ai-computing-in-the-age-of-intelligence>):

յան աննախադեպ զարգացման շնորհիվ նա շատ ավելի է նմանվել մարդու բանականությանը, քան կարելի էր ենթադրել այն տեխնոլոգիական լավատեսության շրջանակներում, որով համակված էին արհեստական բանականության ամենահաջողակ նախագծողները: Հիմա նույնիսկ դժվար է ընդունել, որ արհեստական բանականությունը երբեմն կարողանում է գերազանցել մարդու ունակությունները պատկերների և խոսքի ճանաչման, լեզուների թարգմանության, մարդկային հույզերի գնահատման, հիվանդությունների ախտորոշման, նույնիսկ երաժշտական ու չափածո ստեղծագործությունների հեղինակման գործում:

Ընդունված է տարբերակել արհեստական բանականության երեք տարատեսակ՝ նեղ ԱԲ (*Artificial Narrow Intelligence*), սովորական ԱԲ (*Artificial General Intelligence*) և արհեստական գերբանականություն (*Artificial Super Intelligence*): Առաջին տեսակը ներկայումս տարբեր համակարգերում կիրառվող արհեստական բանականությունն է և բնորոշվում է նկատելիորեն սահմանափակ պարամետրներով<sup>15</sup>: Մարդկային ունակությունների հետ կարող է համեմատվել սովորական արհեստական բանականությունը, իսկ երրորդ տեսակը, ըստ կանխատեսումների՝ արդեն կգերազանցի դրանց ունակությունները: Ռազմական ոլորտում առավելապես «նեղ» արհեստական բանականության կիրառության այժմեական փաստերի և օրինակների մասին մենք արդեն խոսել ենք մեր ավելի վաղ հրապարակումներում և որպես ռազմական նպատակներով ԱԲ կիրառման հիմնական ուղղություններ ներկայացրել ենք հետախուզությունը, լոգիստիկական համակարգերը, կիբեռտարածությունում ձեռնարկվող գործողությունները, զինված ուժերի կառավարումը, ինքնակառավարվող և կիսաինքնակառավարվող մեքենաները, պատերազմական իրավիճակի խաղարկումն ու վարժանքները<sup>16</sup>: Սույն հետազոտության շրջանակներում ներկայացնելու ենք կանխատեսումներ, թե ինչ զարգացում կարող են ունենալ արհեստական բանականությամբ հագեցած ՍՌՏ համակարգերը, և ինչ տիպի նոր պատերազմների կարող է դա հանգեցնել:

Վերջին ժամանակներում ռազմական նախանշանակման արհեստական բանականության կիրառմանը նվիրված աշխատություններում կարմիր գիծն այն է, որ պետությունների զինված ուժերը շարունակելու են իրականացնել նույն գործառնությունները՝ ընդհանուր առմամբ պահպանելով ռազմական գործողությունների տրամաբանությունը, պարզապես դրանք արդեն կատարվելու են արհեստական բանականության շնորհիվ կատարելագործված նոր

<sup>15</sup> Տես *Алексей Тарасов*. Бесчеловечные эксперименты: на поле боя выходят роботы. «Известия», 8 ноября 2019 (<https://iz.ru/939693/aleksei-tarasov/beschelovechnye-eksperimenty-na-pole-boia-vykhodiat-roboty>):

<sup>16</sup> Տես *Գ. Հարությունյան*, Արհեստական բանականության կիրառման համաշխարհային փորձից. հեռանկարներ ռազմական ոլորտի համար: «ՀԲ», 2020, հմ. 1:

սպառազինություններով և նոր հնարավորություններին համապատասխանեցված հայեցակարգի շրջանակներում<sup>17</sup>: Սակայն պետք է նկատենք, որ նոր անվտանգային ու պաշտպանական համակարգերի կերտման այս տրամաբանությունը կարող է չլինել համաչափ այն բեկումնային փոփոխություններին, որոնք իրականում կարող են տեղի ունենալ ռազմական ոլորտ արհեստական բանականության ներթափանցման հետևանքով: Ընդ որում, «արտասովորության տարրերի» գերակշռությամբ պայմանավորված հնարավոր փոփոխությունների վերաբերյալ կանխատեսումներում հաճախ դժվար է լինելու սահմանազատել, թե որտեղ է ավարտվում գիտական ֆանտաստիկան և սկսվում իրականությունը: Համենայն դեպս, արհեստական բանականության ռազմական կիրառման մասին դատողություններում առաջ շարժվելու համար անհրաժեշտ է լինելու դուրս գալ մինչ այժմ ընդունված պայմանականությունների շրջանակից և հայացք զցել դեպի ապագան: Այս մոտեցման համատեքստում նոր տեսակի պատերազմները և դրանց հավանական զարգացումները ներկայացնենք՝ ելակետ ընդունելով («Նեյշնլ ինտերեստ» *“The National Interest”*) պարբերականի 2020 թ. հունիսի համարում հրատարակած «ապագա պատերազմների գերցանցային տեսլականը»<sup>18</sup>: Դրանում ներկայացվում է ռազմական գործողություններից մի փոքրիկ դրվագ. անօդաչու թռչող ապարատը, հայտնաբերելով լեռնաշղթայի հետևում թաքնված հակառակորդի ագրեսիվ ակտիվությունը, այդ տեղեկությունը փոխանցում է ոչ մեծ հետախուզական շարասյանը և ռոբոտացված սպառազինության համակարգերին: Այդ ռոբոտ-սպառազինությունները, հաջողությամբ հաղթահարելով բարդ տեղանքը և հակառակորդի տարածքում տարաշարժեր կատարելով, զբաղեցնում են հակահարձակման համար նպաստավոր դիրքեր: Զինվորականները, որոնց հիմնական գործառույթը համակարգերի կառավարումն է, ուղեվարական ու նշանառվական տվյալներ են ստանում «ցանցային» ռոբոտ-սպառազինություններից ու հետախուզությունից և ըստ դրանց որոշում են, թե ինչ կառավարվող և ինքնակառավարվող մեքենաներ ու ռազմական տեխնիկա պետք է ներգրավել գործողությունում: Այդպիսով լավ տեղեկացված և լրացուցիչ միջոցներով սպառազինված ուժերը հնարավորություն են ստանում հակառակորդի մարտական միավորների ուղղությամբ բացելու ճշգրիտ կրակ՝ կանխելով նրանց հարձակումը:

Սա «ապագայի պատերազմներում» օդային և ցամաքային ռոբոտացված համակարգերի ցանցային փոխգործության պարզեցված մոդել է, որի հիմքում արհեստական բանականությամբ զինված ինքնակառավարվող մեքենաների աշխատանքն է: Ներկայումս նման փոխգործության արդյունավե-

<sup>17</sup> Տես *Ստեֆան դե Սպիեգելեիռ և ուրիշներ*, Նշ. աշխ., էջ 66:

<sup>18</sup> Տես *Kris Osborn*. Here Is the Army's Hyper-Networked Vision of Future War. "The National Interest", 2 June 2020 (<https://nationalinterest.org/blog/buzz/here-armys-hyper-networked-vision-future-war-159446>):



տությունը մեծացնելու համար մշակված ալգորիթմների կատարելագործման աշխատանքներ են կատարվում ԱՄՆ-ի Կառնեգի-Մելոնի համալսարանում<sup>19</sup>: Նկատենք, որ միայն անօդաչու թռչող ապարատների միջև «բանական» փոխգործության մոդելները (օրինակ՝ ԱԹԱ-ների երամի (*UAV Swarm*) մարտավարությունը) վաղուց են մշակվել և այժմ լայնորեն կիրառվում տարբեր պետությունների զինված ուժերում: Տպավորիչ է հատկապես 2016 թվականին ԱՄՆ-ի ցուցադրած անօդաչուների երամը (բաղկացած 103 հատ 290 գրամ կշռող միկրո- ԱԹԱ-ներից՝ արծակված Ֆ/Ա-18 (*F/A-18 "Super Hornet"*) կործանիչներից), որը ցուցաբերում էր երամին հատուկ այնպիսի վարքային օրինաչափություններ, ինչպիսիք են տեղանքին հարմարվողականությունը, ինքնակազմակերպումը, ինքնավերականգնումը և խմբայնությունը (կոլեկտիվ վարք)<sup>20</sup>: Օդային և ցամաքային ինքնակառավարվող մեքենաների միջև փոխգործությունը ավելի մեծ հնարավորություններ է տալիս հարմարվելու ռազմական գործողությունների տարբեր սցենարներին, նախատեսում է տարբեր միավորումների ավելի ձկուն փոխակերպումներ և ռազմադաշտում ապահովում է մեծ կենսատոկունություն:

Սակայն ԱԲ հիմքով նոր սպառազինությունների ու նոր մարտավարությունների նախագծման աշխատանքներն իտերատիվ գործընթաց են, և խտերացիայի ամեն հաջորդ փուլում հնարավոր են անհավատալի նորամուծություններ: Օրինակ՝ ցամաքային ռոբոտացված համակարգերի ինքնաքողարկման, բարդ տեղանքում տեղաշարժվելու և տարբեր տեղանքային պայմաններում կենսունակությունը պահպանելու համար ներկայումս տարբեր գիտահետազոտական կենտրոններ ու լաբորատորիաներ աշխատում են կենսամիմետիկայի նվաճումները ռազմական նպատակներով օգտագործելու ուղղությամբ: Այս առնչությամբ հետաքրքրական են հատկապես ԱՄՆ-ի Հյուսիսարևելյան համալսարանի քիմիական կենսաբանության բաժնի գիտնականների հետազոտությունները, որոնք հնարավոր կդարձնեն ութտունուկներին և այլ գլխտանիների, քամելեոններին նմանարկող (անհետացող, գույնը բնական միջավայրին համապատասխանեցնող) քողարկման տեխնոլոգիաների մշակումը<sup>21</sup>: Նման կենսառոբոտների կամ դրանց նմանությամբ ապագայի «զինվորների» ստեղծման համար ներկայումս և առաջիկայում պահանջվելու են նոր կառուցվածքային նյութեր՝ օժտված թեթև քաշով, սակայն մեծ դիմացկունությամբ, ամրությամբ և ձկունությամբ: Ընդ որում, նմանատիպ նյութերի ստացման համար նույնպես հիմք են ծառայելու կեն-

<sup>19</sup> Տես նույն տեղում:

<sup>20</sup> Տես *Aaron Mehta*. Pentagon Launches 103 Unit Drone Swarm. 10 January 2017 (<https://www.defensenews.com/air/2017/01/10/pentagon-launches-103-unit-drone-swarm/>):

<sup>21</sup> Տես *Rebecca Northfield*. Military by Nature: Biomimetic Inspiration for Future Army, 7 November 2018 (<https://eandt.theiet.org/content/articles/2018/11/military-by-nature-biomimetic-inspiration-for-future-armies/>):

դանի բնության մեջ հանդիպող կենսաբանական համակարգերը, որոնց ձևի ու կառուցվածքի կայունությունը պայմանավորված է ինքնավերականգնման անընդհատությամբ ի հաշիվ բնական միջավայրին դրանց հարմարվելու, կառուցվածքն ինքնուրույնաբար փոխելու և ինքնակատարելագործվելու ունակության<sup>22</sup>: Այսօր արդեն ինքնավերականգնվող նյութերի, պոլիմերների և բաղադրյալ նյութերի արտադրության ոլորտում կան մեծ գիտական նվաճումներ, որոնք նաև կիրառություն են ստացել ժամանակակից ռազմաարդյունաբերական արտադրանքում<sup>23</sup>:

«Նոր սերնդի» սպառազինությունների առավել կարևոր պարամետրներից մեկը, որը լինելու է նաև դրանց «բանականության» և ինքնուրույնության հիմնական երաշխիքը, էներգիա կուտակելու, անգամ արտադրելու ունակությունն է: Ստացվում է, որ առաջիկա տարիներին ռազմական տեխնոլոգիաների արտադրությունում էական հաջողությունների կարող են հասնել այն երկրները, որոնք կկարողանան մշակել և արտադրել էներգիայի էժան, պարփակ, բայց համեմատաբար մեծ արտադրական կարողությամբ աղբյուրներ կամ նոր տիպի կուտակիչներ: Այս ուղղությամբ մեծ հաջողությունների հասել են դարձյալ ԱՄՆ-ի ռազմաարդյունաբերական ընկերությունները, որոնք ռազմական ռոբոտ-մեդուզայի համար օգտագործում են հիդրոդինամիկ էներգիան, ինչը հնարավորություն է տալիս ապահովելու ռոբոտի ինքնուրույն աշխատանքը մի քանի ամսվա ընթացքում<sup>24</sup>: Ռոբոտացված սպառազինությունների ինքնուրույնությունն ապահովելու նպատակով լուրջ գիտական նվաճում կարող է դառնալ միջուկային էներգիայի՝ մարդու համար անվնաս և փոքր չափեր ունեցող աղբյուրների օգտագործումը<sup>25</sup>:

Այնուամենայնիվ, թեև գիտությունը կարող է անհավատալի հաջողությունների հասնել նոր տեսակի սպառազինությունների ինքնակառավարման, հարվածային ուժի, դիմացկունության բարելավման ուղղությամբ, ժամանակակից և ապագա պատերազմներում մարդը շարունակելու է պահպանել իր առանցքային դերը: Այդ իսկ պատճառով էլ ապագայի պատերազմները հաճախ բնորոշվում են որպես «կենտավրոսների\* պատերազմ»<sup>26</sup>, այն նկատա-

<sup>22</sup> Stu *Ulrike G. K. Wegst, Hao Bai, Eduardo Saiz, Antoni P. Tomsia, Robert O. Ritchie*. Bioinspired structural materials. "Nature Materials", 2014, Vol. 14, N 1:

<sup>23</sup> Stu *Y. C. Yuan, T. Yin, M. Z. Rong, M. Q. Zhang*. Self healing in polymers and polymer composites. Concepts, realization and outlook: A review. "Express Polymer Letters", 2008, Vol. 2, N 4:

<sup>24</sup> Stu *Spencer Ackerman*. Video: This Massive Jellyfish Is Really an Aquatic Spy Robot, 28.03.2013 (<https://www.wired.com/2013/03/robot-jellyfish/>):

<sup>25</sup> Stu *Альберт Ефимов*. Области прорывных исследований в робототехнике. «Control Engineering Россия», 2013, № 4:

\* Հունական դիցաբանության մեջ հայտնի կիսամարդ-կիսաձի առասպելական կերպար:

<sup>26</sup> Stu *Peter Layton*. Algorithmic Warfare. Applying Artificial Intelligence to Warfighting. Commonwealth of Australia 2018, P. 24:

ռումով, որ դրանք լինելու են մարդու և մեքենաների արդյունավետ համագործակցության հարթակ: Այս առումով գործնականում հիմնական խնդիրներից մեկը կլինի մարդու և արհեստական բանականության այն օպտիմալ հարաբերակցության որոշումը, որը հնարավորություն կտա լավագույնս օգտագործելու դրանցից յուրաքանչյուրի հատկանիշները: Այլ կերպ ասած՝ նոր տեխնոլոգիաների ի հայտ գալը նկատելիորեն կփոխի պատերազմներում ցուցաբերվող ռազմավարական ու մարտավարական մոտեցումները՝ դրանք պայմանավորելով նաև մարդ-մեքենա մարտական ստորաբաժանումների կազմակերպվածքով և դրանց հնարավորությունների օբյեկտիվ գնահատականով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՐԵՆ

Մեր կարծիքով, և դա կարելի է փաստել՝ հղում կատարելով ՀՀ «Պաշտպանության մասին» օրենքին և Հայաստանի ռազմական դոկտրինին, Հայաստանը 1994 թվականի զինադադարից հետո առաջնորդվել է մեկ հիմնարար ուղենիշով՝ զրկել հակառակորդին հաղթելու հնարավորությունից, այսինքն՝ հիմնական նպատակը հնարավոր պատերազմում եղել է ոչ թե հաղթանակը, այլ ամեն գնով «հակառակորդին թույլ չտալ հաղթելը»: Դա կարելի է եզրակացնել նաև վերլուծելով Հայաստանի ձեռք բերած սպառազինությունների տեսակները: Նոր «բանական» դարաշրջանին անցումը պետք է դառնա այն բեկումնային ժամանակահատվածը, երբ Հայաստանը վերջապես կիրառվի «հակառակորդին հաղթանակից զրկելու» գաղափարից և կկողմնորշվի դեպի «իր հաղթանակի համար հնարավորությունների ստեղծում»\*:

Հակամարտող երկրների ռազմական բյուջեների անհամաչափությունը պետք է հայաստանյան մասնագետներին ստիպի որոնել ու ստեղծել հակառակորդին գերազանցելու լուրջ հնարավորություններ: Գոյություն ունի ևս մի կարևոր խնդիր. արդեն այսօր Հայաստանն ունի ռազմական անձնակազմի հավաքագրման խնդիր: Ժողովրդագրական ցուցանիշների վերլուծությունը հուշում է, որ ապագայում այդ խնդիրն ավելի հրատապ է դառնալու: Ուստի, առաջագծի ռոբոտացումը կարող է Հայաստանի համար դառնալ նաև այդ հրատապ խնդրի լուծում: Եվ վերջին հանգամանքը: Ադրբեջանն իր 40 միլիարդանոց «Նավթային հիմնադրամով» և Թուրքիայի աջակցությամբ, ամենայն հավանականությամբ, մեծ հնարավորություններ կունենա արագորեն համալրելու իր զինանոցը նաև նոր տիպի սպառազինություններով: Հայաստանը, թերևս, այլ ելք չունի, քան դրանց հայրենական արտադրության կազ-

---

\* Չնակերպումները նմանեցված են համաշխարհային նույնօրինակ միտումների վերաբերյալ Ֆիցսիմոնսի դատողություններին (տես *M. Fitzsimmons. The False Allure of Escalation Dominance. "War on the Rocks", 16 November 2017* (<https://warontherocks.com/2017/11/false-allure-escalation-dominance/>)):

մակերպումը: Ընդ որում, անհրաժեշտ է ոչ թե ընդօրինակել այլ պետությունների նորամուծությունները, այլ սպառազինությունների համաշխարհային շուկայի «բանական» հատվածում ձևավորել հստակ «ազգային» առանձնահատկություններ, որոնք մրցունակության լուրջ հայտ կներկայացնեն այլ պետությունների: Մենք այդ ներուժն ունենք:

## **ВОЕННАЯ ПРОМЫШЛЕННОСТЬ**

### **ХАРАКТЕР БУДУЩИХ ВОЙН КАК ОРИЕНТИР РАЗВИТИЯ ВОЕННОЙ ПРОМЫШЛЕННОСТИ**

*Գ. Յ. ԱՐՄԵՆՅԱՆ, կандидат экономических наук, доцент, начальник Группы стратегических игр и моделирования Центра региональных стратегических исследований ИНСИ НИУО МО РА*

#### **РЕЗЮМЕ**

Очевидно, что в современных условиях характер войны может значительно трансформироваться. Переломным в этом отношении может оказаться широкое применение искусственного интеллекта, которое фактически объединяет все технологии четвертой промышленной революции (индустрии 4.0). В результате неизбежности гонки нового этапа вооружений будет сложно принимать участие в каких-либо боевых действиях с обычными вооружениями, а в будущем это станет и вовсе невозможным. Это обстоятельство не должно быть игнорировано государствами, вовлеченными в военные действия в разных точках мира. В статье представлены рассуждения о характере современных и будущих войн, некоторые соображения относительно новой армяно-азербайджанской войны, а также об основных тенденциях на мировом рынке вооружений, которые обусловлены новыми технологическими изменениями и требованиями новых видов войны. В контексте развития оборонно-промышленного потенциала было предложено сконцентрировать усилия не только на искусственном интеллекте и робототехнике, но и на биомиметике, производстве композитных материалов, новых технологиях производства и хранения альтернативой энергии.

**MILITARY INDUSTRY**

**THE NATURE OF FUTURE WARS AS A GUIDELINE  
FOR MILITARY INDUSTRIAL DEVELOPMENT**

*G. E. HARUTYUNYAN, PhD in Economics, Associate Professor, Head,  
Strategic Gaming and Modeling Group, Center for Regional Strategic Studies,  
INSS, NDRU, MOD, RA*


SUMMARY

Obviously in modern conditions the nature of war can significantly transform. In this regard the extensive use of Artificial Intelligence, virtually incorporating all the technologies of the Fourth Industrial Revolution (Industry 4.0), can be game-changing. Due to the fact that the new stage of the arms race is inevitable, taking part in any combat operations with conventional weapons will be difficult, and in future it will become even impossible. This circumstance should not be ignored by states involved in military actions in different parts of the world. The article presents observations on the nature of modern and future wars, some considerations on the new Armenian-Azerbaijani war, as well as the main trends on the global arms weapons market, caused by new technological changes and requirements of new types of warfare. In the context of the development of the defense industrial capacity, it was suggested to concentrate efforts not only on Artificial Intelligence and robotics, but also on biomimetics, production of composite materials, new technologies of production and storage of alternative energy.

**«ՄԵԾ ՏԿՅԱԼՆԵՐԻ» ԿԻՐԱՌՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՈԱԶՄԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՐԴԻՎԱԿԱՆԱՑՄԱՆ  
ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆ**

*Ժ. Պ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի  
և իրավունքի ինստիտուտի հայցորդ*

«Մեծ տվյալներ»\* տերմինը հարաբերակա-  
նորեն նոր է և արտահայտում է այն տվյալների  
բազմությունը, որի ծավալը գերազանցում է  
տվյալների ստանդարտ շտեմարանների չա-  
փերն ըստ տեղեկույթի մուտքագրման, պահ-  
ման, կառավարման և վերլուծության հնարա-  
վորությունների: Այն մի քանի տրիլիոն գետա-  
բայթ ծավալով, տարբեր ձևաչափերով հավաք-  
վող և պահվող, տարբեր կիրառություն ունեցող  
հավաքական տեղեկույթն է, որը փոփոխության  
է ենթարկվում նույնքան արագ, որքան արագ  
կուտակվում է: Լույսի արագությամբ տարածվող տեղեկությամբ իրակա-  
նությունում թվային տեխնոլոգիաների զարգացմանը զուգընթաց ամենա-  
տարբեր բնագավառներում կուտակվող մեծածավալ տեղեկույթը պետք է  
անհապաղ տեսակավորել, պահպանել, մոդելավորել և վերլուծել<sup>1</sup>:



Հավաքված հսկայածավալ տվյալների ճշգրիտ և արժանահավատ վեր-  
լուծություններ կատարելու կարևորությունը շեշտվում է նաև ուժային կա-  
ռույցներում: Ստացված մեծ տվյալների ճշգրիտ կիրառումը մեծագույն բա-  
րիք է տարաբնույթ ոլորտների զարգացման և որոշումների կայացման հա-  
մար, սակայն դրանց անտեսումը կամ սխալ կիրառումը կարող է դառնալ մեծ  
չարիք և ունենալ կործանարար հետևանքներ: Օրինակ՝ պատշաճ կերպով  
կառավարվող մեծածավալ տվյալներն օգտակար են ռազմական ոլորտում  
հատկապես հետախուզության համար. հնարավոր չէ արդյունավետ ռազմա-  
կան գործողություններ վարել՝ առանց իմանալու, թե երբ, որտեղ և ինչ է ան-  
հրաժեշտ օգտագործել, ուստի ռազմական բնագավառի մեծ տվյալները օգ-  
տակար են պաշտպանության ոլորտում ու ՋՈՒ-ում որոշումներ կայացնող

\* Անգլերեն *“Big Data”* տերմինն է, որը հայերեն թարգմանվել է «Մեծ տվյալներ»: Հասկացությունը լայնորեն սկսել է կիրառվել 1990-ականների սկզբից:

<sup>1</sup> *Stu James Manyika, Michael Chui, Brad Brown, Jacques Bughin et al.* Big data: The next frontier for innovation, competition, and productivity. McKinsey Global Institute Report. “McKinsey Digital”, 1 May 2011 (<https://www.mckinsey.com/business-functions/mckinsey-digital/our-insights/big-data-the-next-frontier-for-innovation>):

մարմինների համար: Խոսքը, իհարկե, «մութ տվյալների»<sup>2</sup> մասին<sup>2</sup> չէ, որն առանձին վերլուծության առարկա է: Մեծ տվյալների վերլուծությամբ ի հայտ բերված և ֆետիշացված պատահական համահարաբերակցական կապերը<sup>3</sup>, պարբերական սխալները և գործոնների ոչ ճշգրիտ համադրումը կարող են ռազմական համակարգում հանգեցնել այնպիսի կոպիտ մարտավարական ու ռազմավարական սխալների, որոնց հետևանքով կարող է ընդհուպ ձախողվել ամբողջ ծեռնարկված ռազմական գործընթացը:

Այնուամենայնիվ, մեծ տվյալների հավաքումը և պաշտպանական ոլորտում կիրառումը հաճախ բանավեճերի առիթ են դառնում: Վերջին շրջանում աղմուկ բարձրացրեց բաց աղբյուրներից մեքենայական ուսուցման հարթակի օգտագործման միջոցով տեսողական տվյալների հավաքումը: Տվյալ դեպքում խոսքը անօդաչու թռչող ապարատների՝ ԱԹԱ-ների մասին էր, որոնց կիրառման դեմ պայքարը ոչ այնքան հետախուզական տվյալների հավաքման, որքան հետագա պլանավորվող ագրեսիայի համար մեքենայական ուսուցման հնարավոր օգտագործման դեմ էր: Այս խնդրին Հայաստանի Հանրապետությունը բախվեց 2020 թվականի սեպտեմբերի 27-ի Արցախյան պատերազմի առաջին իսկ օրերից. հետախուզական ԱԹԱ-ներից ստացված տվյալներն անմիջապես սկսեցին կիրառվել ռազմական ագրեսիվ գործողություններում, և դրանց շնորհիվ հակառակորդն էական առավելություն ստացավ հետագա առաջխաղացման համար<sup>4</sup>: Չնայած միջազգային վերլուծական հարթակները դեռևս նախորդ տարիներից շրջանառում էին, որ ՀՀ հարևան պետությունները, այդ թվում՝ հակառակորդ, կիրառում են ԱԹԱ-ները ոչ միայն զուտ հետախուզական, այլև բուն ռազմական գործողություններում<sup>4</sup>, այնուամենայնիվ մեր պետությունն անպատրաստ էր նորամուծական տեխնոլոգիաների դեմ պայքարում, ինչի արդյունքը եղավ հայկական կողմի բավական մեծ թվով կենդանի ուժի կորուստը: Իսկ այն միջոց, թե նորամուծական տեխնոլոգիաների կիրառումը միայն առաջադեմ երկրներին է հասու,

<sup>2</sup> «Քինդի» (*"Kyndi"*) ընկերության գործադիր տնօրեն Ռայան Ռեյչը հարցազրույցներից մեկում «մութ տվյալներ» հասկացության մասին խոսելիս նշում է, որ այն տարբեր լեզուներով կամ տարբեր բարբառներով ծայրաստիճան տարանջատված տեքստային տեղեկույթ է: Դրա հետ կապված մարտահրավերները պետք է առանձին վերլուծել և ձևավորել անհրաժեշտ պատկերացում, թե ինչպես վարվել այդ տվյալների հետ, քանի որ դրանք պարունակում են բավական կարևոր բովանդակություն:

<sup>3</sup> Տես *Daniel Faggella*. Data Challenges in the Defense Sector. "Emerj", 19 December 2018 (<https://emerj.com/ai-podcast-interviews/data-challenges-in-the-defense-sector/>):

<sup>4</sup> Տես *Paul B. Symon, A. Tarapore*. Defense Intelligence Analysis in the Age of Big Data. "Joint Force Quarterly 79", 4th Quarter 2015 ([https://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/jfq/jfq-79/jfq-79\\_4-11\\_Symon-Tarapore.pdf](https://ndupress.ndu.edu/Portals/68/Documents/jfq/jfq-79/jfq-79_4-11_Symon-Tarapore.pdf)):

\*\* Կիրառվում էին նաև հարվածային ԱԹԱ-ներ գերձզգրիտ խոցման հնարավորությամբ:

<sup>4</sup> Տես *J. Walker*. Unmanned Aerial Vehicles (UAVs) – Comparing the USA, Israel, and China. "Emerj", 3 February 2019 (<https://emerj.com/ai-sector-overviews/unmanned-aerial-vehicles-uavs/>):

աստիճանաբար ցրվում է\*։ Դրանք արդեն լայնորեն կիրառվում են աշխարհի մոտ 75 պետությունների զինանոցում։ Ի դեպ, վերլուծությունները ցույց են տալիս, որ սերտ կապ կա պետության ռազմական ծախսերի և կառավարության գործարկած արհեստական բանականությամբ հսկողության համակարգերի կիրառման միջև. աշխարհի ամենաշատ ռազմական ծախսեր կատարող (եվնելով ընդհանուր ռազմական ծախսերից) 50 պետություններից 40-ը օգտագործում են արհեստական բանականությամբ հսկողության տեխնոլոգիաներ<sup>5</sup>։

Անկախ բոլոր քննադատություններից, արհեստական բանականության կիրառումը մեծ դեր ու նշանակություն է ստանում այդ թվում և զինվորական համակարգում։ Այն ակտուալ է հատկապես պաշտպանական գործընթացում, քանի որ ժամանակակից ռազմական գործողություններում տվյալների մշակման մասնագետները և վերլուծաբանները կարող են ավելի շատ կյանքեր փրկել, քան ցամաքային մարդուժը<sup>6</sup>, հատկապես, եթե վերջինս պաշտպանված չէ հակառակորդի կիրառած ժամանակակից միջոցներից։

Մեծ տվյալների վերլուծությունն անհրաժեշտ է ՋՈՒ-ի համակարգում առավել արդյունավետ որոշումների կայացման և նորամուծական լուծումների համար։ Այսօր տեղեկույթի աղբյուրները, ձևերը և հնարավորությունները ավելի ու ավելի են մեծանում, սակայն դրանք ճշգրիտ ու նպատակային չվերլուծելը կնշանակի ժամանակի ու միջոցների վատնում։

ԱՄՆ-ում, օրինակ, որոշումների ընդունմանն աջակցելու համար տվյալների օգտագործման մարտահրավերների մասին խոսելիս մի շարք վերլուծաբաններ և պետական պաշտոնյաներ պնդում են, որ տվյալների ավելի արդյունավետ կիրառման համար անհրաժեշտ է՝

1. Տվյալների հավաքման և կառավարման տեղեկատվական համակարգերի առկայություն,

---

\* Օրինակ՝ աշխարհի տարբեր պետություններում մի շարք ներկայացուցչություններ ունեցող «ԱյԲիեմ» (“IBM”) ընկերությունը ոչ պատահականորեն ԱՊՀ տարածաշրջանում պաշտոնապես ներկայացված է Ադրբեջանում, Ռեկրահայում, Ռեբբեկստանում և Ղազախստանում։ Ընկերությունը մի շարք լուծումներ է առաջարկում ռազմական հետախուզության համար (տես “Военная разведка” (<https://www.ibm.com/analytics/ru/ru/industry/government/defense-intelligence/#defense-solutions>)): «Սիսկո» (“Cisco”) ընկերությունը ևս առաջարկում է ռազմական ոլորտի արդյունավետ վերլուծության հնարավորություններ (տես “Cisco Army Solutions: Enhance Home Station Operations for Deployment Preparation” ([https://www.cisco.com/c/dam/en\\_us/solutions/industries/docs/gov/c22-525727\\_sOview.pdf](https://www.cisco.com/c/dam/en_us/solutions/industries/docs/gov/c22-525727_sOview.pdf))): Ի դեպ, ընկերությունը պաշտոնապես ներկայացված է ՀՀ-ում, սակայն տեղի կազմակերպությունն զբաղվում է միայն որոշ պրոդուկտների ծրագրային ապահովմամբ և մշակմամբ։

<sup>5</sup> Տես “Report: 75 countries use Artificial Intelligence to track citizens; IBM, Cisco among tech leaders”. “WRAL TechWire”, 18 September 2019 (<https://www.wraltechwire.com/2019/09/18/report-75-countries-use-artificial-intelligence-to-track-citizens-ibm-cisco-among-tech-leaders>):

<sup>6</sup> Տես *M. Haridas*. Redefining Military Intelligence Using Big Data Analytics. Scholar Warrior, 2015, PP. 72–78:



2. Տվյալների բավականաչափ ընդգրկունության և ճշգրտության ապահովում,

3. Տվյալների օգտագործում որոշումների կայացման գործում<sup>7</sup>:

Մեծ տվյալների հաշվողական վերլուծությունները կարող են հրամանատարական կազմին տրամադրել այնպիսի տեղեկություններ, որոնք հնարավորություն կտան նրանց օպերատիվ պլանավորման համար որոշելու «թե՞ծ կետերը»: Մեքենայական ուսուցման կիրառմամբ մեծ տվյալների վերլուծության հնարավորությունը որպես նորամուծական գործիք, ապահովում է այն հանգամանքը, որ ոչ մի փակ տեղեկություն չի վրիպի հրամանատարի աչքից, որքան էլ տվյալների համախումբը հսկայածավալ և բազմազան լինի:

Ներկայումս հետախուզական համակարգերը կատարելագործվում են՝ կիրառելով բոլոր նորամուծական հնարավոր միջոցներն ու տեխնոլոգիական լուծումները, այդ թվում՝ արհեստական բանականության ու մեքենայական ուսուցման մեթոդները: Խոսելով ԱՄՆ հետախուզության մասին՝ հարկ է նշել, որ ամերիկյան զինվորականները շարունակում են հավաքել հետախուզական տվյալներ ԱՄՆ հետախուզական համայնքի (“IC”- Intelligence Community) հետ միասին տարբեր բնագավառներից, որոնք պայմանականորեն անվանում են «INT»-եր: Հետախուզական համայնքի կազմում ներառված են 17 կազմակերպություններ, բայց դրանց ուղիները հատվում են ըստ հետևյալ բնագավառների՝ դառնալով առանձին միջգիտակարգային ուղղություններ.

- *Մարդկային հետախուզություն (“HUMINT” - Human Intelligence),*
- *Աշխարհատարածական հետախուզություն (“GEOINT” - Geospatial Intelligence),*
- *Ազդանշանային հետախուզություն (“SIGINT” - Signals Intelligence),*
- *Բաց աղբյուրների հետախուզություն (“OSINT” - Open Source Intelligence)<sup>8</sup>,*
- *Պատկերային հետախուզություն (“IMINT” - Imagery Intelligence),*
- *Չափողական հետախուզություն (“MASINT”-Measurement and Signature Intelligence)<sup>9</sup>,*
- *Բազմաչափ հետախուզություն (“Multi-INT”-Multi-Intelligence):*

**Մարդկային հետախուզությունը** տվյալների հավաքումն է մարդկանց

<sup>7</sup> Stu M. Schwartz. Using Data to Improve Defense Acquisitions: Background, Analysis, and Questions for Congress. Congressional Research Service 7-5700, 5 January 2016 (<https://fas.org/sgp/crs/natsec/R44329.pdf>):

\* “Intelligence” բառի առաջին վանկի (*INT*) համադրումն այն աղբյուրի հետ, որից ստացվում են տվյալները:

<sup>8</sup> Stu M. Abadicio. Big Data in the Military – Preparing for AI. “Emerj”, 8 May 2019 (<https://emerj.com/ai-sector-overviews/big-data-military/>):

<sup>9</sup> Stu Heather J. Williams, Ilana Blum. Defining Second Generation Open Source Intelligence (OSINT) for the Defense Enterprise. RAND Corporation. Santa Monica, 2018 ([https://www.rand.org/content/dam/rand/pubs/research\\_reports/RR1900/RR1964/RAND\\_RR1964.pdf](https://www.rand.org/content/dam/rand/pubs/research_reports/RR1900/RR1964/RAND_RR1964.pdf)):

հետ անմիջական կապի միջոցով: Տեղեկույթը ստանում է փաստաթղթերի, լուսանկարների, թվային ֆայլերի կամ այլ ձև, որոնք գաղտնի կերպով ձեռք են բերվել ոչ պաշտոնական ուղիներով կամ բաց աղբյուրներից՝ դիվանագիտական ու հյուպատոսական անձնակազմի, ինչպես նաև արտասահմանյան պաշտոնատար անձանց հետ լիազորված հաղորդակցության միջոցով: Զինվորականները կարող են նաև հետախուզական տեղեկություններ ստանալ հակառակորդի հարցաքննության կամ ճանապարհորդների հարցումների միջոցով\*։ Որոշ մարդիկ հետախուզության այս տեսակը նմանեցնում են լրտեսությանը: Այդ պնդումը մեծամասամբ ճշմարիտ է, քանի որ լրտեսները շարունակում են մեծ դեր խաղալ հետախուզական տվյալների հավաքման գործընթացում, չնայած նրանք իրենց գործունեությամբ ավելի շատ համալրում են մյուս միջգիտակարգային ուղղությունները. օրինակ՝ որպես մարդու հետ շփման արդյունք կարող են ձեռք բերվել այնպիսի կողեր, որոնք կարևոր տեղեկությունների հեռավար հասանելիություն են տրամադրում ազդանշանային հետախուզության (*“SIGINT”*) օպերատորներին:

Արհեստական բանականության վրա հիմնված ծրագրային ապահովումը կարող է հատկորոշել, համակարգել և վերլուծել մարդկային հետախուզության տվյալները: Ներկայումս այդպիսի մի համակարգ է «Ռեյթեոն» (*“Raytheon”*) ընկերության «Ֆոքսթեն» (*“FoXTEN”*)<sup>10</sup> ծրագրային ապահովման համակարգը:

**Աշխարհատարածական հետախուզությունը** օդում, ջրում և ցամաքում արվող լուսանկարներից, տեսանյութերից և այլ տեսողական միջոցներից տվյալների հավաքումն է: Ռազմական տեսակետից արժեքավոր է, քանի որ այն ապահովում է օբյեկտների և գործողությունների ճշգրիտ տեղակայումը, հնարավորություն տալիս մեկնաբանելու դրանց նշանակությունը և ռազմական որոշումների համար հիմք է ծառայում: Տեսողական տվյալները հաճախ ստացվում են արբանյակներից, ԱԹԱ-ներից, ինքնակառավարվող ստորջրյա տրանսպորտային և այլ միջոցներից: Շատ դեպքերում այս տեսակի հետախուզության տվյալները տարբեր աղբյուրներից ստացված աշխարհատարածական տվյալների համադրումն են՝ իրավիճակի եռաչափ (3D), ներկայացման համար: Դրանք, իրենց հերթին, ներգրավվում են **բազմաչափ հետախուզության** (*«Multi-INT»*) տվյալներում: Վերջինս ենթադրում է մի քանի հետախուզական ուղղությունների համադրում, որոնցից ստացված վերլուծությունը խիստ արժեքավոր է ՁՈՒ-ի հրամանատարական կազմի համար, սակայն միայն այն դեպքում, եթե հավաստի, ճշգրիտ և արդիական է: Այնուամենայ-

\* Այս իմաստով վերլուծության բաց աղբյուրներ կարող են լինել, օրինակ՝ զբոսաշրջային թվային սոցիալական հարթակները՝ Tripadvisor.com, Booking.com և այլ ինֆորմացիոն աղբյուրներ, որտեղ գետեղվում են ճշգրիտ տեղանքային տվյալներ ինչպես տեքստային, այնպես էլ լուսանկարների ու տեսաձայնագրությունների միջոցով:

<sup>10</sup> Տես *“FoXTEN: Software for the Modern Soldier”* (<https://www.raytheon.com/sites/default/files/2018-02/foxten-datasheet.pdf>); նաև՝ *“Raytheon Technologies”* (<https://www.rtx.com/>); *“Raytheon Missiles & Defense”* (<https://www.raytheonmissilesanddefense.com/>):

նիվ, այս փուլում ծրագրային ապահովման համակարգերի հնարավորությունների, կապի արագության և հիշողության ծավալի մեծացմանը զուգընթաց վերլուծաբանները կանգնում են տվյալների գերբեռնվածության խնդրի առջև, որի կարգավորման համար անհրաժեշտ է հզորացնել արհեստական բանականության և մեքենայական ուսուցման ալգորիթմները: Սրանք կարող են վերլուծել և նկատել իրական վտանգներն ավելի արագ և մանրակրկտորեն, քան դա ի վիճակի են անելու անհատ օպերատորները: Այդպիսի մի նախագիծ է «Մեյվենը» (*“Project Maven”*)<sup>11</sup>, որն իր հերթին օգտագործում է «Թենզորֆլու» (*“Tensor Flow”*)<sup>12</sup> բաց էլքային կոդով մեքենայական ուսուցման հարթակը ԱԹԱ-ներից ստացված կանխատեսումային վերլուծության համար: Արհեստական բանականության զարգացման նախագիծը չերկարածվելու Գուգլի որոշումից հետո անգամ Պենտագոնը դիմել է սկսնակ «Էնդուրիլ Ինդասթրիզ» (*“Anduril Industries”*) ընկերությանը\*՝ ռազմական անօդաչու ապարատների համար սենսորային միաձուլման հարթակ մշակելու նպատակով:

**Ազդանշանային հետախուզությունը** հակառակորդի գործողությունների, պլանների և նպատակների մասին ազդանշանների և հեռարձակումների գաղտնալսման միջոցով ստացվող տվյալների հավաքումն է: Ազդանշանային հետախուզության վրա հիմնված տվյալները ստացվում են ամենատարբեր աղբյուրներից՝ հեռախոսագրույցներ, էլեկտրոնային նամակներ, ռադիոալիքներ, արբանյակային և անլար կապի միջոցներով տեղեկությունների փոխանցումներ, նույնիսկ ստեղնաշարի թրթռումներ: Այստեղ ամենակարևորը պատահական ազդանշանների տարափից արժեքավոր տեղեկություններ որսալն է: Բնականաբար, այս գործընթացը շատ ջանքեր է պահանջում, և տարօրինակ կլիներ, եթե նմանատիպ մեծ տվյալների վերլուծության համար չգործարկվեին արհեստական բանականությունն ու մեքենայական ուսուցումը: Չնայած ազդանշանային հետախուզությունը զինվորականներն ավելի շատ օգտագործում են իրադարձությունները կանխատեսելու համար, այնուամենայնիվ, այն հիմնականում պաշտպանական նշանակություն ունի: Շատ կարևոր է իմանալ թշնամու տեղակայման վայրը, մտադրությունները և կարողությունները՝ կանխելու ինչպես զինվորական կենդանի ուժի ու քաղա-

<sup>11</sup> Stu “Deputy Secretary Of Defense. 1010 Defense Pentagon. Washington, DC 20301-1010”, 26 April 2017 ([https://www.govexec.com/media/gbc/docs/pdfs\\_edit/establishment\\_of\\_the\\_awcft\\_project\\_maven.pdf/](https://www.govexec.com/media/gbc/docs/pdfs_edit/establishment_of_the_awcft_project_maven.pdf/)): “Maven” նախագիծը հայտնի է նաև որպես «Ալգորիթմային պատերազմի միջգործառնական թիմ»՝ AWCFT “Algorithmic Warfare Cross-Functional Team”։ Հիմնադրվել է 2017 թվականի ապրիլին: Տես նաև՝ “APACHE” (<https://www.apache.org/>):

<sup>12</sup> Տես «Сквозная платформа машинного обучения с открытым исходным кодом» (<https://www.tensorflow.org/>):

\* Ընկերության կայքի համաձայն “Lattice AI” հարթակի միջոցով օգտատիրոջը փոխանցվում է միայն վերջնական տեղեկատվությունը, ինչը թույլ է տալիս գերհզոր համակարգիչներին առանց «ինֆորմացիոն ֆերմաների» ծավալման և կառավարման կենտրոնի ստեղծման հաղթահարել բոլոր խնդիրները (տես “Anduril” (<https://www.anduril.com/>)):

քացիական կորուստները, այնպես էլ զինտեխնիկայի և պաշտպանական համակարգերի վնասները:

Առանձնացվում են ազդանշանային հետախուզության մի քանի ենթատեսակներ՝

- **Հաղորդակցության հետախուզություն** (“COMINT” - *Communication Intelligence*)՝ հաղորդակցության համակարգերի կիրառմամբ,
- **Էլեկտրոնային հետախուզություն** (“ELINT” - *Electronic Intelligence*)՝ ռադիոտեղորոշումային կայանների և սպառազինության համակարգերի կիրառմամբ,
- **Օտարածին սարքերի ազդանշանային հետախուզություն** (“FISINT” - *Foreign Instrumentation Signals Intelligence*)՝ մշակման կամ փորձարկման փուլում գտնվող անհայտ զինատեսակների համակարգերի կիրառմամբ:

**Բաց աղբյուրների հետախուզությունը** բաց և հասանելի աղբյուրներից ստացվող տվյալների հավաքումն է: Իհարկե, այդ աղբյուրները շարունակաբար փոփոխվում են, և բաց աղբյուրներից ստացված տվյալների վերլուծության մեթոդները ևս պետք է անընդհատ վերանայվեն՝ իրենց ակտուալությունը պահպանելու համար: Այդ խնդիրն ակնհայտ է հատկապես հիմա, երբ համացանցում օր օրի ի հայտ են գալիս նորանոր սոցիալական հարթակներ և ընդլայնվում են արդեն իսկ դասական դարձածները\*: Եթե մի ժամանակ բաց աղբյուրները հեռուստատեսային ալիքները, ռադիոն ու տպագիր մամուլն էին, ապա հիմա դրանց են ավելացել համացանցային աղբյուրները, որոնք, սակայն, ունեն նաև միմյանց կրկնօրինակելու խնդիր, հետևաբար մեծ տվյալների վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել այդ հանգամանքը՝ ֆիլտրելով աղբյուրները և հավանականային սխալի տոկոսը հաշվարկելով: Համացանցից ստացված մեծ տվյալների վերլուծությունն ամենախճճվածն է. դրանք տարբերվում են իրենց ձևով, տարածման արագությամբ ու վիրուսայնությամբ, բովանդակությամբ և նյութի մատուցման տոնայնությամբ, պլանավորված զանգվածային գործողություններով\*\* և այլ հատկանիշներով: Բաց աղբյուրների հետախուզության դեպքում խոսքը ինչպես կառուցավորված, այնպես էլ չկառուցավորված մեծածավալ տվյալների մասին:

Բաց աղբյուրների հետախուզության համար հաճախ կիրառվում է կոմերցիոն պատրաստի արտադրանքը<sup>13</sup>: Տարբեր առևտրային ընկերություն-

\* Օրինակ՝ Facebook սոցիալական հարթակի ակտիվ օգտատերերի թվաքանակը զերազանցում է 1,5 միլիարդ: 2020 թ. միայն սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որպես Արցախյան պատերազմին ուղեկցող «թվային մեդիա պատերազմների» և հետպատերազմական իրականության արդյունք, ՀՀ-ում թվիթեր (2006-ից ի վեր) և թեյլեգրամ (2013-ից ի վեր) հարթակների օգտատերերի թիվն ու ակտիվությունն աճեց մի քանի անգամ ավելի շատ, քան նախորդած տարիներին ընդհանուր վերջրած: Ի դեպ, վերը թվարկած բոլոր սոցիալական հարթակները ծառայում էին թե՛ ներքաղաքական, թե՛ արտաքին քաղաքականության և թե՛ հակառակորդի կիրառած քարոզչական մանիպուլյացիոն տեխնոլոգիաներում:

\*\* Ֆլեշմոբներ, «հաքթոններ», «թվիթթոններ» և այլ պլանավորված ակցիաներ ու արշավներ:

<sup>13</sup> Տես *S. Kulshrestha*. Big Data in Military Information & Intelligence. “IndraStra

մեր ցանկանում են հասկանալ և կանխատեսել սպառողների վարքագիծը՝ իրենց վաճառքի ծավալները մեծացնելու նպատակով: Այս մոդելների կիրառումը նպատակահարմար է նաև ռազմական ոլորտում՝ հասկանալու հակառակորդի վարքագիծը, նախասիրությունները, մտավախությունները և այլն: Հատկապես որ պետության համար ստացվող տվյալների աղբյուրների բաց լինելու հիմնավորմամբ այսպիսի վերլուծական հարթակներ ձեռք բերելը և շահագործելն իրատեսական է: ԶՈՒ-ում խիստ ակտուալ է ունենալ վերլուծաբանների այնպիսի թիմ, որոնք ի վիճակի կլինեն կատարելու տվյալների ճշգրիտ դասակարգում, բարդ և համակողմանի վերլուծություններ և իմաստավորել պատահականորեն ստացված համահարաբերակցական առնչությունները: Բաց աղբյուրների տվյալների ուսումնասիրության ժամանակ կարևոր է թիրախային լսարանի մանրակրկիտ ընտրությունը, թվային պրոֆիլների դեպքում՝ կեղծ և կրկնվող օգտատերերի հաշիվների ֆիլտրումը: Ծավալներից ելնելով այստեղ նույնպես օգնության են գալիս մեծ տվյալների վերլուծության մեքենայական ուսուցման հարթակները և արհեստական բանականության կիրառումը<sup>14</sup>:

**Պատկերային և չափողական հետախուզությունները** համակցվում են նախորդ տիպերի հետ և հազվադեպ են հանդես գալիս որպես առանձին ուղղություններ:

Այսպիսով՝ ստացվող մեծածավալ և տարաբնույթ տվյալները տեղեկատվական գերբեռնվածության իրական մարտահրավերներ են, որոնց համար արդյունավետ լուծումներ կարող են առաջարկել արհեստական բանականությունն ու մեքենայական ուսուցումը: Ակադեմիական հանրույթը և մասնավոր սեկտորը, կատարելով տեխնոլոգիական ոլորտի առաջընթացի համար ներդրումներ, կարող են այս հարցի խելամիտ լուծում գտնել: Սրանով, հասկանալի է, ապահովում են այս տեսանկյունից ԶՈՒ-ի արդիականացումը և հզորացումը:

Վերջապես, մեր պետության համար կարևոր օրակարգային հարց պետք է դառնա գիտակրթական և գիտահետազոտական սեկտորների ներուժի ու առանձնահատկությունների շահագործմամբ միջազգային գործընկերային փորձի փոխանակման հարթակի ստեղծումը արտասահմանյան մասնավոր ընկերությունների հետ համատեղ, որոնք կոմերցիոն նպատակներով զբաղվում են նորամուծական տեխնոլոգիաների փորձարկման և գործարկման հիմնահարցերով: Փորձի վրա հիմնված նորարարությունների ներդրումը կարող է էապես արդիականացնել ՀՀ ԶՈՒ համակարգը:

Մեծ տվյալների ուշադրության արժանի հնարավորությունների օգտագործումը, ինչպես նաև դրանց ռիսկերը մեղմելը պահանջում են ԶՈՒ-ի ար-

---

Global”, 16 April 2016, Vol. 2, N 1 ([https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=2765008](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2765008)):

<sup>14</sup> Stu “Google BigQuery” (<https://cloud.google.com/bigquery>); “Apache Hadoop” (<https://hadoop.apache.org/>); “Amazon Redshift” (<https://www.amazonaws.cn/en/redshift/>):

դիականացման ռազմավարական տեսլական: Որպես արդյունք պետք կգան նոր ՏՏ գործիքներ, նոր գիտելիքներ, հմտություններ և կարողություններ, նորամուծական տեխնոլոգիաների ներդրման նոր բիզնես-գործընթացներ: Կառաջանա նաև մեծ տվյալների հետ աշխատելու կարողություններ ունեցող որակավորված վերլուծաբանների ու հաստիքային մասնագետների կարիք ոչ միայն ՋՈՒ-ի, այլև մյուս ոլորտներում: Այս իմաստով կրթության ոլորտի արձատական վերանայումը կարևոր մարտահրավեր է դառնում պետական քաղաքականության մշակման ամբողջ գործընթացում: Բացի այդ մեծ տվյալների վերլուծության համակարգային ներդրումը ռազմավարական մասշտաբով պահանջում է նաև ռեսուրսներ և ֆինանսական միջոցներ, ինչպես նաև պարունակում է որոշակի ռիսկեր արդի տեխնոլոգիաների և ընթացակարգերի ներդրման հետ կապված:

#### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ արդի տեխնոլոգիական դարաշրջանում խիստ ակտուալ է արհեստական բանականության վրա հիմնված մեծ տվյալների վերլուծության կիրառումը զինվորական համակարգում՝ հատկապես արտաքին հետախուզությունում: Դրանք այսօր կանխորոշում են ապագայի պատերազմների բնույթը և ուղղվածությունը. «խելացի» (*“smart”*) տեխնոլոգիաների կիրառմամբ հնարավոր կլինի կրճատել ռազմական ծախսերը, խնայել զինուժի կորուստները, սակայն հասնել հակառակորդի բանակի մարտունակության նվազեցման:

Թվարկենք այն հիմնական քայլերը, որոնք անհրաժեշտ է ձեռնարկել ՀՀ ՋՈՒ-ի հայեցակարգի առաջիկա բարեփոխումներում և երկարաժամկետ ռազմավարական պլանավորման տեսլականում.

- Ուսումնասիրել տեխնոլոգիական նորարարությունների, մեծ տվյալների կիրառման լայն հնարավորությունների միջազգային փորձը և հասկանալ դրանց ներդրման հնարավորությունները ՀՀ-ում:
- Բոլոր ռազմական նախագծերում փորձել ներդնել տվյալների ինտելեկտուալ վերլուծությունը և նորամուծական տեխնոլոգիական լուծումների կիրառումը:
- Գործընկերային կապեր ստեղծել այնպիսի պետությունների հետ, որոնք արդեն իսկ մեծ հաջողությամբ կիրառում են կառուցավորված ու չկառուցավորված մեծ տվյալների՝ արհեստական բանականության վրա հիմնված վերլուծությունները:
- Փորձարարական ձևաչափով օգտագործել կոմերցիոն նպատակներով ստեղծված ծրագրային ապահովման հարթակները ռազմական վերլուծական համակարգում, ինչպես նաև ներդնել մեկնարկային նախագծեր՝ հայեցակարգերի պրակտիկ կամ սիմուլիացիոն ստուգումներ իրականացնելու համար ոչ պատերազմական իրավիճակներում:
- Մեծացնել գիտակրթական և գիտահետազոտական ոլորտի ներդրումային և պետական ֆինանսավորման հնարավորությունները՝ շեշտը դնելով տեխնոլոգիական նորարարությունների հովանավորչության վրա:

- Սերտ համագործակցություն ձևավորել ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության և պաշտպանության նախարարությունների միջև՝ միջգերատեսչական օղակների ձևավորման կամ վերակազմավորման հնարավորությամբ, որտեղ առաձին հաստիքներ կհատկացվեն տվյալների մշակման մասնագետների և վերլուծաբանների համար՝ հիմնվելով վերջին ինովացիոն տեխնոլոգիական թարմացումների և ՁՈՒ պահանջների վրա: Այդ կադրերի շարունակական վերապատրաստումներն առանցքային դեր ու նշանակություն պետք է ստանան պետական մակարդակով:

Նախաձեռնել ՁՈՒ-ի ողջ համակարգի արդիականացումը՝ համապատասխանեցնելով նրա գործունեությունը բարձր տեխնոլոգիական նորարարություններին, այսպիսով նախապատրաստելով պետությանն ապագայի՝ նոր սերունդների պատերազմներին ու դրանց մարտահրավերներին: Հակառակ դեպքում՝ դրանք կկիրառվեն մեր պետության դեմ՝ անդառնալիորեն խարխլելով ՀՀ ինքնիշխան պետականության հիմքերը:

## ВОЕННАЯ ИНФОРМАТИКА

### ПРИМЕНЕНИЕ «БОЛЬШИХ ДАННЫХ» КАК ВОЗМОЖНОСТЬ МОДЕРНИЗАЦИИ ВОЕННОЙ СИСТЕМЫ ГОСУДАРСТВА

*Ж. П. АРУТЮНЯН, соискатель Института философии, социологии и права НАН РА*

#### РЕЗЮМЕ

Объемом в несколько триллионов зеттабайт, собираемые и хранимые в разном формате, «большие данные» представляют собой собирательную информацию разнообразного применения, которая подвергается модификации так же быстро, как и быстро накапливается.

Точное применение таких данных является предпосылкой для развития различных сфер, в том числе силовых структур, и принятия эффективных решений, а их игнорирование или неправильное применение может иметь губительные последствия.

Постепенно рассеивается миф, что якобы применение инновационных технологий доступно лишь прогрессивным государствам. В настоящее время разведывательные системы совершенствуются путем применения всех доступных инновационных средств и технических решений, в том числе методов искусственного интеллекта и машинного обучения.

Для ВС РА жизненно важно формирование группы таких аналитиков, которые были бы в состоянии осуществлять точную классификацию данных, сложный всесторонний анализ и осмысление случайно выявленных корреляционных связей.

**MILITARY INFORMATION SCIENCE**

**THE APPLICATION OF “BIG DATA” AS AN OPPORTUNITY FOR  
MODERNIZATION OF THE STATE’S MILITARY ORGANIZATION**

*ZH. P. HARUTYUNYAN, Applicant, Institute of Philosophy,  
Sociology and Law, NAS, RA*

**SUMMARY**

The “Big Data”, several trillions of zettabytes, captured and stored in a variety of formats, are collective information for multipurpose usage, which undergoes modification just as rapidly as it accumulates.

The accurate usage of such data is a prerequisite for the development of various spheres, including the uniformed services, and effective decision-making, while negligence or misuse may result in disastrous consequences.

The myth that the use of innovative technologies is available only to progressive states is gradually dispelling. Currently, intelligence systems are being improved by means of all available innovative tools and technical solutions, including artificial intelligence and machine learning methods.

It is vitally important for the Armed Forces of the Republic of Armenia to form a group of analysts capable of doing an accurate classification of data, an extensive complex analysis, and a comprehension of randomly identified correlations.



**ՀՀ-ՈՒՄ ՌԱԶՄԱԿԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ  
ՀԻՄՔԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ**

*Ա. Ն. ԽԱԶԻԿՅԱՆ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի Ռազմահումանիտար գիտությունների  
հետազոտությունների կենտրոնի գիտնական-վերլուծաբան,  
ԵՊՀ դասախոս*



Հայաստանի Հանրապետությանը նետված տարածաշրջանային ռազմաքաղաքական մարտահրավերները պահանջում են պաշտպանական համակարգի հարաճուն զարգացում և առկա խնդիրների հետևողական լուծում, մասնավորապես՝ բանակի մարտունակության ապահովում, անձնակազմի համալրման և որակական բարելավման մեխանիզմների ներդրում, ժամանակակից տեխնոլոգիաների և հնարավորությունների կիրառում և այլ համալիր գործողություններ<sup>1</sup>: Անվտանգության ոլորտի հիմնախնդիրները առավելագույնս արդիական են 2020 թ. սեպտեմբերի 27-ին Ադրբեջանի Հանրապետության սանձազերծած հայ-ադրբեջանական պատերազմից հետո, որով ընդգծվեց ՀՀ պաշտպանական համակարգի ամրացման և կատարելագործման հրատապությունը:

Անվտանգության խնդիրների լուծմանն ուղղված գործողությունների իրականացման համար անհրաժեշտ են միջգիտակարգային բնույթի ուսումնասիրություններ, որոնք պահանջում են թե՛ հասարակագիտական, թե՛ տեխնիկական-բնագիտական մոտեցումներ: Ռազմական ոլորտում առկա հասարակական կառուցվածքների ու գործընթացների ուսումնասիրությունը գտնվում է ռազմական սոցիոլոգիայի տիրույթում, որը բանակը դիտարկում է որպես սոցիալական ինստիտուտ, իսկ գինժառայողին՝ որպես սոցիալական ինստիտուտի առանցքային միավոր: Սոցիալական ինստիտուտը սահմանվում է որպես հարաբերությունների և սոցիալական նորմերի կազմակերպված համակարգ, որում միավորվում են հասարակական այն կարևոր արժեքներն ու ընթացակարգերը, որոնք բավարարում են հասարակության հիմնական պահանջները<sup>2</sup>: Հետևաբար, հասարակության մեջ սոցիալական հարաբերու-

<sup>1</sup> Տես *Ա. Խաչիկյան*, Բանակը որպես սոցիալական ինստիտուտ. ՀՀ ԶՈՒ-ի և զինծառայության նկատմամբ վերաբերմունքի և դրանց հեղինակության ապահովման պրոբլեմները: «ՀԲ», 2019, հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ <https://razmavaraget.files.wordpress.com/2019/12/hb-4-2019.pdf>):

<sup>2</sup> Տես *С. С. Фролов*. Социология. Учебник для высших учебных заведений. М., 1994:

յունները, իշխող նորմերն ու արժեքները, վարքային մոդելները, ինչպես նաև պրոբլեմներն ու գործընթացները իրենց արտացոլումն են ստանում բանակում՝ պայմանավորելով բանակի՝ որպես սոցիալական ինստիտուտի կառուցվածքային առանձնահատկությունները, մարտունակությունը, զինվորական կոլեկտիվներում ձևավորվող փոխհարաբերությունները<sup>3</sup>:

Ռազմական սոցիոլոգիան իր կարևոր տեղն ունի միջին մակարդակի սոցիոլոգիական գիտակարգերի շարքում: Այն ուսումնասիրում է բանակի կապը և հարաբերությունները հասարակության այլ ինստիտուտների հետ, զինծառայողների հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները, զինվորական կոլեկտիվների և դրանց անդամների միջև ներխմբային փոխհարաբերությունների առանձնահատկությունները, զինծառայությանը նորակոչիկների և քաղաքացիական կյանքին՝ նախկին զինծառայողների հարմարման հետ կապված հարցերը, զինծառայության և զինծառայողների նկատմամբ հասարակության շրջանում ձևավորվող վերաբերմունքին և փոխվստահությանը վերաբերող խնդիրները, պատերազմի՝ որպես սոցիալական երևույթի ընկալման և իմաստավորման հարցերը և այլն<sup>4</sup>: Ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունների առարկա է ռազմական և քաղաքացիական բնագավառների միջև հարաբերությունների ամբողջությունը, այդ թվում՝ բանակի նկատմամբ քաղաքացիական վերահսկողության մեխանիզմների մշակումը, բանակ-քաղաքացիական ինստիտուտներ համագործակցությունը<sup>5</sup>: Ռազմական սոցիոլոգիայի ուսումնասիրության տիրույթում են խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ ռազմական կազմակերպվածքի ներսում խմբերի հարաբերություններն ու սոցիալական գործընթացները, ներքին սոցիալական գործընթացներն ու հարաբերությունները, դրանց զարգացումը, ինչպես նաև զինվորականի սոցիալական նկարագիրը՝ սեռը, տարիքը, կրթությունը, էթնիկական պատկանելությունը, բնակավայրը, լեզուն, սոցիալական վիճակը: Այս բնութագրերի համադրումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այն պատճառների մասին, որոնք զինվորական կոլեկտիվում հաճախ տարբեր ոչ ֆորմալ ենթախմբերի առաջացման հիմք են դառնում՝ կանխատեսելով և կառավարելի դարձնելով այդ ենթախմբերի միջև հարաբերություններն ու կանխարգելելով հնարավոր կոնֆլիկտները<sup>6</sup>:

<sup>3</sup> Տես Ա. Վ. Աթանեսյան, Ա. Ե. Մկրտիչյան, Ա. Ռ. Ավետիսյան, Ա. Ռ. Սահակյան, Վ. Հ. Մարգարյան, Մ. Ա. Մախալկինա, Բանակ և հասարակություն. Ժամանակակից հիմնախնդիրներ: Ռուսումնական ձեռնարկ բուհերի և ռազմական հաստատությունների համար: Ե., 2013, էջ 21:

<sup>4</sup> Տես «Ռազմական սոցիոլոգիա»: Ռուսումնական նյութերի ժողովածու: Խմբ. Լ. Հարությունյան: Ե, 2005, էջ 6:

<sup>5</sup> Տես D. E. Albright. Comparative Conceptualization of Civil-Military Relations. "World Politics", July 1980, Vol. 32, N 4; S. C. Sarkesian. Military Professionalism and Civil-Military Relations in the West. "International Political Science Review", 1981, Vol. 2, N 3: "Civil-Military Relations":

<sup>6</sup> Տես H. Ф. Наумова, В. С. Сычева. Общественное мнение о социальных проблемах армии России. «Социологические исследования», 1993, № 12:

Զինվորական կոլեկտիվի ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունների առանցքում են նաև առաջնորդության ֆորմալ և ոչ ֆորմալ մեխանիզմները, ներխմբային գործընթացների դինամիկան, զինծառայողների կոնֆլիկտային և համագործակցային վարքը և այլ կարևոր հարցեր<sup>7</sup>: Նշված խնդիրների ուսումնասիրության համար կիրառվում է սոցիոմետրիկական տեխնիկա<sup>8</sup>: Հավելենք նաև, որ այս ուսումնասիրությունները առավել արդյունավետ կլինեն, եթե դրանք կատարեն ռազմական միջավայրում ուսումնասիրությունների հարուստ փորձ ունեցող հետազոտողներ, կամ այնպիսի սպաներ, որոնք համապատասխան մասնագիտական պատրաստություն են անցել<sup>9</sup>:

Այսպիսով՝ ռազմական սոցիոլոգիան սոցիոլոգիական գիտելիքի տեսական և էմպիրիկ մակարդակների փոխկապված ամբողջություն է: Կախված հետազոտական խնդրից՝ որոշ դեպքերում անհրաժեշտ է այս կամ այն երևույթի տեսական իմաստավորում, որոշ դեպքերում էլ՝ կոնկրետ գործոնների նկարագրում, որոնում, դասակարգում և այլն:

Ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունների կարևորությունը պետք է դիտարկել պետության անվտանգության ապահովման ընդհանրական մեխանիզմի ստեղծման, ազգային անվտանգության գաղափարական և ռազմատեխնիկական համակարգի ներդրման և զարգացման համատեքստում<sup>10</sup>:

Սոցիոլոգիայի հիմնադիր Օգյուստ Կոնտը իր «Պոզիտիվ փիլիսոփայության դասընթացը» աշխատությունում քննության է առնում մի շարք թեմաներ, որոնք այսօր մենք աներկբա կերպով ներառում ենք ռազմական սոցիոլոգիայի մեջ: Իր ժամանակի հասարակության ճգնաժամի վերլուծությամբ Կոնտը կառուցում է մարդկության սոցիալական պատմություն, որի մեջ ռազմականը, կրոնի հետ միասին, ունի հիմնարար դեր: Ընդգծելով ռազմական բաղադրիչի կարևորությունը՝ Կոնտն արձանագրում է, որ մարդու առաջին գործիքը զենքն է, իսկ առաջին հաստատված իշխանությունը՝ խմբում զինված ուժի ղեկավարը<sup>11</sup>:

Ռազմական սոցիոլոգիայի զարգացման գործում էական դեր ունեցան 20-րդ դարի առաջին կեսին սկիզբ առած գիտական ուսումնասիրությունները: Այս գիտակարգի կայացման այդ կարևոր փուլը կապված էր առաջին համաշխարհային պատերազմի՝ որպես առաջին աննախադեպ լայնամաս-

<sup>7</sup> Stu B. *Altermatt*. Der Umgang der Schweizer Armee mit der Mehrsprachigkeit: Proportionalität und Territorialität. Ein Historisches Überblick mit Standortbestimmung. Bern, Oktober 2004:

<sup>8</sup> Stu *Jacob Levy Moreno*. Sociometry, Experimental Method and the Science of Society: An Approach to a New Political Orientation. Beacon House, 1951:

<sup>9</sup> Stu *G. Caforio, M. Nuciari*. Handbook of the Sociology of the Military. Springer International Publishing, 2018, P. 5:

<sup>10</sup> Stu Հ. *Ս. Քոթանջյան*, Հակամարտության էթնոքաղաքագիտություն: Հայաստանի ռազմական քաղաքականության և ազգային անվտանգության հիմունքները: Ե., 2010:

<sup>11</sup> Stu *A. Comte*. Understood as “history without the names of individuals and even without those of peoples”, 1967, P. 123:

շտաբ և բազմաչափ ռազմաքաղաքական իրողության հետ: Նշված ժամակահատվածի ընթացքում ձևավորվեցին որոշակի հիմքեր զինված ուժերում սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն մշակելու և զարգացնելու համար: 1940-ականների սկզբին ռազմական ոլորտում կատարվեցին սոցիոլոգիական ուսումնասիրությունների ծանրակշիռ ներդրումներ: Ընդամին ռազմական սոցիոլոգիայի վերելքը որևէ ակադեմիական պլանավորման արդյունք չէր, այլ կրկին պայմանավորված էր սոցիալական կարևորագույն իրադարձությամբ՝ երկրորդ համաշխարհային պատերազմով<sup>12</sup>: 20-րդ դարի երկրորդ կեսը բնորոշվում էր պատերազմի ուսումնասիրման սոցիալ-հոգեբանական մոտեցմամբ, որին հաջորդեց ռազմասոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանության ձևավորման և դրանց ներհաստատութենական փորձարկումների շրջանը:

ԱՄՆ-ում ռազմական սոցիոլոգիան սկսել է զարգանալ հիմնականում «ամերիկյան զինվորի» վերաբերյալ հսկայածավալ հետազոտություններով, այնուամենայնիվ, ռազմական ոլորտի և պատերազմի երևույթի ուսումնասիրությունները գրեթե մեկ դար նախորդել են դրան և ավանդաբար համարվում են «սոցիոլոգիական»<sup>13</sup>: ԱՄՆ-ում ռազմասոցիոլոգիական հետազոտությունները նպաստել են ինչպես սոցիոլոգիայի զարգացմանը, այնպես էլ զինված ուժերի բարեփոխումներին:

ԽՍՀՄ-ում ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունները սկզբնապես կատարվում էին խիստ նեղ խնդիրների շրջանակներում և հիմնականում ունեին կիրառական բնույթ, չէին ամբողջացվում տեսական–հայեցակարգային մակարդակում: Սակայն ԽՄԿԿ 20-րդ համագումարում սոցիոլոգիայի՝ որպես արգելված գիտության արգելքը վերացնելուց հետո 1956 թ. Վ. Ի. Լենինի անվան ռազմաքաղաքական ակադեմիայում սկսեց գործել կոնկրետ ռազմասոցիոլոգիական հետազոտությունների խմբակը<sup>14</sup>:

Հայաստանի Հանրապետությունում ռազմական սոցիոլոգիայի ձևավորումն ընթացել է ԽՍՀՄ-ի հասարակագիտական և ռազմագիտական ժառանգության հիման վրա: Սակայն, հարկ է նշել, որ հայ ազգային գործիչները (օրինակ՝ Գարեգին Նժդեհը) իրենց խոսքում և հեղինակած աշխատություններում մշտապես դիտարկել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են զինվորականության նկարագիրը, բանակի հանրային դերը և բանակ–հասարակություն կապը, ներբանակային հիմնախնդիրները և այլն: Իսկ բուն ռազմասոցիոլոգիական հետազոտությունների փորձեր ձեռնարկվել են խորհրդային վերջին տարիներին, և ապա՝ անկախության հռչակումից հետո, երբ զինծառայողներին տրամադրվում էին ձևաթղթեր, որոնց լրացումից հետո

<sup>12</sup> Stu *G. Caforio, M. Nuciari*. Handbook of the Sociology of the Military. Springer International Publishing, 2018, P. 5:

<sup>13</sup> Stu *O. Чинин*, Նշ. աշխ., էջ 123:

<sup>14</sup> Stu *И. В. Образцов*. Советская военная социология: процесс институционализации отечественной военной социологии. «Социологические исследования», 2003, № 12:

ամփոփվում էր տվյալ զորամասի զինվորների վերաբերմունքը զինծառայության նկատմամբ: Հայկական բանակի կազմավորման և կայացման փուլում զուգահեռաբար ձևավորվում էր ռազմական հետազոտությունների մշակույթը՝ առավելապես դրսևորվելով սոցիոլոգիայի և հոգեբանության հետազոտական գործիքակազմի ներդրմամբ:

Հայաստանի անկախացումն ու Արցախյան պատերազմը շրջադարձային դեր խաղացին ռազմասոցիոլոգիական մտքի զարգացման համար, քանի որ «ռազմական» կատեգորիան դարձավ խիստ արդիական և պահանջված: Հարկ է ընդգծել, որ այս փուլում յուրօրինակ իրավիճակ կար. ռազմական առաջնորդները դարձան քաղաքական առաջնորդներ և ձևավորեցին իշխանություն, ինչը նշանակում էր, որ քաղաքականություն մշակողների ու որոշում ընդունողների շրջանակի համար բանակի հիմնախնդիրների համակարգային և մասնագիտական լուծումները առաջնահերթություն էին:

ՀՀ-ում ռազմական սոցիոլոգիայի՝ որպես սոցիոլոգիայի ճյուղերից մեկի հաստատութենական և համակարգային կայացման ու զարգացման հիմքերը դրվել են ԵՊՀ կիրառական սոցիոլոգիայի առաջին ամբիոնի, ապա՝ սոցիոլոգիայի ֆակուլտետի հիմնադրմամբ: Սոցիոլոգիայի ֆակուլտետի նախածեռնությամբ և ՀՀ Պաշտպանության նախարարի աջակցությամբ հրատարակվել է հայերեն լեզվով և հայաստանյան հիմնախնդիրներին նվիրված առաջին՝ «Ռազմական սոցիոլոգիա» դասագիրքը<sup>15</sup>: 2006 թ. ԵՊՀ Սոցիոլոգիայի ֆակուլտետում «Ռազմական սոցիոլոգիա» առարկայի ներառմամբ ռազմական սոցիոլոգիան ներդրվեց կրթական համակարգում:

1993 թվականից ՀՀ ՊՆ ԱՀՏԱ վարչությունը (2019 թվականից՝ ՀՀ ԶՈՒ-ի բարոյահոգեբանական ապահովման վարչություն) իրականացնում է զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովում, այդ թվում՝ զինծառայողների անհատական-հոգեբանական առանձնահատկությունների համակողմանի, մանրակրկիտ ուսումնասիրում<sup>16</sup>: ՀՀ ՊՆ կառուցվածքում վերը նշված հետազոտությունների իրականացման ընթացքում մշտապես կիրառվել է բուն սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն և գործիքակազմ, սակայն ոչ միշտ է հետազոտությունը համարվել և անվանվել «սոցիոլոգիական»:

ՀՀ Զինված ուժերի կառուցվածքում 2005 թվականից գործում է Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որի հիմքի վրա 2016 թ. ստեղծվել է ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանը<sup>17</sup>: ՊԱՀՀ-ի նպատակն է Հայաստանի անվտանգային-պաշտպանական համակարգի արդյունավետության մակարդակի բարձրացումը՝ հետազոտական և կրթական գործունեությունների կամրջմամբ: Կառույցի շրջանակում գործում է ՀՀ ՊՆ «Հայկական բանակ»

<sup>15</sup> Տես «Ռազմական սոցիոլոգիա»: Ուսումնական նյութերի ժողովածու:

<sup>16</sup> Տես «ՀՀ ԶՈՒ Բարոյահոգեբանական ապահովման վարչություն»: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (<http://www.mil.am/hy/structures/29>):

<sup>17</sup> Տես «ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարան»: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք (<http://www.mil.am/hy/structures/63>):

ռազմագիտական հանդեսը, որտեղ հրապարակվում են նաև ռազմական սոցիոլոգիային առնչվող գիտական հոդվածներ:

2012 թ. ԵՊՀ Կիրառական սոցիոլոգիայի ամբիոնի մասնագետների և հայաստանյան մի շարք առաջատար փորձագետների կողմից մշակվել և առաջին անգամ ՀՀ Ռազմական ուսումնական հաստատություններում ներդրվել է «Զինվորական առաջնորդություն» դասընթացը, հրատարակվել է այդ ոլորտի առաջին հայալեզու ուսումնական ձեռնարկը<sup>18</sup>: Նույն թվականին ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի և համագործակցող կազմակերպությունների աջակցությամբ ՀՀ ՊՆ վեց զորամասերում իրականացվել է ծավալուն սոցիոմետրիկական հետազոտություն<sup>19</sup>, իսկ 2015 թ. ԵՊՀ սոցիոլոգիայի ֆակուլտետի մասնագետների նախաձեռնությամբ, ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվել է հարցաթերթիկային հարցում<sup>20</sup>: Ընդհանուր առմամբ բազմաթիվ մասնագիտական հետազոտություններ և վերլուծություններ են կատարվել ռազմական սոցիոլոգիայի շրջանակում:

Անվտանգային քաղաքականության համատեքստում շրջադարձային նշանակություն ունեցավ ազգ-բանակ հայեցակարգը, որի շրջանակում ձևակերպվեց բանակի և հասարակության միջև հարաբերությունների տեսլականը: Այստեղ հատկապես կարևորվում է հասարակության կողմից բանակի գործառնության համարժեք ընկալումը, ազգային անվտանգության ապահովման և պետության պաշտպանության գործում մասնակցության անհրաժեշտության գիտակցումն ու բանակաշինությանը մասնակցելու կարողությունը<sup>21</sup>: 2017 թվականին ՀՀ պաշտպանության նախարարությունը ազգ-բանակ հայեցակարգի շրջանակում մեկնարկեց «Դիտակետ» ռազմասոցիոլոգիական հետազոտությունը, որը կատարվել է զորացրված ժամկետային զինծառայողների շրջանում<sup>22</sup>: Այն նպատակ ուներ վեր հանելու զինվորական ծառայությանն առնչվող խնդիրները՝ հնարավորություն տալով նախանշելու դրանց լուծման արդյունավետ ուղիները, արագ արձագանքելու բարձրաձայնված խնդիրներին, ճշգրիտ գնահատելու ԶՈՒ-ի նկատմամբ հանրային ընկալումները, ընդունելու համապատասխան որոշումներ և, ըստ այդմ, պլանավորելու պաշտպանական քաղաքականության գերակա ուղ-

<sup>18</sup> Տես Ա. Աթանեսյան, Ա. Շաքարյան, Վ. Ավետիքյան, Ա. Ավետիսյան, Դ. Հարությունյան, Զինվորական առաջնորդություն: Զինվորական կոլեկտիվի արդյունավետ կառավարման հիմնախնդիրներ: Ե., 2012:

<sup>19</sup> Տես Ա. Վ. Աթանեսյան, Ա. Ե. Սկրտիչյան, Ա. Ռ. Ավետիսյան, Ա. Ռ. Սահակյան, Վ. Հ. Մարգարյան, Մ. Ա. Մախալկինա, Նշ. աշխ., էջ 20:

<sup>20</sup> Տես Ա. Աթանեսյան, Հայաստանում բանակի և զինծառայողների հեղինակության ապահովման հիմնախնդիրները «ազգ-բանակ» հայեցակարգային մոդելի մշակման համատեքստում: «ՀԲ», 2016, հմ. 4 (էլեկտրոնային տարբերակը՝ [https://razmavaraget.files.wordpress.com/2017/01/nation-army-collective-monograph\\_armenian-army1.pdf](https://razmavaraget.files.wordpress.com/2017/01/nation-army-collective-monograph_armenian-army1.pdf)):

<sup>21</sup> Տես նույն տեղում:

<sup>22</sup> Տես «Զինվորական ծառայության պայմաններից զորացրվածների գոհունակության գնահատում: Սոցիոլոգիական հետազոտություն զորացրվածների հետ»: ՀՀ Պաշտպանության նախարարության «Դիտակետ» ծրագիր, «ԲՐԵՎԻՍ» ընկերություն: Ե., 2018:

ղությունները<sup>23</sup>: 2019 թվականին ՀՀ ՊՆ ԱՀՏԱ վարչության համակարգմամբ կատարվել է սոցիալ-հոգեբանական խնդիրների հետազոտություն ՀՀ ՊՆ Ն զորամասի զինծառայողների շրջանում: Հետազոտությունը կատարվել է սոցիոլոգիական և հոգեբանական մեթոդների համադրված կիրառմամբ՝ հարցաթերթիկի և հոգեբանական թեստերի միջոցով<sup>24</sup>:

2020 թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված հայ-ադրբեջանական պատերազմում ի հայտ եկած բազմաթիվ պրոբլեմներ վերահաստատեցին ՀՀ Զինված ուժերում ռազմասոցիոլոգիական հետազոտությունների և ստացված արդյունքների օգտագործման կարևորությունն ու անհրաժեշտությունը: Պատերազմի ընթացքում սույն հոդվածի հեղինակը կատարել է ռազմասոցիոլոգիական հետազոտությունների փորձեր, որոնք ուղղված են եղել զինծառայողների մարտական ոգու և բարոյահոգեբանական վիճակի ուսումնասիրմանը:

Այսպիսով՝ ռազմական սոցիոլոգիան որոշակիորեն արդիական դարձավ հետխորհրդային փուլում՝ իր առանձնահատուկ ռազմասոցիոլոգիական խնդիրներով և մարտահրավերներով. արցախյան երկու պատերազմները, բանակաշինությունը, ազգ-բանակ հայեցակարգն ու անվտանգության համակարգի բարեփոխումներն առանցքային խթան դարձան ռազմական սոցիոլոգիայի զարգացման հարցում:

Ռազմական *սոցիոլոգիայի զարգացման հեռանկարները* կարելի է ուրվագծել երեք հիմնական տիրույթներով՝ պաշտպանական համակարգ, կրթության համակարգ, գիտական-հետազոտական ուղղություն:

Բանակաշինության ամբողջ ընթացքում կուտակվել են հսկայական փորձ, հնարավորություններ ու ռեսուրսներ, որոնց օգտագործումը կարող է նպաստել ռազմական սոցիոլոգիայի հաստատութենական զարգացմանը: Վերլուծությունների և որոշումների ընդունման հնարավորությունների տեսանկյունից կարևոր և կիրառելի են նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության, անվտանգության խորհրդի համապատասխան ստորաբաժանումների և ՀՀ Աժ պաշտպանության և անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի ռեսուրսները: Վերը նշված կառուցներում զեկույցների, հաշվետվությունների և այլ փաստաթղթերի տեսքով կուտակվում է պաշտպանական համակարգին վերաբերող արժեքավոր տեղեկույթ, ինչը տվյալների աիռելի շտեմարան է ռազմասոցիոլոգիական ուսումնասիրությունների համար:

<sup>23</sup> Տես «ՀՀ պաշտպանության նախարարը հանդիպել է «Դիտակետ» ծրագրին մասնակցած երիտասարդների հետ»: ՀՀ ՊՆ պաշտոնական կայք, 2 փետրվարի 2018 (<http://mil.am/hy/news/5145>):

<sup>24</sup> Տես *Խ. Պասպարյան, Ա. Խաչիկյան*, ՀՀ ՊՆ Ն զորամասի սոցիալ-հոգեբանական խնդիրների ուսումնասիրություն (ՀՀ ՊՆ ԱՀՏԱ վարչության, «ԱՐԱՐ» հիմնադրամի, «ԲՐԵՎԻՍ» հետազոտական ընկերության և «ԻՆԹՐԱ» հոգեկան առողջության կենտրոնի համագործակցությամբ): Ե., 2019:

Ոլորտի զարգացման հաջորդ հեռանկարը կրթական հաստատությունների ուսումնական ծրագրերում ռազմական սոցիոլոգիան որպես առարկա ներառելն է.

- ռազմական ուսումնական հաստատություններում՝ հիմնական կրթական ծրագրերում:
- բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ հասարակագիտական և հումանիտար առարկաների կրթական ծրագրերում,
- հանրակրթական հաստատություններում՝ «նախնական գինվորական պատրաստություն» առարկայի շրջանակում:

Ռազմական սոցիոլոգիան խոստովանալից հեռանկար ունի նաև գիտական ուսումնասիրությունների և հետազոտական աշխատանքների առումով: Անհրաժեշտ է խթանել ՀՀ-ում գործող գիտահետազոտական կառույցների կողմից անվտանգության ոլորտի հետազոտությունների իրականացումը, ինչպես նաև այդ կառույցների և պաշտպանության նախարարության համապատասխան ստորաբաժանումների հետ մեթոդագործական համագործակցության հնարավորությունները: Ռազմական սոցիոլոգիայի զարգացումն ապահովող առանցքային գործոններից են նաև ռազմաքաղաքական դեկավարության կողմից գիտական բնագավառի հանդեպ վստահությունն ու գիտելիքահեն կառավարման կարևորումը: Կարևոր է նաև ռազմական սոցիոլոգիայի առարկայական տիրույթի թեմաների վերաբերյալ ակտիվ քննարկումը հանրային դիսկուրսում:

Ռազմասոցիոլոգիական տեսական և հետազոտական հնարավորություններն արդյունավետորեն կիրառելու համար անհրաժեշտ է **ինստիտուցիոնալ կերպով ներդրել շարունակական ռազմասոցիոլոգիական հետազոտությունները**, որոնց արդյունքներով կստեղծվեն բանակի գիտելիքահեն կառավարման համար անհրաժեշտ նախադրյալներ: Հայկական բանակի համալրման պարտադիր ժամկետային գինվորական ծառայության սկզբունքի հաշվառմամբ անհրաժեշտ է խնդիրների բացահայտման համար իրականացնել հետազոտություններ մինչև զորակոչվելը և զորացրվելուց հետո (*Pre-survey* և *post-survey*): Զինվորական կոլեկտիվի միջանձնային և միջխմբային հարաբերությունների ախտորոշման և բարելավման նպատակով անհրաժեշտ է անցկացնել սոցիոմետրիկական հետազոտություններ: Գիտահետազոտական գինանոցի և մասնագիտական ռեսուրսի արդյունավետ օգտագործման դեպքում կարող են ձևավորվել մեխանիզմներ, որոնք խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ հնարավորություն կտան **ուսումնասիրելու, բացահայտելու և կարգավորելու** ռազմական ոլորտի բազմաթիվ հիմնախնդիրներ, ինչպես օրինակ՝

1. գինվորական կոլեկտիվների հիմնախնդիրները, այդ թվում՝ ոչ կանոնադրային հարաբերությունները, ներխմբային կոնֆլիկտները, սոցիալ-հոգեբանական խնդիրները, մարտական ոգու և բարոյահոգեբանական վիճակի ապահովման մեխանիզմները, գինվորական անձնակազմի կառավարման հիմնահարցերը, ֆորմալ և ոչ ֆորմալ առաջնորդության խնդիրները:



2. բանակի և զինծառայության հեղինակության ապահովման հարցերը, զինծառայողների և բնակչության շրջանում բանակի և զինվորականի վարկանիշը, զինված ուժերի նկատմամբ վստահությունը և ընկալումները:
3. բանակի համալրման մեխանիզմները, սոցիալական ինստիտուտների և քաղաքացիների մոբիլիզացիոն սխեմաները՝ ժողովրդագրական առանձնահատկությունների և սոցիալական նկարագրերի հաշվառմամբ:

Այսպիսով՝ հայկական բանակում ռազմասոցիոլոգիական հետազոտությունների հեռանկարներն ուրվագծելիս հարկ է նշել, որ առկա է հարուստ տեսական և հետազոտական պաշար. ուսումնասիրությունների կատարման և դրանց կիրառականության ապահովմամբ հաստատութենական մեխանիզմների ձևավորման և զարգացնելու համար:

## ВОЕННАЯ СОЦИОЛОГИЯ

### ОСНОВЫ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ ВОЕННОЙ СОЦИОЛОГИИ В РА

*А. Н. ХАЧИКЯН, ученый-аналитик Центра исследований военно-гуманитарных наук НИУО МО РА, преподаватель ЕГЛУ*

#### РЕЗЮМЕ

В РА военная социология начала развиваться в постсоветский период: этому способствовали обе Арцахские войны, военное строительство, внедрение концепции «Нация–армия» и реформы безопасностной системы.

Институциональному развитию военной социологии может во многом способствовать использование огромного опыта, возможностей и ресурсов, накопленных за годы строительства ВС. В этом отношении важны и применительны, в частности, ресурсы (доклады, отчеты, документы) соответствующих подразделений Службы национальной безопасности РА, Совета безопасности и Постоянной комиссии по вопросам обороны и безопасности НС РА. Необходимо также поощрять проведение безопасностных исследований действующими в РА научно-исследовательскими структурами и методико-практическое сотрудничество таких структур и соответствующих подразделений Министерства обороны, а также создать необходимые предпосылки для наукоемкого управления армией путем институционального внедрения продукта военно-социологических исследований. При эффективном применении научно-исследовательского арсенала и профессионального ресурса можно будет сформировать механизмы,

с помощью которых станет возможным в мирное и военное время изучение, выявление и регулирование многочисленных проблем военной сферы, таких, как неуставные взаимоотношения в воинских коллективах, внутрigrупповые конфликты, механизмы обеспечения боевого духа и морально-психологического состояния, проблемы управления личным составом, проблема повышения престижа армии и военной службы среди самих военнослужащих и гражданского населения, механизмы пополнения армии и т. д. Для развития данной сферы перспективным является также внедрение в учебную программу образовательных учреждений военной социологии как отдельной дисциплины.

## MILITARY SOCIOLOGY

### THE BASES AND PERSPECTIVES OF THE DEVELOPMENT OF MILITARY SOCIOLOGY IN THE RA

*A. N. KHACHIKYAN, Research Fellow, Center for Research in Military Humanities,  
NDRU, MOD, RA, Lecturer, Yerevan State Linguistic University*

#### SUMMARY

The Military Sociology began to develop in the RA in the post-Soviet stage: the two wars in Artsakh, the army building, the Nation-Army concept, and the reforms in the security system became a key impetus for that.

The use of the immense experience, opportunities and resources accumulated throughout the years of army building, can largely facilitate the institutional development of military sociology. In this respect, namely the resources (reports, accounts, documents) of relevant subdivisions of the RA National Security Service, the RA Security Council and the RA National Assembly Standing Committee on Defense and Security are significant and applicable. It is necessary to encourage the implementation of security research conducted by the scientific-research structures operating in the Republic of Armenia, as well as the methodological and practical collaboration between those structures and the relevant subdivisions of the Ministry of Defense, to create necessary preconditions for knowledge-based control of the army via institutional introduction of continuous military-sociological research. If the scientific-research arsenal and the professional resources are effectively used, then there can be formed mechanisms, which will allow to study, identify and settle a number of military issues, both in peacetime and in wartime – i. e., non-

statutory relations in military collectives, intra-group conflicts, mechanisms for ensuring the combat morale and the moral and psychological condition, issues of the management of the military staff, the questions of ensuring the reputation of the army and the military service, the prestige of the army and the military service among the civilians and the military, the mechanisms of army manning, etc. Incorporating the military sociology as a subject in the curricula of educational institutions is also perspective for the sphere.

**ԿՐՏՍԵՐ ՍՊԱՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՐԴՅՈՒՆԱԿԵՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ**

*Հ. Մ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, փոխգնդապետ, ՀՊՄՀ Հոգեբանության ամբիոնի  
հայցորդ, ՀՀ ՁՈՒ-ի ԲՀԱ վարչության գաղափարախրավական  
և տեղեկատվական աշխատանքների բաժնի ավագ սպա*

Ազգային ինքնության և պետականության պահպանման և ամրապնդման մերօրյա մարտահրավերների պայմաններում ազգային անվտանգության ապահովման համար առաջնահերթություն է բանակի մարտունակության մակարդակի բարձրացումը, որը հնարավոր կլինի, եթե գործնականում կարևորվեն ռազմական գիտության նվաճումների և միջգիտակարգային ուսումնասիրությունների արդյունքների շարունակական ներդրումները պաշտպանական համակարգի զարգացման գործում:



Հայտնի է, որ ռազմական հաջողությունների հասնելու համար պահանջվում է ոչ միայն ժամանակակից սպառազինություն և ռազմական տեխնիկա, այլև կառավարման բոլոր մակարդակներում մասնագիտական անհրաժեշտ գիտելիքներով, հմտություններով, որոշակի բնութագրերով օժտված հոգեպես ու ֆիզիկապես պատրաստված անձնակազմ: Ուստի Ձինված ուժերում մարտունակության պահպանման և դրա մակարդակի շարունակական բարձրացման տեսանկյունից կարևոր և արժեքավոր են սպաների ծառայողական գործունեության արդյունավետության (ԾԳԱ), մասնավորապես՝ դրա հոգեբանական բաղադրիչների ուսումնասիրությունը, մասնագիտական գործունեությանը խոչընդոտող գործոնների վերհանումը և դրանց վերացմանն ուղղված աշխատանքների կազմակերպումը: Ձինծառայողների ծառայողական գործունեության արդյունքների համադրմամբ կատարվում է գնահատում, ինչը ՁՈՒ-ում մարդկային ռեսուրսների կառավարման կարևորագույն գործիքներից է: Դրա հիման վրա են կատարվում ծառայողական առաջխաղացման պլանավորումը, խրախուսումը և մշակվում է զինծառայողների վերապատրաստմանն ուղղված միջոցառումների, իրականացվող ծրագրերի բովանդակությունը:

Ձինված ուժերի մարտական պատրաստվածության բարձր մակարդակի համար պատասխանատու են ռազմավարական, օպերատիվ ու մարտավարական բոլոր օղակների հրամանատարները՝ ըստ օրենքով, կանոնագրքերով և հրամաններով սահմանված իրենց պարտականությունների: Կրտսեր սպայական կազմի դերը հրամանատարական ամբողջ աստիճանա-

կարգության մեջ առանցքային է, քանի որ կրտսեր սպաների ծառայողական գործունեությունը ներառում է այնպիսի կարևորագույն գործառույթներ, ինչպիսիք են գործերի մարտական պատրաստության մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը, ենթակաների հետ տարվող անհատական աշխատանքները, գործերի ծառայությանը և զինծառայությանն առնչվող խնդիրների լուծումը, ուսումնական պարապմունքների պլանների պատրաստումը և դրանց անցկացումը, զինվորական կոլեկտիվների մարտական լիաներդաշնակեցումը, տեսչական-մեթոդական աշխատանքների կատարումը, ենթակա անձնակազմի մարտական ոգու ամրապնդումը, բարոյահոգեբանական վիճակի բարելավումը, ինչպես նաև ենթակաների շրջանում հայրենասիրության զգացումի դաստիարակումը, բարոյական ոգու ձևավորում և այլն: Ուստի կրտսեր սպաների ԾԳԱ-ն գնահատվում է անձնակազմի ուսուցման, դաստիարակման, վերապատրաստման, մասնագիտական կայացման ու զարգացման աշխատանքներում նրանց արձանագրած հաջողություններով:

Նրանց ծառայողական գործունեության արդյունավետության մակարդակի բարձրացումը պայմանավորված է ուսումնական հաստատություններում ստացած տեսական գիտելիքների և գործնական հմտությունների շարունակական զարգացմամբ: Մասնագիտական գրականության մեջ նշվում է. «...Սպայական կադրերի պատրաստման համակարգի արդյունավետության մեծացումը ենթադրում է ուշադրության կենտրոնում պահել այն հանգամանքը, որ մասնագիտական գործունեությանը անձնավորության պիտանիությունը չի կարող կանխատեսվել միայն ըստ ուսման մեջ նրա առաջադիմության, քանի որ ուսումնական ընդունակությունները և պրակտիկ գործունեության ընդունակությունները շատ դեպքերում չեն համընկնում»<sup>1</sup>:

Կրտսեր սպայական կազմի ԾԳԱ բաղադրիչներից կարելի է առանձնացնել.

- 1) ենթակա անձնակազմի մարտական պատրաստության մակարդակը,
- 2) պատասխանատվությունը ինչպես խաղաղ, այնպես էլ պատերազմական իրավիճակներում,
- 3) մարտական առաջադրանքները ժամանակին և պատշաճ կերպով կատարելու ունակությունը,
- 4) ենթակա անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի բարձրացմանն ուղղված աշխատանքների կատարման որակը:

Թվարկած բաղադրիչները ուղղակիորեն դիտարկվում են նաև հոգեբանական հետազոտությունների շրջանակում և ձևակերպվում են մեթոդաբանական մոտեցումների հիման վրա: Մասնավորապես՝

ա) ծառայողական գործունեության սուբյեկտը կրտսեր սպան է՝ իր բարդ ներաշխարհով ու հաղորդակցման ունակություններով, մասնագիտական գիտելիքներով, դրանք խաղաղ պայմաններում և պատերազմի ժամանակ

<sup>1</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Սպայի անձնավորության ձևավորման հարցի շուրջ: «ՀԲ», 2004, հմ. 3-4:

գործնականում կիրառելու հմտություններով: Բացի մասնագիտական կարողություններից նա գնահատում է ստորաբաժանման անձնակազմին առաջադրված մարտական խնդիրների կատարման ընթացքը և կանխատեսում է հնարավոր արդյունքները և հետևանքները,

բ) կրտսեր սպաների ծառայողական գործունեության վրա ազդող հոգեբանական գործոնների բացահայտման նպատակով հաշվի է առնվում նրանց մարտավարական ու օպերատիվ-մարտավարական օղակներում զբաղեցրած պաշտոնով պայմանավորված պատասխանատվության աստիճանը: Այդ ամենի հաշվառմամբ իրականացվում են անհատական հոգեկան հատկությունների և հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունների հետազոտություններ,

գ) ծառայողական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է սպայի՝ ենթակա անձնակազմում հոգեբանամանկավարժական դիտարկումներ կատարելու հմտություններով և գիտելիքներով:

Զինվորական գործունեության առանձնահատկությունները որոշվում են նպատակով, առարկայով, որին այդ գործունեությունն ուղղված է, միջոցներով, որոնց օգնությամբ այն կատարվում է, ինչպես նաև այդ գործունեության արդյունքներով<sup>2</sup>: Այդ արդյունքները պայմանավորված են այն բարոյական, հոգեբանական և ռազմամասնագիտական հատկություններով, որ սպային հաջողվում է ձևավորել անձնակազմի շրջանում: Այս համատեքստում կարևոր է նաև անհատական դաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպումը: Հրամանատարը պարտավոր է ուսումնասիրել և հաշվի առնել ենթակաների անձնային առանձնահատկությունները և պայմանավորված մարտական խնդիրներով ու առաջադրանքներով՝ կատարել հոգեբանական ընտրազատում: Հոգեբանական մասնագիտական ընտրազատումը միջոցառումների համալիր է՝ ուղղված կազմակերպության անձնակազմի արդյունավետ ընտրության ապահովմանը: Այն հիմնվում է անձնակազմի անհրաժեշտ հոգեֆիզիոլոգիական և անձնային հատկությունների զարգացման մակարդակի համապատասխանության գնահատման վրա<sup>3</sup>: Անձնակազմի հոգեբանական մասնագիտական ընտրազատումը կատարվում է ըստ պաշտոնին ներկայացվող պահանջների, որոնց հիման վրա էլ կազմվում են պաշտոնի անձնագրերը և մասնագիտագրերը: Մասնագիտագրի բաղադրիչ մասը հոգեակարագիրն է: Այն ներառում է այնպիսի պահանջներ, որոնք վերաբերում են տվյալ զինծառայողի անհատական հոգեբանական հատկություններին և հոգեֆիզիոլոգիական գործընթացներին<sup>4</sup>:

<sup>2</sup> Сту «Военная психология и педагогика». Под ред. П. А. Корчемного, Л. Г. Лаптева, В. Г. Михайловского. М., 1998, с.18:

<sup>3</sup> Сту А. Г. Маклаков. Профессиональный психологический отбор персонала. Теория и практика. СПб., 2008, с. 52:

<sup>4</sup> Сту Վ. Հ. Մարգարյան, Պաշտպանական ոլորտում կադրերի հոգեբանական մասնագիտական ընտրազատման հարցի շուրջ: «ՀԲ», 2012, հմ. 3:

Կրտսեր սպայի ծառայողական գործունեության արդյունավետությունը կախված է նրա տեսական և պրակտիկ գիտելիքի կիրառումից, կամային որակների դրսևորումից, նախաձեռնողականությունից և ստեղծագործական մոտեցումից, ինչպես նաև այն սուբյեկտիվ գործոններից, որոնք տարբեր իրավիճակներում կարող են խոչընդոտել ծառայողական գործունեությանը և նույնիսկ բացասական ազդեցություն ունենալ անձնակազմի տրամադրության վրա: Վերոնշյալից բխում է, որ անհրաժեշտ է կրտսեր սպաների մասնագիտական և անձնային որակների գնահատման համակարգում կարևորել ինչպես մասնագիտական գիտելիքները, այնպես էլ բարոյապես կայուն վարքը, որոշակի հոգեկան հատկություններն ու որակները: Ռուստի ուսումնասիրությունները պետք է միտված լինեն այն սուբյեկտիվ գործոնների բացահայտմանը, որոնք կարող են գիտելիքի գործնական կիրառության հարցում ունենալ բացասական ներգործություն: Անկախ մասնագիտացումից և մասնագիտական գործունեության բնույթից՝ կրտսեր սպաները պետք է տիրապետեն հիմնարար գիտելիքների, պրոֆեսիոնալ կարողությունների և հմտությունների, որոնք սահմանված են «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներով<sup>5</sup> և իրավական այլ ակտերով:

Ռուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ծառայողական գործունեության արդյունավետության մակարդակը ուղիղ համեմատական է մասնագիտական պիտանիությանը: Ըստ Լ. Դ. Բիտեխնինայի՝ տվյալ մասնագիտության համար մարդու պիտանիության որոշման համար անհրաժեշտ է անձի հոգեկան գործընթացների և հատկությունների շարքում ներառել արտակարգ իրավիճակներում ակտիվ գործողությունների պատրաստակամություն մշակելու և պահպանելու նրա հնարավորությունները: Իհարկե, գնահատման և մասնագիտական պիտանիության տեսանկյունից կարևոր են նաև ճանաչողական (կոգնիտիվ), ընկալողական (պերցեպտիվ), հուզակամային գործընթացները, բնավորության և խառնվածքի առանձնահատկությունները, մասնավորապես՝ ապրումակցման, հաղորդակցման, համառության, համբերատարության, հաստատակամության, ինտելեկտի ու հուզական ինտելեկտի, նյարդահոգեկան կայունությունը և հուզակայունության մակարդակը, ինքնակառավարման և ինքնակարգավորման կարողությունները և այլն: Դրանց ուսումնասիրումը կարևոր է ոչ միայն պատերազմական ժամանակաշրջանում և բարձր ռիսկային իրադրություններում, այլև խաղաղ պայմաններում զինվորական կոլեկտիվներում ներդաշնակ փոխհարաբերությունների ստեղծման և անձնակազմի պատշաճ կառավարման համար, ուստի անհրաժեշտ է նախօրոք ախտորոշել հոգեկան գործընթացները, անձնային և անհատական տիպաբանական առանձնահատկությունները,

<sup>5</sup> Տես ՀՀ 2017 թ. նոյեմբերի 15-ի «Ջինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» հմ. ՀՕ-195-Ն օրենքը (<https://www.arlis.am/documentview.aspx?docid=117633>):

մշակել նյարդահոգեկան լարվածությամբ պայմանավորված ստրեսային և տազնապային վիճակների կանխարգելման և շտկման գործիքակազմ՝ ծառայողական գործունեության ժամանակ ծագող խնդիրների լուծման համակողմանի և համակարգված մոտեցում ցուցաբերելու համար:

Այսպիսով՝ կրտսեր սպայի ծառայողական գործունեության արդյունավետության գնահատման համար անհրաժեշտ է առանձնացնել հետևյալ հիմնական բաղադրիչները.

1. «Ընդհանուր կազմակերպչական խնդիրների կատարում». սպայից պահանջվում են կազմակերպչական, ենթականերին համախմբելու ունակություններ, ենթակաների հետ շփման ժամանակ բարոյականային հատկանիշների դրսևորում, ենթակաների նկատմամբ դրական տրամադրվածություն, հոգատարություն և անհրաժեշտ մասնագիտական աջակցություն ցուցաբերելու պատրաստականություն: Այս դեպքում նշանակալիորեն բարձր է ենթակա անձնակազմի մասնագիտական գիտելիքների և հմտությունների մակարդակը:
2. «Կատարողականություն և կարգապահության պահպանում». սպան տիրապետում է կանոնադրությանը, գործնականում առաջնորդվում է համապատասխան օրենքներով և հրամաններով, իր գործառույթները կատարում է ժամանակին ու բարձր որակով, ցուցաբերում է ստեղծագործական մոտեցում՝ առաջնորդվելով առաջադրանքային կառավարման սկզբունքով, մշտապես հետևում է ստորաբաժանման կարգ ու կանոնին, պլանավորում և արդյունավետորեն իրականացնում է համապատասխան կանխարգելիչ-դաստիարակչական աշխատանքները:
3. «Մարտական պատրաստման կազմակերպում և կառավարում». մարտական պատրաստման հաստատված ծրագրին համապատասխան սպան անցկացնում է տեսական և գործնական պարապմունքներ, կիրառում ուսուցման արդյունավետ մեթոդներ և ձևեր, արդյունավետորեն օգտագործում է ռազմաուսումնական բազայի բոլոր հնարավորությունները, պարապմունքների ժամանակ ապահովում անձնակազմի փոխհամաձայնեցված և ներդաշնակ գործողությունները, կազմակերպում ենթակաների ինքնապատրաստման ժամերը՝ ապահովելով նրանց մասնագիտական խորհրդատվությամբ ու գրականությամբ, դիտարկում և գնահատում ինքնապատրաստման ընթացքն ու արդյունավետությունը:
4. «Իրավախախտումների, դեպքերի և պատահարների կանխարգելում». զինվորական կոլեկտիվի գործունեության համար սպան ստեղծում է լիարժեք անվտանգ պայմաններ՝ համապատասխան փաստաթղթերի պահանջների պարտադիր կատարմամբ: Նա ենթակաների շրջանում հետևողականորեն կատարում է մարտական հերթապահության ճշգրիտ իրականացմանն ուղղված նախապատրաստման աշխատանքներ և վերահսկում դրա ընթացքն ու որակը: Կանխատեսում և կան-



խարզելում է անձնակազմում հնարավոր միջադեպերն ու պատահարները: Կազմակերպում է անվտանգության կանոնների ուսուցման պարապմունքներ և իրականացնում հրահանգավորումներ: Ջինժառայողներին հաղորդում է իրենց պարտականությունների և իրավունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներ: Ջինվորական կարգապահության ամրապնդման խնդիրները իրականացնում է նպատակային և համակարգված կերպով: Անձնակազմում թերացումների և խախտումների դեպքում կիրառում է համապատասխան տույժեր, իսկ եթե տույժի տեսակը իր պաշտոնեական լիազորություններից դուրս է, ապա միջնորդություն ներկայացնում վերադաս հրամանատարությանը:

5. «Սոցիալ-իրավական խնդիրների լուծում».: Ենթականների միջանձնային հարաբերությունների ամրապնդման և համախմբման նպատակով պարբերաբար անցկացնում է տարաբնույթ սոցիալ-մշակութային միջոցառումներ: Պահպանում է հրամանատար-ենթակա կանոնադրային հարաբերություններ, ինչպես նաև առաջնորդվում զինվորական բարեկրթության կանոններով ու կոլեկտիվում սոցիալական արդարության գաղափարով՝ ձևավորելով փոխադարձ վստահության մթնոլորտ: Իրականացնում է հոգեբանամանկավարժական աշխատանքներ՝ ուղղված ենթակաների շրջանում թերությունների և ծառայողական պարտականությունների հանդեպ անտարբերության վերացմանը, կիրառում է խրախուսման և սոցիալական արդարության հաստատման մեխանիզմներ: Սոցիալական կամ իրավական խնդիրների առաջացման դեպքում ենթականերին տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն, անձնակազմի շրջանում խրախուսում է առողջ ապրելակերպը և ձեռնարկում համապատասխան միջոցառումներ: Ենթականների կենցաղային կարիքների և ակտիվ հանգստի կազմակերպման հարցերում հետևողական են ու նախաձեռնող:

6. «Սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների շահագործում և պահպանում».: սպան տիրապետում և առաջնորդվում է սպառազինության, ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների շահագործման և պահպանման վերաբերյալ ղեկավար փաստաթղթերի պահանջներով, լուծում է ստորաբաժանման ամրակցված սպառազինության ու ռազմական տեխնիկայի և այլ նյութական միջոցների շահագործման, սպասարկման և պահպանման խնդիրները: Առկա ուժերով և միջոցներով շինություններում պարբերաբար նախաձեռնում է բարեկարգման և գույքի նորոգման աշխատանքներ:

Այսպիսով՝ ԾԳԱ-ի բաղադրիչների վերհանումը հնարավորություն է տալիս գնահատելու կրտսեր սպայի իրականացրած մասնագիտական գործունեության արդյունավետությունը և պարտականությունների կատարման որակը, ինչպես նաև պարզելու նրա մասնագիտական գիտելիքները, ունակությունները և հմտությունները: Դա յուրահատուկ գործընթաց է, որը նպաս-

տում է կադրերի պատրաստման, ռազմական կրթության, զինծառայողների օպերատիվ ու մարտական պատրաստման և դաստիարակչական աշխատանքների արդյունավետության մեծացմանը: ԾԳԱ գնահատման համակարգի ներդրումը հնարավորություն կտա արդյունավետորեն կազմակերպելու և իրականացնելու կրտսեր սպայական կազմի առաջխաղացմանը վերաբերող հարցերը:

## ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ И ВОСПИТАНИЕ

### К ВОПРОСУ ОБ ОЦЕНКЕ ЭФФЕКТИВНОСТИ СЛУЖЕБНОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ МЛАДШЕГО ОФИЦЕРСКОГО СОСТАВА

*А. М. ГЕВОРГЯН, подполковник, соискатель кафедры психологии АГПУ, старший офицер отдела по идейно-правовым и информационным работам Управления МПО ВС РА*

#### РЕЗЮМЕ

С точки зрения поддержания боеспособности и обеспечения ее непрерывного повышения в Вооруженных силах важное и существенное значение имеют изучение эффективности служебной деятельности (ЭСД) и в частности ее психологических составляющих, выявление факторов, препятствующих профессиональной деятельности офицерства, и организация работ по устранению этих факторов. В частности, для оценки эффективности служебной деятельности младшего офицерского состава выделяются следующие основные составляющие – выполнение общих организационных задач, исполнительность и поддержание дисциплины, организация и контроль за боевой подготовкой, предотвращение правонарушений, случаев и происшествий, решение социально-правовых проблем, эксплуатация и содержание вооружения, военной техники и других материальных средств. Выявление компонентов ЭСД позволяет оценить эффективность профессиональной деятельности офицера и выполнения им своих обязанностей, а также решить некоторые вопросы продвижения младшего офицерского состава.

**MILITARY PSYCHOLOGY AND EDUCATION**

**TO THE ISSUE OF EVALUATING THE SERVICE EFFICIENCY  
OF JUNIOR OFFICERS**

*H. M. GEVORGYAN, Lieutenant Colonel, Applicant, Chair of Psychology, YSPU,  
Senior Officer, Unit, Ideological-Legal and Informational Activities, Department  
of Moral and Psychological Support, the RA Armed Forces*

**SUMMARY**

From the point of maintaining the combat effectiveness in the Armed Forces and continuously raising its level, it is significant and worthwhile to study the officers' service efficiency (SE), and particularly its psychological components, to identify the factors hindering their professional activity, and to organize the activity aimed at eliminating those. In particular, the following main components are highlighted for the evaluation of the junior officer's service efficiency: accomplishment of general organizational tasks, performance and maintenance of discipline, organization and control over combat training, prevention of breaches, incidents and accidents, solution of social-legal problems, exploitation and maintenance of armaments, military equipment and other material means. Disclosure of the SE components provides an opportunity to evaluate the efficiency of professional activities and responsibilities carried out by the officer, as well as to address issues regarding the promotion of junior officers.

**ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՄԱՅԻՆ ՎԱՐԱԿԻ  
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՐԱՆՈՒԹՅԱՆ, ԿԼԻՆԻԿԱՅԻ, ԱԽՏՈՐՈՇՄԱՆ  
ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*Ս. Գ. ԳԱԼՍՏՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ԵՊԲՀ ռազմաբժշկական կրթագիտական կենտրոնի տնօրեն,  
Գ. Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ,  
ԵՊԲՀ ճառագայթային ախտորոշման ամբիոնի վարիչ, ԵՊԲՀ  
հետրուհական և մասնագիտական կրթության գծով պրոռեկտոր,  
Ս. Զ. ՆԱՐԻՄԱՆՅԱՆ, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,  
ընտանեկան բժշկության ամբիոնի վարիչ, Վ. Ա. ԱՍՈՅԱՆ, բժշկական  
գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ ինֆեկցիոն  
հիվանդությունների ամբիոնի վարիչ, Վ. Վ. ԾԱՏՈՒՐՅԱՆ, ք/ծ գնդապետ,  
բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԵՊԲՀ  
ռազմաբժշկական ֆակուլտետի պետ, Ս. Վ. ՍԱՐԳՍՅԱՆ, ք/ծ  
փոխգնդապետ, բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ  
ԿԿԶՀ առաջատար թերապևտ, Ա. Ս. ՍԱՏՈՒՐՅԱՆ, ք/ծ գնդապետ,  
ՀՀ ՁՈՒ-ի հիգիենիկ և հակահամաճարակային ծառայության պետ,  
Ա. Ա. ՇԱՀՎԵՐԴՅԱՆ, Արտաշատի COVID կենտրոնի 3-րդ ինֆեկցիոն  
բաժանմունքի վարիչ, Ս. Ռ. ՕՀԱՆՅԱՆ, ք/ծ գնդապետ, ՀՀ ՁՈՒ-ի  
ռազմաբժշկական վարչության պետ*

Սույն հոդվածում արծարծվում են նոր կորոնավիրուսային վարակի՝ COVID-19-ի համաճարակաբանության, կլինիկայի, ախտորոշման և բուժման հարցերը\*։ Այստեղ մենք ձգտել ենք COVID-ի բուժման մեր փորձի լույսով վերլուծելու և ի մի բերելու մասնագիտական գրականության մեջ եղած ու առավելապես հավաստի համարվող տվյալները։

**ՀԱՄԱՃԱՐԱԿԱՐԱՆՈՒԹՅՈՒՆ**

SARS-CoV-2-ի բնական ռեզերվուարը չլիցենզիան է։ Որպես լրացուցիչ ռեզերվուար կարող են ծառայել չլիցենզիան ուսող այլ կաթնասուններ՝ շներ, կատուներ և այլն, որոնք հետագայում այն տարածում են մարդկանց շրջանում։

Ըստ որոշ հետազոտությունների՝ մոդեսանման պանգոլինները (*Pho-lidota*) կարող են լինել SARS-CoV-2-ի միջանկյալ տերեր, սակայն տվյալ եզրակացությունը դեռ կարիք ունի հետագա հաստատման։

Անջատված շտամների ֆիլոգենետիկ հետազոտությունները ցույց են

---

\* COVID-19-ի պատճառագիտության, SARS-CoV-2 վիրուսի ազդեցության մեխանիզմի և հիվանդության ախտածագման պրոբլեմների մասին (տես Ս. Գ. Գալստյան և ուրիշներ, Որոշ խորհրդածություններ նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ։ «ՀԲ», 2020, հմ. 3)։

տվել, որ չղջիկներից և բուժառուներից (պացիենտներ) անջատված վիրուսների գենոմի հաջորդականությունները 99 %-ով համապատասխանում են միմյանց:

Ներկայումս վարակի փոխանցման հիմնական աղբյուրը հիվանդ մարդն է, ներառյալ՝ ինկուբացիոն շրջանում գտնվող անձը:

Վիրուսը փոխանցվում է օդակաթիլային ճանապարհով՝ հազալու կամ փռշտալու ժամանակ, երբ վիրուս պարունակող կաթիլներն ընկնում են տարբեր առարկաների և հողի վրա, որտեղից էլ դրանց հետ շփվող անձանց ձեռքերի միջոցով փոխանցվում են աչքերին, քթի կամ բերանի խոռոչին:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ չի կարելի բացառել վիրուսի փոխանցումը կղանքի կամ բերանի (հիմնական ուղի չէ), արյան և քթի միջոցով, ինչպես նաև ներարգանդային (վերջինիս վերաբերյալ եղած տվյալները դեռևս արժանահավատ չեն) ճանապարհով: Օդով վիրուսի փոխանցումը, ըստ ԱՀԿ տվյալների, քիչ հավանական է:

Վարակի ներհիվանդանոցային տարածումը Չինաստանում արձանագրված դեպքերին բնորոշ չի եղել: Սակայն հաստատված է վիրուսի փոխանցումը հիվանդից բուժկազմին:

Հիվանդի հետ սերտորեն շփվելու պարագայում վարակման ռիսկը կազմում է 1-5 %, մեծ մասամբ (դեպքերի 75-85 %-ը) վիրուսի փոխանցումը կատարվում է ընտանիքի պայմաններում:

Ենթադրվում է, որ վիրուսի ավելի արդյունավետ փոխանցում տեղի է ունենում բարձր խոնավության և ցածր ջերմաստիճանների պայմաններում, սակայն հստակ համահարաբերակցություն չի նշվում:

Հիվանդից վիրուսի արտազատումը կարող է կատարվել հիվանդության կլինիկական դրսևորումից 48 ժամ առաջ՝ առավելապես առաջին 1-3 օրվա ընթացքում, և շարունակվել մինչև 12 օր (հիվանդության թեթև ու միջին ծանրության դեպքում և 2 շաբաթից ավելի (ծանր ընթացքի դեպքում)):

Հիվանդության ինկուբացիոն շրջանը 1-14 օր է, կարող է ընթանալ առանց ախտանշանների, թեթև, միջին ծանրության և ծանր ձևով՝ մահվան ելքի վտանգով:

Ախտանշանները զարգանում են միջինը վարակվելուց 5-6 օր անց: Թեթև ձևով հիվանդներն առողջանում են 1 շաբաթվա ընթացքում:

Ըստ որոշ տվյալների՝ վիրուսը կենսունակ է մնում օդում մի քանի ժամ, ապակյա և պլաստմասե իրերի մակերևույթներին՝ մինչև 2-3 օր:

Հարուցչի նկատմամբ ընկալունակությունը մեծ է: Իմունիտետի մասին տվյալներն աղքատիկ են:

Ռիսկի խմբեր են համարվում 60 տարեկանից մեծ տարիքի մարդիկ և քրոնիկական հիվանդություններով տառապող անձինք (շաքարային դիաբետ, շնչառական օրգանների, սրտանոթային համակարգի, ուռուցքաբանական հիվանդություններ):

Մահաբերությունը 3-5 % է: Սակայն քանի որ թեթև ձևերով և առանց ախտանշանների հիվանդները գործնականում բժշկի չեն դիմում, մահաբերության իրական ցուցանիշները կարող են լինել 1 %-ից էլ ցածր:

ԿԼԻՆԻԿԱՆ

Ներկայումս ընդունված է համարել, որ *COVID-19-ի* հիմնական կլինիկական ձևերն են.

- սուր շնչառական վիրուսային վարակում` թեթև ընթացքով,
- թոքաբորբ` առանց շնչառական անբավարարության,
- թոքաբորբ` սուր շնչառական անբավարարությամբ,
- սուր շնչառական դիստրես համախտանիշ,
- սեպսիս,
- սեպտիկ (թունավարակային) ցնցակաթված:

Հիվանդության սկզբնական շրջանում սպեցիֆիկ ախտանշաններ, որպես կանոն, չեն նկատվում: *COVID-19-ի* առաջին ախտանշաններից են մարմնի ջերմության բարձրացումը (դեպքերի 83–99 %), չոր կամ փոքր քանակությամբ խորխով հազը (59–82 %), դյուրահոգնությունը (44–70 %), ախորժակի նվազումը (40–84 %), հևոցը (31–40 %), մկանային ցավերը (11–35 %): Ավելի հազվագյուտ են գլխացավը, գիտակցության մթազումը, արյունախխումը, սրտխառնոցը, փսխումը և թուլությունը:

Վարակման սկզբնաշրջանում վերը նշված ախտանշանները կարող են դիտվել առանց մարմնի ջերմության բարձրացման:

Եթե *COVID-19-ի* ընթացքը հիշեցնում է դասական ՍՇՀ, ապա հիվանդությունն սկսվում է սուր, դիտվում են ինքնաթունավորման միջին արտահայտվածությամբ երևույթներ և վերին շնչուղիների ախտահարման նշաններ:

Դումային (կատառային) համախտանիշը մեծ մասամբ դրսևորվում է հազով, կոկորդում քորով, հազվադեպ` հարբուխով: Ջննման ժամանակ նկատվում է ընկանի հետին պատի կարմրություն, քթի լորձաթաղանթի այտուց և կարմրություն:

Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության տվյալների` աշխարհում արձանագրված *COVID-19-ի* դեպքերի 80 %-ը թեթև, 15 %-ը` միջին ծանրության և 5 %-ը` ծանր ձևեր են:

40 տարեկանից ցածր տարիքի անձանց շրջանում մահվան ելքի հավանականությունը կազմում է 0,2 %, 60–80 տարեկանների դեպքում` 3,6 %, իսկ 80 և ավելի տարեկանների` գրեթե 15 %:

Ծանր ընթացքով *COVID-19-ով* հիվանդների շրջանում առաջին շաբաթվա ընթացքում (3–7 օր) ի հայտ են գալիս ստորին շնչուղիների ախտահարմամբ պայմանավորված ախտանշաններ` հևոց (55 %), օդի անբավարարության զգացում, կրծքավանդակի ճնշման զգացողություն (20 %), ինքնաթունավորման հարաձուլություն, հազի ուժեղացում, խորխի առաջացում (28 %), արյունախխում (5 %):

Թեթև ընթացքի դեպքում բախազննմամբ (պերկուտոր եղանակով) հայտնաբերվում է թոքային հնչյունի բթացում, բուժունկնդրման (աուսկուլտատիվ) եղանակով` երկու կողմից լսվում են թաց մանր բշտիկավոր և կրեպիտացվող խզզոցներ: Առավելագույն ներշնչման ժամանակ խզզոցները

դառնում են ավելի ինտենսիվ, հազալուց հետո չեն անհետանում, կախված չեն հիվանդի դիրքից:

Ռենտգեն հետազոտության ժամանակ հիմնականում դիտվում է թոքային դաշտերի ծայրամասային հատվածների ներսփռում (ինֆիլտրացիա): Այս կենսընթացի հարաճունության դեպքում զարգանում է սուր շնչառական դիստրես համախտանիշ:

Հիվանդության ծանր ընթացքի վկայություններն են շնչառական անբավարարության արագ հարաճումը, հևցի ուժգնացումը, թթվածնահագեցման (սատուրացիա) նվազումն ըստ զարկերակաչափության տվյալների: Այս ախտանշանները ինտենսիվ թերապիայի բաժանմունքում հիվանդի՝ անհապաղ հոսպիտալացման կլինիկական ազդանշաններ են:

Մի շարք հեղինակներ պնդում են, որ հիվանդանոց ընդունված բոլոր հիվանդների ռենտգեն հետազոտությամբ հայտնաբերվում են թոքաբորբի պատկեր՝ ներսփռմամբ, ինչպես նաև համակարգչային շերտագրությամբ «փայլատ ապակու» ախտանշան: Ընդ որում, թոքաբորբ կարող է ախտորոշվել նաև առանց ախտանշաններով հիվանդի պարագայում:

Բուժառույթի 1/3-ի օրգանիզմում զարգանում է սուր շնչառական դիստրես համախտանիշը:

Հղիների դեպքում հիվանդության որոշ ախտանշաններ կարող են նման լինել հղիությանը օրգանիզմի հարմարվելու նշաններին կամ ուղեկցվել հղիության հետ կապված կողմնակի երևույթներով: Դրանք կարող են դրսևորվել տենդի, հևցի և հոգնածության ձևով:

Հիվանդանալ կարող են բոլոր տարիքի երեխաները, սակայն, որպես կանոն, հիվանդության ընթացքն ավելի թեթև է, թեև ուղեկցվում է մեծահասակներին բնորոշ դրսևորումներով, ներառյալ՝ թոքաբորբը: Բարդություններ հանդիպում են հազվադեպ, ընդամին դրանց ընթացքը լինում է համեմատաբար ավելի թեթև: Կան մի շարք հաղորդումներ, որ *COVID-19-ը* կարող է 8–15 տարեկան երեխաների օրգանիզմում հարուցել Կավասակիի հիվանդության զարգացում, թեև այն, որպես կանոն, հանդիպում է 1–8 տարեկան երեխաների շրջանում:

Կավասակիի հիվանդությունը միջին տրամաչափի զարկերակների անոթաբորբ (վասկուլիտ) է, ընդ որում, առավել կարևոր է հենց պսակաձև զարկերակների բորբոքումը, քանի որ դրանք են ախտահարվում բուժում չստացած բուժառույթի մոտ 20 %-ի շրջանում: Վաղ դրսևորումները ներառում են սրտային անբավարարությամբ սուր միոկարդիտ, առիթմիա, էնդոկարդիտ ու պերիկարդիտ: Հետագայում կարող են ձևավորվել պսակաձև զարկերակների անոթալայնանքներ (անևրիզմաներ): Հիվանդության ժամանակ կարող է զարգանալ նաև արտանոթային հյուսվածքների բորբոքային կենսընթաց, մասնավորապես՝ ներառելով վերին շնչուղիները, ենթաստամոքսային գեղձը, լեղուղիները, երիկամները, լորձաթաղանթները և ավշահանգույցները:

Ըստ մի շարք հեղինակների՝ *COVID-19-ն* ուղեկցվում է խիստ արտահայտված բորբոքային կենսընթացներով, ներառյալ՝ ցիտոկինային փոթորի-

կով: Բորբոքամետ ցիտոկինների բարձր մակարդակները վկայում են երկրորդային հեմոֆագոցիտային լիմֆոհիստիոցիտոզի զարգացումը:

*COVID-19-ի* հնարավոր բարդություններն են՝ սուր շնչառական դիստրես համախտանիշը (15–33 %), սուր շնչառական անբավարարությունը (8 %), սուր սրտային անբավարարությունը (7–20 %), երկրորդային վարակումը (6–10 %), սուր երիկամային անբավարարությունը (14–53 %), սեպտիկ ցնցումակաթվածը (4–8 %), կարդիոմիոպաթիան (33 %), տարածուն ներանոթային մակարդումը (71 %), չեն բացառվում նաև հղիության բարդությունները:

### ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ

Ախտորոշման հիմնական եղանակներն են.

#### 1. թեստավորումը.

- պոլիմերազային շղթայական ռեակցիա (ՊՇՈ՝ PCR, ՈԼՐ), որի միջոցով հնարավոր է վիրուսը ախտորոշել իրական ժամանակում հետադարձ տրանսկրիպցիայով: Որպես նմուշ լավագույնը խորխն է, սակայն կարող է օգտագործվել նաև վերին շնչուղիների լորձը: Եթե կա վարակման կասկած, սակայն թեստը բացասական է, անհրաժեշտ է նմուշներ վերցնել շնչառական ուղիների տարբեր հատվածներից,

- շիճուկաբանական (սեռոլոգիական) թեստեր, որոնցով թեև չի որոշվում օրգանիզմում վիրուսի առկայությունը, սակայն սրանց միջոցով որոշվում է *SARS-CoV-2* վիրուսի նկատմամբ իմունիտետի, այսինքն՝ արյան մեջ IgM (ցույց է տալիս մոտ ժամանակահատվածում վիրուսով վարակվածությունը) և IgG (ցույց է տալիս վիրուսով վարակվածությունը երկար ժամանակ առաջ) հակամարմինների առկայությունը:

#### 2. Ճառագայթային ախտորոշումը.

ա) կրծքավանդակի երկու պրոյեկցիայով ստանդարտ ռենտգեն հետազոտության ժամանակ վիրուսային թոքաբորբի ախտանիշներից են.

- թոքանկարի երկկողմանի ուժեղացումը,
- թոքի հյուսվածքի պնդացած, ցածր և միջին ինտենսիվությամբ բազմաթիվ երկկողմանի օջախներ՝ առանց հստակ և ոչ հավասար եզրագծերի (երևում են անոթները և կարող է լինել «օդային բրոնխոգրաֆիայի» ախտանշան),

- ավելուլային ներսփռվածքի (ինֆիլտրացիա) միջին և մեծ ինտենսիվությամբ բազմաթիվ երկկողմանի օջախներ, որոնք իրենց լայն հիմքով ուղղված են դեպի թոքամիզը կամ ծուլվող բնույթի են (հարաճուն ընթացքի պարագայում),

- փոփոխություններն ըստ տեղակայման գլխավորապես ենթաթոքանձային են՝ հիմքային (բազալ) բնույթի,

- թոքերի ռենտգեն նկարը կարող է ցույց տալ ինֆիլտրատի առկայությունն երկու թոքում, հազվադեպ՝ մեկ թոքում,

բ) ախտորոշման տեսակետից թոքերի ՀՇ-ն հստակ է, հայտնաբերվում է «փայլատ ապակու» (անթափանց ապակի) ախտանշանը,

#### 3. արյան կլինիկական և կենսաքիմիական հետազոտությունները:



Քանի որ *COVID-19-ի* կլինիկական ընթացքը լինում է տարբեր, ապա խիստ կարևոր է ժամանակին հայտնաբերել այն բուժառուներին, որոնց հիվանդությունը մեծ հավանականությամբ կլինի ծանր ձևի: Դրա համար պահանջվում է կատարել համապատասխան կենսաբանական հետքանշիչների հետազոտություններ:

- արյան մեջ բարձր է լինում IL-2-ի, IL-7-ի, IL-10-ի, GCSF-ի, IP-10-ի, MCP1-ի, MIP1A-ի, և TNF $\alpha$ -ի մակարդակը,

- խիստ որոշակի նշանակություն է տրվում նաև էոզինոպենիային, լիմֆոպոնիային, պրոկալցիտոնինի մակարդակի բարձրացմանը, ԱՏՏ, ԱՍՏ, ԼԴԳ, C-ռեակտիվ սպիտի, ֆերիտինի, D-դիմերի մակարդակների բարձրացմանը, թրոմբոցիտոպենիային, պրոթրոմբինային ժամանակի երկարացմանը:

Հարկ է նշել, որ թրոմբոցիտների թվի նվազումը և D-դիմերի մակարդակի բարձրացումը *COVID-19-ի* ելքի տեսակետից համարվում են անբարենպաստ:

#### ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԱՆՏՈՐՈՇՈՒՄ

Ըստ ախտանշանների՝ *COVID-19-ն* անհնար է տարբերակել մյուս շնչառական վարակումներից, հատկապես՝ սկզբնական շրջանում: Էական և սկզբունքային նշանակություն ունեն համաճարակաբանական անամները, խմբակային դեպքերը, ՊՇՌ հետազոտությունը, թոքերի ՀՇ-ն:

Հարկ է նշել, որ չի կարելի բացառել *SARS-CoV-2-ի* հետ նաև սուր շնչառական հիվանդությունների տարբեր հարուցիչների միաժամանակյա հայտնաբերումը (համավարակում՝ կոինֆեկցիա):

#### ԲՈՒԺՈՒՄ

Եթե հաշվի առնենք ՀՀ-ում ստեղծված իրավիճակը, կորոնավիրուսով վարակվածների թվի կտրուկ աճումը և, ըստ որոշ կանխատեսումների, հետագա ավելացումը, ուստի և ծանր ու ծայրահեղ ծանր հիվանդների թվի ավելացումը, ապա առողջապահական, տնտեսական ու քաղաքական ձգնաժամից խուսափելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է.

1. պատճառագիտական հակավիրուսային բուժում չլինելու պարագայում շեշտը դնել վարակի հնարավորինս վաղ հայտնաբերման վրա, ինչի համար պետք է՝

ա) բոլոր բնակավայրերում, այդ թվում՝ քաղաքներում (ոչ միայն Երևանում ու Գյումրիում), կտրուկ կերպով մեծացնել թեստավորումների ծավալը, մատչելիությունը, ընդամին այդ գործում ընդգրկել այլ մարզերի ոչ պետական լաբորատոր ախտորոշման բժիշկներին, բուժքույրերին և այլ աշխատողներին, ծեռք բերել կենսանվտանգության 2-րդ մակարդակի կաբինետներ, պոլիմերազային շղթայական ռեակցիան կատարող սարքեր և թեստեր,

բ) բոլոր մարզերում բացել համակարգչային շերտագրության կենտրոններ կամ այդ նպատակով վերակազմավորել եղածներն, դրանք ապահովել առանձին մուտքերով և բժշկական անձնակազմի ու բուժառուների անվտանգության համար հակահամաճարակային պարագաներով, քանի որ *COVID-19-ի* ժամանակ թոքերի ինտերստիցիալ այտուցը կամ պնևմոնիոզը

հիվանդության վաղ շրջանում հայտնաբերվում են միայն ՀՇ հետազոտությանը,

2. սահմանել հավելյալ բարձր աշխատավարձ կորոնավիրուսի հետ աշխատող բժիշկների, միջին ու կրտսեր բուժանձնակազմի, ինչպես նաև տեխնիկական ու լաբորատորիաների աշխատողների համար,

3. շեշտը դնել *COVID-19-ի* արդյունավետ պաթոգենետիկ բուժման վրա, ընդսմին հստակ կերպով սահմանել, թե հիվանդության ո՞ր պաթոգենետիկ փուլում, ինչ կլինիկական, լաբորատոր, գործիքային չափանիշներ են առկա և ինչ դեղորայքային բուժում է անհրաժեշտ, որպեսզի հնարավորինս նվազեցվի ծանր ու ծայրահեղ ծանր ընթացքով հիվանդների թիվը՝ հիվանդությունը թեթև և միջին ծանրության փուլերում կանգնեցնելու շնորհիվ:

Ըստ ծանրության աստիճանների հիվանդությունն ունի թեթև, միջին, ծանր և ծայրահեղ ծանր ընթացք:

1. *Թեթև ընթացքը ներառում է անախտանիշ (ասիմպտոմ) ձևերը, ինչպես նաև այն դեպքերը, երբ մարմնի ջերմաստիճանը կարճատև բարձրանում է, առկա են ընդհանուր ինքնաթունավորման թեթև նշաններ՝ համի, հոտի զգացողության նվազում կամ վերացում, գլխացավ, անքնություն, ընդհանուր թուլություն, բկանցքի քերոզ ցավ:* Լաբորատոր անալիզներն առանց փոփոխության են կամ նվազագույն շեղումներով, ՀՇ-ն՝ առանց փոփոխության: Բուժումն է՝ ախտանշանային՝ հեղուկները, վիտամին C-ն, D-ն, ցինկը, պարացետամոլը, տարբեր ԲԱԴ-եր (օրինակ՝ արծաթի կոլոիդային կախույթը և այլն): Հնարավոր է նաև օգտագործել ազիթրոմիցին (500 մգ օրը 1 անգամ):

2. *Միջին ծանրության ընթացքի դեպքում* կլինիկորեն առկա են չոր հագ, մարմնի կայուն ֆեբրիլ ջերմաստիճան 5 և ավելի օր տևողությամբ: Արյան լաբորատոր հետազոտության ժամանակ հայտնաբերվում է լիմֆոպենիա, C-ռեակտիվ սպիտի մակարդակի բարձրացում մինչև 15–20 (նորման մինչև 5 է), D-դիմերը հասնում է 500–1000-ի (նորման՝ մինչև 500):

Թոքերի ՀՇ պատկերում առկա է ինտերստիցիալ այտուց և ծայրամասային օջախների գոյացում՝ առանց համախմբման նշանների՝ «փայլատ ապակու» ախտանշանով:

Բուժման համար խորհուրդ է տրվում կիրառել.

ա) ցածր մոլեկուլային հեպարիններ՝ ներանոթային տարածուն մակարդման համախտանիշի՝ կանխարգելման կամ բուժման համար, օրինակ՝ 400–800 միավ. Էնոքսապարինի ենթամաշկային ներարկում,

բ) կենսաբանական բուժում թիրախային մոնոկլոնալ հակամարմիններով.

• ինտերլեյկին 1-2-ի արտազատումը կանգնեցնելու նպատակով Յանուս կինազայի պաշարիչներ (բարիցիտինիբ),

• ինտերլեյկին 6-ի արտազատումը և ցիտոկինային փոթորիկը կանգնեցնելու նպատակով (տոցիլիզումաբ կամ սիրալումաբ):

3. *Հիվանդության ծանր ընթացքի դեպքում* առկա են կլինիկական ախտանշանների վատթարացում, մասնավորապես՝ սատուրացիայի նվազում 98 %-ից ցածր, խորը լիմպոպենիա, թրոմբոցիտոպենիա, ֆիբրինոգենի

աճում, C-ռեակտիվ սպիտի մակարդակի բարձրացում մինչև 50–100, D-դիմերի՝ մինչև 1000–1500, պրոկալցիտոնինի մակարդակի բարձրացում (հնարավոր է՝ միացել է բակտերիալ վարակ), ՀՇ պատկերում օջախները շատանում են, միանում իրար:

Բուժման համար խորհուրդ է տրվում.

ա) ցածր մոլեկուլային հեպարիններ՝ ներանոթային տարածուն մակարդման համախտանիշի՝ կանխարգելման կամ բուժման համար, օրինակ՝ 400–800 միավ. Էնքսապարինի ենթամաշկային ներարկում,

բ) կենսաբանական բուժում թիրախային մոնոկլոնալ հակամարմիններով.

• ինտերլեյկին 1-2-ի արտազատումը կանգնեցնելու նպատակով Յանուս կինազայի պաշարիչներ (բարիցիտինիբ),

• ինտերլեյկին 6-ի արտազատումը և ցիտոկինային փոթորիկը կանգնեցնելու նպատակով (տոցիլիզումաբ կամ սիրալումաբ)

գ) լայն սպեկտրի հակաբակտերիալ թերապիա՝ լևոֆլոքսացին կամ մոքսիֆլոքսացին և այլն,

դ) թթվածնային թերապիա:

4. *Հիվանդության ծայրահեղ ծանր ընթացքի* դեպքում զարգանում է շնչառական դիստրես համախտանիշը և արյան ներանոթային մակարդեղիության համախտանիշանման վիճակ (Սանարելի-Շվարցմանի փորձարարական երևույթ): Հիվանդները նշում են շնչառական շարժումների խիստ հաճախացում, դժվարացում, դիտվում է թթվածնահագեցման անկում մինչև 60 %, լիպֆոպենիա, թրոմբոցիտոպենիա, բարձրանում են ֆիբրինոգենի, C-ռեակտիվ սպիտակուցի (մինչև 150), D-դիմերի (մինչև 1500–2500), մակարդակները թոքերի ՀՇ պատկերում առկա է լինում ցնցակաթվածային թոքի պատկեր:

Բուժման համար խորհուրդ է տրվում թթվածնաբուժում (օքսիգենոթերապիա), թոքերի արհեստական շնչառություն, հեպարինոթերապիա, ռեկոնվալեսցենտ պլազմայի կիրառում, արյան էքստրակոր-պորալ թթվածնացում, ինտենսիվ թերապիա՝ արյան գազերի, էլեկտրոլիտների, արյան դինամիկական ցուցանիշների մշտազննման պայմանով:

Դեքսամետազոնի վերաբերյալ: Դեռ 2020 թ. հունիս ամսին Օքսֆորդի համալսարանի «Ռեքավերի Թրայալ» («RECOVERY Trial») կլինիկական հայտարարեց, ապա և հրապարակեց իր կատարած հետազոտության նախնական արդյունքները, համաձայն որոնց՝ դեքսամետազոնը կարող է նվազեցնել COVID-19-ով հոսպիտալացված հիվանդների շրջանում մահվան դեպքերը, հատկապես՝ նրանց, ովքեր ստանում են թթվածին (մոտ 20 %-ով) կամ միացված են արհեստական օդափոխության սարքին (մոտ 30 %-ով): Ռանդոմացված հետազոտությանը մասնակցել է Մեծ Բրիտանիայից շուրջ 2104 մարդ: Նրանք 10 օր շարունակ ստացել են օրեկան միանվազ 6 մգ դեղաչափ, իսկ հսկողական խումբը կազմում էին առանց դեքսամետազոնի սովորական բուժում ստացող 4321 բուժառու: Դրական տեղաշարժեր մեծ մասամբ նկատվել են շնչառական օժանդակության կարիք ունեցող բուժա-

ռուների շրջանում: Մի շարք մասնագետներ հանդես են եկել կոչով, պահանջելով հնարավորինս կարճ ժամկետներում հրապարակել եղած բոլոր տվյալները, որպեսզի ապահովվի արդյունքների վերլուծության համար բավարար հիմք: Ըստ Առողջապահության համաշխարհային կազմակերպության՝ դեքսամետազոն պետք է ստանան ստացիոնարում *COVID-19-ից* բուժում ստացող ծանր և ծայրահեղ ծանր վիճակում գտնվող հիվանդները:

ՀՀ-ում դեքսամետազոնը կիրառվել է *COVID-19-ի* ախտորոշումով հիվանդների թոքերի համակարգչային շերտագրության, CRP-ի, ինտերլեյկին /IL-6-ի և D-դիմերի մակարդակների հաշվառմամբ հստակեցված դեղաչափերով: Նախնական արդյունքներն ավելի քան գոհացուցիչ են:

Հիմնավորվել է նաև դեքսամետազոնի ներերակային և ներուլայգերով համատեղ կիրառումը, ինչը նպաստում է ծանր վիճակում գտնվող հիվանդների ապաքինման և մահացության մակարդակի իջեցմանը:

Կան տվյալներ նաև հորմոնալ պոլիս-թերապիայի արդյունավետ կիրառման մասին: Լենդեսիվիրի կամ ավիֆավիրի կիրառման վերաբերյալ ևս կան որոշակի դրական տվյալներ:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *А. Д. Макацария, К. Н. Григорьева, М. А. Мингалимов, В. О. Бицадзе и др.* Коронавирусная инфекция (COVID-19) и синдром диссеминированного внутрисосудистого свертывания. «Obstetrics Gynecology and Reproduction», April 2020 (<https://www.researchgate.net/publication/340533992>).
2. *Dominic Wichmann, Jan-Peter Sperhake, Marc Lütgehetmann, Stefan Steurer et al.* Autopsy Findings and Venous Thromboembolism in Patients With COVID-19: A Prospective Cohort Study. «Annals of Internal Medicine», 6 May 2020.
3. *S. A. Ebrahimi.* Noscipine, a possible drug candidate for attenuation of cytokine release associated with SARS-CoV-2. «Drug Development Research», 26 April 2020.
4. *Renhong Yan, Yuanyuan Zhang, Yaning Li, Lu Xia et al.* Structural basis for the recognition of SARS-CoV-2 by full-length human ACE2. «Science», 27 March 2020, Vol. 367, Issue 6485.
5. *F. L. van de Veerdonk, M. G. Netea, M. van Deuren, J. W. van der Meer et al.* Kallikrein-kinin blockade in patients with COVID-19 to prevent acute respiratory distress syndrome. «eLife», 27 April 2020.
6. *Zsuzsanna Varga, Andreas J. Flammer, Peter Steiger, Martina Haberecker et al.* Endothelial Cell Infection and Endotheliitis in COVID-19. «The Lancet», 20 April 2020, Vol. 395.

**К ВОПРОСУ ОБ ЭПИДЕМИОЛОГИИ, КЛИНИКЕ, ДИАГНОСТИКЕ  
И ЛЕЧЕНИИ НОВОЙ КОРОНАВИРУСНОЙ ИНФЕКЦИИ**

*С. Г. ГАЛСТЯН, доктор медицинских наук, профессор, начальник  
Военно-медицинского учебно-научного центра ЕГМУ;*

*Г. А. АВETИСЯН, кандидат медицинских наук, доцент, заведующий кафедрой  
лучевой диагностики ЕГМУ, проректор по послевузовскому и*

*профессиональному образованию ЕГМУ; М. З. НАРИМАНЯН, доктор  
медицинских наук, профессор, заведующий кафедрой семейной медицины;*

*В. А. АСОЯН, кандидат медицинских наук, доцент, заведующий кафедрой  
инфекционных заболеваний ЕГМУ; В. В. ЦАТУРЯН, полковник м/с, кандидат  
медицинских наук, доцент, начальник Военно-медицинского факультета ЕГМУ;*

*М. В. САРГСЯН, подполковник м/с, кандидат медицинских наук, доцент,  
ведущий терапевт ЦКВГ МО РА; А. М. САТУРЯН, полковник м/с, начальник  
служб гигиенической и противозидемической службы ВС РА;*

*А. А. ШАХВЕРДЯН, заведующий 3-го инфекционного отделения  
Артшатского COVID центра; С. Р. ОГАНЯН, полковник м/с, начальник  
Военно-медицинского управления ВС РА*

**РЕЗЮМЕ**

Статья посвящена вопросам эпидемиологии, клиники, диагностики и лечения нового коронавирусного заболевания – *COVID-19*. По данным медицинского поисковика «*Pubmed*» к настоящему времени остаются не до конца решенными многие вопросы относительно эпидемиологии заболевания. Особенно тревожными являются аспекты второй и третьей волны новой коронавирусной инфекции. Приведенные данные свидетельствуют о том, что ученым удалось разработать алгоритм диагностики *COVID-19*. Особо обнадеживают данные о возможной разработке стандартов лечения в увязке с данными лабораторно-инструментальных исследований.

В статье подробно представлены схемы лечения *COVID-19* в зависимости от степени тяжести заболевания, описаны данные применения дексаметазона. Авторами проведен подробный анализ применения лекарств в увязке с уровнями *C*-реактивного белка (*CRP*), *D*-димера, интерлейкина 6 (*IL6*) и т. д.

**MILITARY MEDICINE**

**ON THE EPIDEMIOLOGY, CLINICAL PICTURE, DIAGNOSIS  
AND TREATMENT OF THE NEW CORONAVIRUS INFECTION**

*S. G. GALSTYAN, Doctor of Medical Sciences, Professor, Head, Military Medicine Scientific-Educational Center, YSMU; G. A. AVETISYN, PhD in Medicine, Associate Professor, Head, Department of Diagnostic Radiology, YSMU, Vice Provost for Postgraduate and Professional Education, YSMU; M. Z. NARIMANYAN, Doctor of Medical Sciences, Professor, Chair of Family Medicine; V. A. ASOYAN, PhD in Medicine, Associate Professor, Head, Department of Infectious Diseases, YSMU; V. V. TSATURYAN, Colonel of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, Head, Military Medical Department, YSMU; M. V. SARGSYAN, Lieutenant Colonel of Medical Service, PhD in Medicine, Associate Professor, Lead Therapist, Central Clinical Military Hospital, MOD, RA; A. M. SATURYAN, Colonel of Medical Service, Head, Hygiene and Anti-Epidemic Service, the RA Armed Forces; A. A. SHAHVERDYAN, Head, 3<sup>rd</sup> Isolation Unit, Artashat COVID Center; S. R. OHANYAN, Colonel of Medical Service, Head, Military-Medical Department of the RA Armed Forces*

SUMMARY

The article is dedicated to the epidemiology, clinical picture, diagnosis, and the treatment of COVID-19, the new coronavirus disease. According to the *PubMed* medical search engine, to the day there still remain many unresolved issues regarding the epidemiology of the disease. The aspects of the second and third new coronavirus infection waves are especially alarming. The cited data attest that the scientists have had a success in developing the algorithm of the COVID-19 diagnosis. The data on the possible development of treatment standards linked with the data of laboratory and instrumental studies are especially encouraging.

The article minutely presents the treatment regimens for COVID-19, depending on the severity of the disease, and describes the data on the use of dexamethasone. The authors carried out a detailed analysis of the use of medications in relation to the levels of C-reactive protein (SRP), D-dimer, Interleukin 6 (IL6), etc.

**ՈՐՈՇ ՀՐԹԻՈՒՀՐԵՏԱՆԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ  
ՄԱՐՏԱԿԱՐԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐ**

Հ/հ	Մակնիշ	Արտադրող և արտա- դրման տարեթիվ	Հրթիռի տրամաչափ, մմ	Խոցման առավելագույն հեռավորություն, կմ	Խոցման նվազագույն հեռավորություն, կմ	Հրթիռի արագություն, մ/վ	Հրթիռի մեկնարկային զանգված, կգ	Մարտական մասի զանգված, կգ	Հավանական շեղում, մ
1.	«Իսկանդեր» օպերատիվ-մար- տավարական հրթիռային համալիր	Ռուսաստան, 2006	920	500	50	2100	3800	480	10– 30
2.	«Լորա» օպերա- տիվ-մարտավա- րական հրթիռա- յին համալիր	Իսրայել, 2004	610	300	90	–	1700	400 ... 600	10

Հ/հ	Մակնիշ	Արտադրող և արտա- դրման տարեթիվ	Հրթիռի տրամաչափ, մմ	Խոցման առավելագույն հեռավորություն, կմ	Խոցման նվազագույն հեռավորություն, կմ	Ուղղորդիչների քանակը	Խոցման մակերեսը, հա	Համազարկի ժամանակը, վ	Առավելագույն արա- գությունը խճուղում, կմ/ժ
1.	9458 «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգ	ԽՍՀՄ, 1987	300	120	20	12	67	40	60
2.	«Ս270» համա- զարկային կրակի ռեակտիվ համակարգ	ԱՄՆ, 1963	227	40/ 80	2	12	25	48	64

Հ/հ	Մակնիշ	Արտադրող և արտա- դրման տարեթիվ	Տրամաչափ, մմ	Մարտական զանգված, տ	Կրակի ատավելագույն հեռահարությունը, կմ	Ուղղահայաց նշանառման անկյուն, աստիճան	Հորիզոն. նշան. անկյուն, աստիճան	Վերելքի հարթահարում, աստիճան	Առավելագույն արագությունը խճուղում, կմ/ժ
1.	2Մ19 «Մստա-Ս» ինքնագնաց հրետանային կայանք	ԽՍՀՄ, 1983	152	42	24,7/ 29	-4... + 68	360	25	60
2.	«Մ109Ա7» ինքնագնաց հրետանային կայանք	ԱՄՆ, 2012	155	36	22/ 30	-3... + 75	360	30	67
3.	«Պզ< 2000» ինքնագնաց հրետանային կայանք	Նիդեր- լանդներ, 1998	155	55,3	30/ 50	-2... + 65	360	45	67
4.	«ԱՍ-90 Պալմարիա» ինքնագնաց հրետանային կայանք	Իտալիա, 1982	155	46	24/ 30	- 5... +70	360		60

Նյութը պատրաստեց ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի  
Օպերատիվ հետազոտությունների կենտրոնի դասախոս  
գնդապետ Ա. Ս. Բաղդանյանը



**ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ**

*Դ. Ս. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, պահեստազորի գնդապետ,  
Ա. Ա. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, լեյտենանտ, Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մայոր,  
Թ. Դ. ԶԻԼԻՆԳԱՐՅԱՆ, լեյտենանտ, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մայոր,  
Ք. Վ. ՓԻՐՈՅԱՆ, մայոր*

**ՀԱՅԵՐԵՆ-ՌՈՒՄԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ**

ազատականացում – либерализация – liberalization	– oxygen therapy, supplemental oxygen therapy
ազգային նույնականացում – национальная идентификация – national identification	թթվածնահագեցում – кислородная сатурация – oxygen saturation
ալվեոլային ներսիւռվածք – альвеолярная инфильтрация – alveolar infiltration	թոքամիզ – легочная плевра – pulmonary pleura
անոթաբորբ – васкулит – vasculitis	ժողովրդագրական ներուժ – демографический потенциал – demographic potential
անոթայնանք – аневризма – aneurysm	ինքնակազմակերպում – самоорганизация – self-organization
ապրումակցում – сопереживание, эмпатия – empathy	ինքնիշխան հանրույթ – суверенное сообщество – sovereign community
առավելապաշտական ազգային շահ – максималистский национальный интерес – maximalist national interest	ինքնության երկվություն – двойственность самости – duality of self
արյունախիտում – кровохарканье – hemoptysis	խմբայնացում – группизация – groupization
բախազննում – пальпация – palpation	խմբայնություն – фракционность – factionalism
բանականություն – интеллект, мыслительная способность – intelligence, intellect	կանոնակարգ – регламент – regulations, rules of procedure
– արհեստական բանականություն – искусственный интеллект – artificial intelligence	կերպափոխում – трансформация – transformation
բուժառու – пациент – patient	կիրենտարածություն – киберпространство – cyberspace
գոյաբանական պրոբլեմ – онтологическая проблема – ontological problem	հակամարտածին իրավիճակ – конфликтотгенная ситуация – conflictogenic situation
դյուրահոգնվածություն – утомляемость – easy fatigability	համախտանիշ – синдром – syndrome
թթվածնաբուժում – оксигенотерапия	համակարգչային շերտագրություն – компьютерная томография – computed tomography scan, CT scan
	համահարաբերակցական կապ – кор-

<p>реляционная связь – correlation relationship</p> <p>հետախուզություն – разведка – intelligence, reconnaissance</p> <p>– աշխարհատարածական հետախուզություն – геопространственная разведка – geospatial intelligence</p> <p>– չափողական հետախուզություն – разведка путём измерения параметров и сигнатур целей – measurement and signature intelligence</p> <p>– պատկերային հետախուզություն – видовая разведка – imagery intelligence</p> <p>հետքանշիչ – маркер – marker</p> <p>հիվանդություն – болезнь – disease, illness</p> <p>– անախտանիշ ձևի հիվանդություն – бессимптомная форма болезни – asymptomatic disease</p> <p>– հիվանդության ախտածագում – патогенез болезни – pathogenesis of disease</p> <p>հրահանգ – инструкция – instruction</p> <p>հրահանգագիր – 1. инструкция, 2. наставление – instruction, manual</p> <p>մարդու երկփեղկվածություն – дихотомия человека – dichotomy of man</p> <p>մեծ տվյալներ – большие данные – big data</p> <p>մեքենայական ուսուցում – машинное обучение – machine learning</p> <p>մտածողական կարողություն – <i>տեսականականություն</i></p> <p>շարժառիթավորում – мотивация – motivation</p> <p>շարժունակություն – подвижность, мобильность – mobility</p> <p>պատրաստականություն – выучка – skills</p> <p>պետական ներուժի բազմապատկում</p>	<p>– преумножение государственного потенциала – national potential multiplication</p> <p>պետության ռազմական կազմակերպվածք – военная организация государства – military organization of state</p> <p>ռադիոստեղորոշումային կայան – радиолокационная станция, радар – radar</p> <p>ռազմականացում – милитаризация – militarization</p> <p>վիրուսի արտազատում – секреция вируса – viral secretion</p> <p>տեղայնացում – 1. տես <i>տեղափակում</i>, 2. приспособление к местным условиям – 1. տես <i>տեղափակում</i>, 2. adaptation to local conditions</p> <p>տեղափակում – локализация – localization</p> <p>տեղեկատվություն – информация, информирование – information</p> <p>տեղեկության իրականություն – информационная действительность – information reality</p> <p>տեղեկույթ – информация – information</p> <p>– տեղեկույթի մուտքագրում – ввод информации – information input</p> <p>տվյալների ընդգրկունություն – обьёмистость данных – scope of data</p> <p>ցնցակաթված – шок – shock</p> <p>«ուղեղային կենտրոն» – «мозговой центр» – “think tank”</p> <p>քաղաքական – политический – political</p> <p>– քաղաքական ընտրախավ – политическая элита – political elite</p> <p>– քաղաքական վերնախավ – политическая элита – political elite</p> <p>քաղաքակրթությունների երկխոսություն – диалог цивилизаций – dialogue of civilizations</p>
--	--

ՈՒՍԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

альвеолярная инфильтрация – ավելոյալին ներսփռվածք  
 аневризма – անոթալայնանք  
 болезнь – հիվանդություն  
 – бессимптомная форма болезни – անախտանիշ ձևի հիվանդություն  
 – патогенез болезни – հիվանդության ախտածագում  
 большие данные – մեծ տվյալներ  
 васкулит – անոթաբորբ  
 ввод информации – տեղեկույթի մուտքագրում  
 военная организация государства – պետության ռազմական կազմակերպվածք  
 выучка – պատրաստականություն  
 группизация – խմբայնացում  
 двойственность самости – ինքնության երկվություն  
 демографический потенциал – ժողովրդագրական ներուժ  
 диалог цивилизаций – քաղաքակրթությունների երկխոսություն  
 дихотомия человека – մարդու երկփեղկվածություն  
 инструкция – 1. հրահանգ, 2. հրահանգագիր  
 интеллект – բանականություն, մտածողական կարողություն  
 – искусственный интеллект – արհեստական բանականություն  
 информационная действительность – տեղեկույթային իրականություն  
 информация – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն  
 информирование – *см. информация 2*  
 киберпространство – կիրբեռտարածություն  
 кислородная сатурация – թթվածնահագեցում  
 компьютерная томография – հս-

մակարգչային շերտագրություն  
 конфликтогенная ситуация – հակամարտածին իրավիճակ  
 корреляционная связь – համահարաբերակցական կապ  
 кровохарканье – արյունախխում  
 легочная плевра – թոքամիզ  
 либерализация – ազատականացում  
 локализация – տեղափակում, տեղայնացում  
 максималистский национальный интерес – առավելապաշտական ազգային շահ  
 маркер – հետքանշիչ  
 машинное обучение – մեքենայական ուսուցում  
 милитаризация – ռազմականացում  
 мобильность – *см. ПОДВИЖНОСТЬ*  
 «мозговой центр» – «ուղեղային կենտրոն»  
 мотивация – շարժառիթավորում  
 мыслительная способность – *см. ИНТЕЛЛЕКТ*  
 наставление – հրահանգագիր  
 национальная идентификация – ազգային նույնականացում  
 объемистость данных – տվյալների ընդգրկունություն  
 оксигенотерапия – թթվածնաբուժում  
 онтологическая проблема – գոյաբանական պրոբլեմ  
 пальпация – քախազնունում  
 пациент – րուժառու  
 подвижность – շարժունակություն  
 политическая элита – 1. քաղաքական ընտրախավ, 2. քաղաքական վերնախավ  
 преумножение государственного потенциала – պետական ներուժի բազմապատկում  
 радар – *см. РАДИОЛОКАЦИОННАЯ СТАНЦИЯ*

радиолокационная станция – ռադիոտեղորոշումային կայան	կերպում
разведка – հետախուզություն	секреция вируса – վիրուսի արտազատում
– видовая разведка – պատկերային հետախուզություն	синдром – համախտանիշ
– геопространственная разведка – աշխարհատարածական հետախուզություն	сопереживание – ապրումակցում
– разведка путём измерения параметров и сигнатур целей – չափողական հետախուզություն	суверенное сообщество – ինքնիշխան հանրույթ
регламент – կանոնակարգ	трансформация – կերպափոխում
самоорганизация – ինքնակազմա-	утомляемость – դյուրահոգնածություն
	фракционность – խմբայնություն
	шок – ցնցակաթված
	эмпатия – <i>см. сопереживание</i>

ԱՆԳԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

alveolar infiltration – ալվեոլային ներսփռվածք	empathy – ապրումակցում
aneurysm – անոթալայնանք	factionalism – խմբայնություն
big data – մեծ տվյալներ	groupization – խմբայնացում
computed tomography scan – համակարգչային շերտագրություն	hemoptysis – արյունախոտ
conflictogenic situation – հակամարտածին իրավիճակ	illness – <i>see disease</i>
correlation relationship – համահարաբերակցական կապ	information – 1. տեղեկույթ, 2. տեղեկատվություն
CT scan – <i>see computed tomography scan</i>	– information input – տեղեկույթի մուտքագրում
cyberspace – կիբեռտարածություն	– information reality – տեղեկութային իրականություն
demographic potential – ժողովրդագրական ներուժ	instruction – 1. հրահանգ, 2. հրահանգագիր
dialogue of civilizations – քաղաքակրթությունների երկխոսություն	intellect – <i>see intelligence 1</i>
dichotomy of man – մարդու երկփեղկվածություն	intelligence – 1. բանականություն, մտածողական կարողություն, 2. հետախուզություն
disease – հիվանդություն	– artificial intelligence – արհեստական բանականություն
– asymptomatic disease – անախտանիշ ձևի հիվանդություն	– geospatial intelligence – աշխարհատարածական հետախուզություն
– pathogenesis of disease – հիվանդության ախտածագում	– imagery intelligence – պատկերային հետախուզություն
duality of self – ինքնության երկվություն	– measurement and signature intelligence – չափողական հետախուզություն
easy fatigability – դյուրահոգնածություն	liberalization – ազատականացում

---

localization – տեղափակում, տեղայնացում	patient – բուժառու
machine learning – մեքենայական ուսուցում	political elite – 1. քաղաքական ընտրախավ, 2. քաղաքական վերնախավ
manual – see <i>instruction 2</i>	pulmonary pleura – թոքամիզ
marker – հետքանշիչ	radar – ռադիոտեղորոշումային կայան
maximalist national interest – առավելապաշտական ազգային շահ	reconnaissance – see <i>intelligence 2</i>
militarization – ռազմականացում	regulations – կանոնակարգ
military organization of state – պետության ռազմական կազմակերպվածք	rules of procedure – see <i>regulations</i>
mobility – շարժունակություն	scope of data – տվյալների ընդգրկումություն
motivation – շարժառիթավորում	self-organization – ինքնակազմակերպում
national identification – ազգային նույնականացում	shock – ցնցակաթված
national potential multiplication – պետական ներուժի բազմապատկում	skills – պատրաստականություն
ontological problem – գոյաբանական պրոբլեմ	sovereign community – ինքնիշխան հանրույթ
oxygen saturation – թթվածնահագեցում	supplemental oxygen therapy – see <i>oxygen therapy</i>
oxygen therapy – թթվածնաբուժում	syndrome – համախտանիշ
palpation – բախազննում	“think tank” – «ուղեղային կենտրոն»
	transformation – կերպափոխում
	vasculitis – անոթաբորբ
	viral secretion – վիրուսի արտազատում

---

### ՈՒՂՈՒՄ

Հանդեսի 2020 թ. 3-րդ համարի 105-րդ էջում հեղինակների մեղքով նրանցից մեկի անունը տպագրվել է *Ս. Լ. ՋՈՒՅԱՆ*, պետք է լիներ *Ս. Լ. ՋՈՐՅԱՆ*:

### ИСПРАВЛЕНИЕ

На 113 стр. 3-го номера журнала за 2020 г. по вине авторов в фамилии одного из них была допущена ошибка: напечатано *С. Л. ЗОЛЯН* вместо *С. Л. ЗОРЬЯН*.

### CORRECTION NOTICE

In the 2020 3<sup>rd</sup> issue of the publication (P. 114) one of the co-author's last name was misspelled due to the co-authors' inaccuracy: instead of *S. L. ZOLYAN* should have been *S. L. ZORYAN*.

**ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Գ. Ավագյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Լ. Ս. Արզումանյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, *Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ս. Ա. Գալստյան*, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Գ. Գալստյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Կ. Ս. Դանիելյան*, կենսաբանական գիտությունների թեկնածու, աշխարհագրական գիտությունների դոկտոր, *Բ. Ն. Հարությունյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Հ. Մաթևոսյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Մ. Մ. Մարգարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Մ. Վ. Մարկոսյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ս. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Վ. Գ. Սահակյան*, ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, *Հ. Յ. Սալադյան*, աշխարհագրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Ռ. Ա. Սաֆրաստյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Ա. Հ. Միմոնյան*, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, *Հ. Ս. Միսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Յու. Մ. Սուվարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, *Հ. Ս. Քոթանջյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, *Տ. Տ. Քոչարյան*, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

**ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ**

- Գ. Վ. Տավարաժյան*, գեներալ-մայոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետ, *Տ. Տ. Քոչարյան*, գնդապետ, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի պետի կրթության և գիտության գծով տեղակալ–ԱՌՀԻ-ի պետ, *Ս. Ա. Սուրյան*, աշխարհագրական գիտությունների թեկնածու, դոցենտ, պահեստազորի գնդապետ, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական պատմության հետազոտությունների կենտրոնի պետ, *Դ. Մ. Մանասյան*, պատմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի տարածաշրջանային ռազմավարական վերլուծությունների կենտրոնի պետ, *Հ. Հ. Հովհաննիսյան*, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու, ՀՀ ՊՆ ՊԱՀՀ-ի ռազմավարական առաջնորդության և կառավարման հետազոտությունների կենտրոնի ավագ դասախոս

#### **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

*А. Г. Авагян*, доктор исторических наук, профессор; *Н. У. Аракелян*, академик НАН РА; *Л. С. Арзуманян*, доктор филологических наук; *Б. Н. Арутюнян*, доктор медицинских наук, профессор; *В. М. Арутюнян*, академик НАН РА; *Г. Е. Багдасарян*, академик НАН РА; *С. А. Галстян*, доктор филологических наук, профессор; *С. Г. Галстян*, доктор медицинских наук, профессор; *Г. А. Геворкян*, академик НАН РА; *К. С. Даниелян*, кандидат биологических наук, доктор географических наук; *Г. С. Котанджян*, доктор политических наук, профессор; *Т. Т. Кочарян*, доктор политических наук, профессор; *А. А. Мантяшян*, академик НАН РА; *М. М. Маргарян*, доктор политических наук, профессор; *М. В. Маркосян*, доктор технических наук, профессор; *Г. Г. Матевосян*, член-корреспондент НАН РА; *Э. Г. Минасян*, доктор исторических наук, профессор; *М. М. Мириджаниян*, доктор медицинских наук, профессор; *В. Г. Саакян*, кандидат физико-математических наук; *Р. А. Сафрасян*, академик НАН РА; *О. Я. Саядян*, доктор географических наук, профессор; *А. Г. Симонян*, член-корреспондент НАН РА; *А. С. Сисакян*, доктор медицинских наук, профессор; *Ю. М. Суварян*, академик-секретарь Отделения арменоведения и общественных наук НАН РА, член Президиума НАН РА

#### **ВОЕННО-НАУЧНЫЙ СОВЕТ:**

*Г. В. Таварацян*, генерал-майор, начальник НИУО МО РА; *Т. Т. Кочарян*, полковник, доктор политических наук, профессор, заместитель начальника НИУО МО РА по образованию и науке – начальник ИНСИ; *С. А. Сугджян*, кандидат географических наук, доцент, полковник запаса, начальник Центра исследований истории военного искусства НИУО МО РА; *Д. М. Манасян*, кандидат исторических наук, начальник Центра региональных стратегических исследований НИУО МО РА; *Г. О. Оганисян*, полковник, кандидат военных наук, старший преподаватель Центра исследований стратегического лидерства и управления НИУО МО РА

#### **ACADEMIC-ADVISORY COUNCIL:**

*A. G. Avagyan*, Doctor of History, Professor; *N. H. Arakelian*, Full Member, NAS, RA;  
*L. S. Arzumanyan*, Doctor of Philology; *G. Y. Baghdassarian*, Full Member, NAS, RA;  
*K. S. Danielyan*, PhD in Biology, Doctor of Geography; *S. A. Galstyan*, Doctor  
of Philology, Professor; *S. G. Galstyan*, Doctor of Medical Sciences, Professor;  
*H. A. Gevorkian*, Full Member, NAS, RA; *B. N. Harutyunyan*, Doctor of Medical  
Sciences, Professor; *V. M. Harutyunyan*, Full Member, NAS, RA;  
*T. T. Kocharyan*, Doctor of Political Sciences, Professor; *H. S. Kotanjian*, Doctor  
of Political Sciences, Professor; *A. H. Mantashian*, Full Member, NAS, RA;  
*M. M. Margaryan*, Doctor of Political Sciences, Professor; *M. V. Markosyan*, Doctor  
of Technical Sciences, Professor; *H. H. Matevosyan*, Corresponding Member, NAS, RA;  
*E. G. Minasyan*, Doctor of Historical Sciences, Professor; *M. M. Mirijanian*, Doctor  
of Medical Sciences, Professor; *R. A. Safrastyan*, Full Member, NAS, RA;  
*V. G. Sahakyan*, PhD in Physical and Mathematical Sciences; *Hov. Y. Sayadyan*, Doctor  
in Geography, Professor; *A. H. Simonyan*, Corresponding Member, NAS, RA;  
*H. S. Sissakian*, Doctor of Medical Sciences, Professor;  
*Yu. M. Suvaryan*, Academician-Secretary of the Division of Armenology and Social  
Sciences, NAS, RA, Member of the Presidium, NAS, RA

#### **DEFENSE-ACADEMIC COUNCIL:**

*G. V. Tavaratsyan*, MG, Head, NDRU, MOD, RA; *T. T. Kocharyan*, Col, Doctor of Political  
Sciences, Professor, Deputy Head in Education and Research–Head of INSS, NDRU,  
MOD, RA; *S. A. Sujyan*, PhD in Geography, Associate Professor, Col (Ret.), Head,  
Center for Research on the History of Military Art, NDRU, MOD, RA;  
*D. M. Manasyan*, PhD in History, Head, Center for Regional Strategic Analyses, NDRU,  
MOD, RA; *H. H. Hovhannisyan*, Col, PhD in Military Sciences, Senior Lecturer, Center  
for Research on Strategic Leadership and Management, NDRU, MOD, RA



## **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈԿ-ի կողմից հաստատված «Դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրատարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով (առավելագույնը 20000 նիշ՝ ներառյալ բացատները), հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները ոչ ավելի, քան 1 (մեկ) էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և գաղտնիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Դիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմամասնագիտական հապավումները:

Ձեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրատարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

## **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Национального исследовательского университета обороны МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала (максимально 20000 знаков, включая пробелы), с приложением резюме на русском и английском языках объемом не более одной страницы.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

## **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of National Defense Research University of the Ministry of Defense of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length (maximum 20000 characters with spaces). Provide Russian and English summaries (no more than 1 page long).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱՆՍ ԲԱՆԱԿ

Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ – գլխավոր խմբագրի տեղակալ՝

*Ջ. Դ. Ասատրյան*

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Ա. Խաչատրյան*

Լեզվական խմբագրման խմբի պետ՝ *Զ. Վ. Փիրոյան*

Տեխնիկական բաժանմունքի պետ՝ *Վ. Ռ. Խալաֆյան*

Պատասխանատու խմբագիր՝ *Ա. Ջ. Պեպրոսյան*

Տեխնիկական խմբագրումը՝ *Վ. Ռ. Խալաֆյանի*

Տեքստերի թարգմանությունը՝ *Ա. Ա. Մարտիրոսյանի, Ն. Ս. Մկրտչյանի,*

*Դ. Ա. Չիլինգարյանի, Թ. Դ. Չիլինգարյանի, Լ. Հ. Պապիկյանի*

Համակարգչային ապահովումը՝ *Ս. Ռ. Հակոբջանյանի,*

*Ա. Հ. Մարտիանյանի, Տ. Մ. Տիրացոյանի*

Ձևավորող նկարիչ՝ *Գ. Վ. Իսկանդարյան*

Սրբագրիչ՝ *Ն. Հ. Բաղդասարյան*

Լուսանկարչական ապահովումը՝ *Ա. Դ. Ներսիսյանի, ՀՀ ՊՆ Տեղեկատվության*  
և հասարակայնության հետ կապերի վարչության և համացանցային

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. Ռիլնեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25

Էջ ՀՀ ՊՆ կայքում՝ <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Պաշտոնական բլոգ-կայքը՝ <http://razmavaraget.wordpress.com>

Էլ. հասցեն՝ [haykakanbanakmod@gmail.com](mailto:haykakanbanakmod@gmail.com)

© ՀՀ ՊՆ Պաշտպանական ազգային հետազոտական համալսարանի

«Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2020 թ.

Ստորագրվել է տպագրության՝ 14.12.2020

Թուղթը՝ օֆսեթային: Ձևաչափը՝ 70×100 1/16:

Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր:

Պայմանական տպագրական 10,5 մամուլ:

Տպաքանակը՝ 500: Տառատեսակները՝ «Arial», «Arial Unicode», «GHEA Grapalat»,

«Russian Baltica», «Times»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108

Տպագրվել է «ԹԱՄԿ» ՍՊԸ տպարանում



Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար  
Վաղարշակ Հարությունյանը և Արցախի Հանրապետության  
Պաշտպանության նախարար – Պաշտպանության բանակի  
հրամանատար գեներալ-լեյտենանտ Միքայել Արզումանյանը  
քննարկում են արցախա-ադրբեջանական շփման գծում տիրող  
իրավիճակը:

Արցախ, 2020 թ. դեկտեմբերի 2



# ՀԱՅԿԱՎՈՐ ԲԱՆԱԿ